Azg
Ազգ
22 ՆՈՅԵՄԲԵՐ 2008 ՇԱԲԱԹ 217 (4111)

Նոյեմբերի 24-ին Ստամբուլում կհանդիպեն Նալբանդյանն ու Բաբաջանը

Անկարան այս հանդիպմանը կարեւոր նշանակություն է տալիս

ՀԱՅՈՐ ՉԱՔԲԱՏԵՆ

Նոյեմբերի 24-ին մեկօրյա այցով որոշեց «Սեւծովյան տնտեսական համագործակցություն» կազմակերպության նախագահող երկրի արտգործնախարար, Ստամբուլ կմեկնի Էդվարդ Նալբանդյանը: Նա այնտեղ կհանդիպի իր թուրք գործընկերոջը՝ Ալի Բաբաջանին: Անկարան այս հանդիպմանը կարեւոր նշանակություն է տալիս: Ըստ երեւույթին, դա հիմք կհանդիսանա հանդիպման ցանկալի հունով ընթացքն ապահովելու նկատառումն է, որ Բաբաջանը դրա մասին անընդհատ պարզաբանումներ է տալիս թուրք լրագրողներին, թուրքական թերթերը պարզաբանումների հիման վրա հետեւություններ են անում եւ հետեւություններում դրանց խրախուսում են արեւմտյան լրատվամիջոցները:

Ալի Բաբաջանը ՀՀ արտգործնախարարի այցին անդրադարձել էր նոյեմբերի 18-ին Վարշավայում, նշելով, որ իր հետ հանդիպելու ցանկությունը Նալբանդյանն է հայտնել, ինքը գոհունակությամբ համաձայնել է: Դա կկայանա նոյեմբերի 24-ին, օրակարգում է նաեւ Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա արտգործնախարարների եռակողմ նոր հանդիպումը: Արա նա ավելացրել է. «Սակայն եռակողմ այդ հանդիպումը պետք է լավ կազմակերպված լինի, այլապես անիմաստ է լուսանկարվելուց հետո բաժանվելը»:

Տես էջ 3

Իլհամ Ալիեւը կարեւորել է Մոսկվայում ստորագրված հռչակագիրը

ԲԱՔՈՒ, 21 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախագահ Իլհամ Ալիեւը կարեւորել է Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների վերջերս Մոսկվայում ստորագրած հռչակագիրը: «Ադրբեջանը 21-րդ դարում. հաջողության ռազմավարությունը» թեմայով միջազգային կլոր սեղանի մասնակիցների հետ Բաքվում կայացած հանդիպմանը նա նաեւ ասել է, որ «հակամարտության խաղաղ կարգավորման հուսադրող պահեր կան»:

Նա հայտարարել է, որ Կովկասում խաղաղության կարելի է հասնել «միայն Ադրբեջանի տարածքների ազատումից հետո»: Միաժամանակ Ալիեւը նշել է, որ «այդ հիմնախնդիրն ավելի խոր վերլուծություն է պահանջում»:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի գլխավոր դատախազն ու Թոմաս Համմարբերգը հանդիպել են

**Երեկ ԵԽ մարդու իրավունքների գլխավոր հանձնակատար Թոմաս Համմարբերգի գլխավորած պատվիրակությանն ընդունել է Հայաստանի գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ինքնարկումների թեմա են եղել մարտի 1-2-ի իրադարձությունների առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությանը վերաբերող, ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի եւ նորաստեղծ փաստահավաք խմբի հետ դատախազության համագործակցության հարցեր: Համմարբերգին փոխանցված տեղեկատվությունից է այն, որ նոյեմբերի 21-ի դրությամբ նախնական կալանքի տակ է 7 մեղադրյալ, որոնց մասով նախաքննությունը դեռ սեպտեմբերին է ավարտվել եւ սահմանվել է նախաքննության նյութերին ծանոթանալու ժամկետ, որը պատշգամբային կողմի միջնորդությամբ երկու անգամ երկարաձգվել է, դրանից եւ հնարավոր այլ միջնորդությունները քննարկելուց հետո գործը կուղարկվի դատարան: Գլխավոր դատախազը Համմարբերգի խնդրանքով անդրադարձել է մարտի 1-2-ին ոստիկանության գործողությունների օրինականությունն ու համաչափությունը պարզելու խնդրին: Ա. Հովսեփյանը մարդու իրավունքների հանձնակատարին տեղյակ է պահել, որ հարցաքննվել են զանգվածային անկարգությունները կանխելու միջոցառմանը մասնակցած 500 ոստիկաններ եւ ոստիկանության զորքի զինծառայողներ, առգրավվել են փաստաթղթեր, նրանց ամրացված հրազենն ու հատուկ միջոցները, ոստիկանության մասյանները, իսկ մահացած անձանց հագուստն ու մարմիններից հանված առարկաները ներկայացվել են փորձաքննությունների: Նախաքննության ընթացքում պարզվել է, որ ոստիկանության զորքերի կազմում 1 դիպուկահար է եղել, որը հարցաքննվել է դեռեւս հունիս ամսին, սակայն փորձաքննությունների եզրակացություններով զոհված եւ մարմնական վնասվածքներ ստացած անձանց մարմնում եղած գնդակներից ոչ մեկը դիպուկահարի հրացանից չի եղել: Գլխավոր դատախազը նշել է, որ փորձաքննությունների մեթոդոլոգիան իդենտիֆիկացիա անցկացնելու հնարավորություն չի տալիս, այնպես որ միջազգային փորձագետների օգնությունը շարունակում է արդիական մնալ: Թ. Համմարբերգն էլ խոստացել է փորձառություն ունեցող միջազգային փորձագետի տվյալներ տրամադրել, դատախազն էլ խոստացել է կազմակերպել այդ փորձագետի հրավերը:

Գլխավոր դատախազությունը պատրաստակամ է օգնելու փաստահավաք խմբին, փաստեր տրամադրել, ինչպես դա արել է ԱԺ ԺՀ-ի դեպքում, համենայն դեպս այդպես է ասել Ա. Հովսեփյանը՝ նկատելով, որ ոչ մի հիմք չկա չվստահելու այդ խմբին, եւ տարբեր անձինք, որ ասում են, թե նյութեր ունեն անկարգությունների վերաբերյալ, պետք է այդ բանն անեն:

Թուրք դեսպանները ազատ են ընտրություն կատարելու

Թուրքական «Զաման» թերթի լրատվության համաձայն, Անկարան արտաքին գործող իր դեսպանատներին իրավունք է վերապահել Հայաստանի անկախության տարեդարձի ընդունելություններին մասնակցելու կամ չմասնակցելու որոշումը կայացնելու: Մինչ օրս, 1960-70-ական թվականներից, Անկարան իր դեսպանատներին հրահանգել էր չմասնակցել Հայաստանի դեսպանատների հրավերներին: Այս տարի նման հրահանգ չի տրվել եւ թուրքական դեսպանատների հյուրերին է թողնվել մասնակցելու-չմասնակցելու որոշում կայացնելը ըստ տվյալ երկրի հայկական գաղութի դիրքորոշմանը, ցեղասպանության վերաբերյալ տարված աշխատանքներին եւ այլն:

Նոր մոտեցումն, ըստ «Զամանի» եւ դիվանագիտական շրջանակների, դժվարության առաջ է կանգնեցնելու թուրք դեսպաններին, քանի որ այսքան երկար տարիների բացակայությունից հետո նրանք անհարմար վիճակում են լինելու հայ դիվանագետների շրջապատում: Ուստի, թերթի կարծիքով, հավանական է, որ այսուհետեւ, առնվազն մեկ-երկու տարի, թուրք դեսպաններն իրենց ավագ խորհրդականին ուղարկեն նման միջոցառումներին մասնակցելու: Այս մասին է տեղեկացնում Կահիրեում լույս տեսնող «Արեւ» թերթը:

Հ. Ծ.

Նյու Յորքից դատապարտում են բռնարարքը

Նյու Յորքում գործող «Լրագրողների պաշտպանության կոմիտե» կազմակերպությունը դատապարտել է «Հետք» էլեկտրոնային թերթի գլխավոր խմբագիր, «Հետաքննող լրագրողներ» կազմակերպության ղեկավար Էդիկ Բաղդասարյանի դեմ կատարված բռնարարքը եւ Հայաստանի իշխանություններին կոչ արել անպատիժ թողնել լրագրողների դեմ հարձակումները, տվյալ դեպքում՝ հետաքննական լրագրությունը լռեցնելու նպատակ տեսնելով կատարվածի մեջ:

Բյուջեն եւ մարզերը

Մարզերի խնդիրներն ինչպե՞ս են արտահայտվում պետական բյուջեում

Վերջին տարիներին մենք վկա ենք երկնիշ թվերով էական տնտեսական աճի: Անտարակույս, տեսնում ենք կյանքի դրական փոփոխություններ, տարբեր ոլորտներում հաջողություններ ենք արձանագրում: Բարեփոխումներն, ինչ խոսք, որոշակի խթան հանդիսանալով՝ բարենպաստ ազդեցություն են գործում եւ առավել իրականանալի են դարձնում մեր սպասումներն ու ակնկալիները:

Բայց, այնուամենայնիվ, նույնիսկ անզեն աչքով տեսանելի է գոյություն ունեցող բեւեռացումը: Բեւեռացում՝ ինչպես բնակչության եկամուտների առումով, այնպես էլ անհամամասնություն ըստ տարածաշրջանների տնտեսական աճի:

Զարգացման անհամաչափությունները տեսանելի են անգամ Երեւանի կենտրոնի եւ ծայրամասային թաղամասերի միջեւ: Ունենք բավական բարեկարգ, ներդրումային խտությամբ կենտրոն եւ էապես տարբերվող արվարձանային թաղամասեր:

Ընդհանուր տնտեսական զարգացվածության տարբերություններն առավել ակնհայտ են դառնում երկրի մայրաքաղաքի եւ մարզերի, Երեւանի եւ քաղաքային, առավել եւս՝ գյուղական համայնքների հետ համեմատության դեպքում:

Մեր հասարակության օբյեկտիվ դժգոհություններից մեկը հենց զարգացման այս անհամամասնությունն է:

Այդ պատճառով էլ ՀՀ կառավարության գործողության մեջ դրված ծրագրում սահմանված մի քանի գերակայություններից մեկը տարածքային համաչափ զարգացումն է:

Ինչ մոտեցումներ են որդեգրվել, կոնկրետ ինչ քայլեր են արվում զարգացման առկա անհամամասնությունները մեղմելու ուղղությամբ: Մարզերի խնդիրները որքանով են արտահայտված 2009 թվականի պետական բյուջեում:

Այս եւ այլ հարցերի առթիվ մեկնաբանություններ է անում ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Տես էջ 8

Գագիկ Ծառուկյանի գլխավորած պատվիրակությունը «Եդինայա Ռոսիա» կուսակցության համագումարում

Նոյեմբերի 20-ին ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում տեղի ունեցավ «Եդինայա Ռոսիա» համառուսաստանյան քաղաքական կուսակցության 10-րդ համագումարը: Համագումարին հյուրի կարգավիճակով մասնակցում էին «Եդինայա Ռոսիայի» հետ համագործակցության պայմանագիր կնքած քաղաքական կուսակցությունների պատվիրակությունները: «Եդինայա Ռոսիայի» համագումարին հրավիրված էր նաեւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քաղաքական խորհրդի պատվիրակությունը՝ կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի գլխավորությամբ:

Համագումարի շրջանակներում տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում՝ «Գլոբալ հիմնախնդիրներ. քաղաքական կուսակցությունների դերը ճգնաժամերի հաղթահարման գործում» թեմայով, որին մասնակցեցին հրավիրված պատվիրակությունների ղեկավարները: Հրավիրված կլոր սեղանի շրջանակներում ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը հանդիպեց «Եդինայա Ռոսիա» կուսակցության գլխավոր քարտուղարի տեղակալ Կոնստանտին Կոսաչյովի հետ: Վերջինս բարձր գնահատեց եւ կարեւորեց համագործակցությունը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ, արձանագրելով, որ «Բարգավաճ Հայաստանը» լուրջ եւ կարեւոր դերակատարություն է ստանձնել Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականության մեջ եւ այդ դերակատարությունը գնալով դառնում է առավել զգալի եւ նշանակալի:

Տես էջ 3

Մայր աթոռը չի լռում

Պարզապես «գործին հնչեղություն տալը» խանգարում է գործին

Երեկ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Գեղարդայի խորհուրդը գրություն է ուղղել Վրաստանի ուղղափառ եկեղեցու առաջնորդ Իլյա Երկրորդին՝ արտահայտելով հայկական կողմի զայրույթն ու դատապարտողական կեցվածքը նոյեմբերի 16-ին Թբիլիսիի հայկական Սուրբ Նորաշեն եկեղեցու տարածքում գտնվող Թամաշյանների ընտանիքին պատկանող Միխայիլ Իվանովիչի եւ Լիդիա Պետրովնայի գերեզմանների պղծման առնչությամբ:

Սուրբ Նորաշեն եկեղեցում կատարվածի առնչությամբ երեկ «Հայելի» ակումբում բանավիճելու նպատակով հյուրընկալվել էին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ Խահանա Մելիքյանն ու հայագետ Հայկազուն Ալվարդյանը:

«Խնդիրը նոր չէ եւ բավականին խոր արմատներ ունի: Սա հին հաղթականության ավելի ագրեսիվ շարունակությունն է: Արդեն 17 տարի հայ-վրացական փոխհարաբերություններն այդպես էլ չհստակեցվեցին ու չլուծվեցին պետական մակարդակով: Այսպես շարունակելու դեպքում մենք կկորցնենք ամեն ինչ: Այսօր միջպետական, միջեկեղեցական հարաբերությունների կայուն եւ սահմանված խաղի օրենքի կարիք ունենք: Բացի այդ, շատ տարօրինակ է Վիրահայոց թեմի եւ Զավախքի նկատմամբ Մայր աթոռի վերաբերմունքը», մտահոգություն հայտնեց Հայկազուն Ալվարդյանը՝ մատնանշելով, որ հայ կաթողիկոսներից վերջին անգամ Զավախք այցելել է Խրիմյան Հայրիկը:

Խոսելով Վիրահայոց թեմի մասին, տեր Վահրամն ասաց, որ այն որոշակի կարգավիճակ չունի, քանի որ այնտեղ ընդունված չէ խղճի եւ դավանանքի մասին օրենքը եւ նրանք իրավաբանական կարգավիճակ չեն ստացել:

«Բոլոր եկեղեցիներն ու կրոնական կազմակերպությունները (բացառությամբ վրացական ուղղափառ եկեղեցու) առաջարկ են ստացել գրանցվելու որպես ՀԿ կամ անհատական իրավունք ունեցող իրավաբանական անձ, ինչը պատշաճ չի նկատվել բոլոր եկեղեցիների կողմից: Այսինքն՝ եկեղեցին ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավաբանական կառույց է: Սուրբ Նորաշեն եկեղեցու նկատմամբ ոտնձգություններ սկսվել են 1994-ից, իսկ նախաձեռնողը վրացական պատրիարքարանի ներկայացուցիչ Տարիել Սիկինչելաշվիլին է: 90-ականներին հայկական պատվիրակությունը մեկնել է Վրաստան, եղել են նամակներ, հեռախոսազրույցներ: Եղան հավաստիացումներ, սակայն որոշ ժամանակ անց ոտնձգությունները կրկին սկսվեցին: Ակնհայտ է, որ ինչ-որ մեկը հովանավորում է», ասաց Վահրամ խահանան:

Հայագետի կարծիքով՝ հայկական կողմը միշտ վախվորած արձագանքողի դերում է: Ալվարդյանն ակնկալիքներ չունի, որ վարչապետի ու նախագահի արձագանքները կարող են որեւէ ազդեցություն ունենալ: «Ոչ թե չենք կարողանում խնդիրը լուծել, այլ չենք ցանկանում՝ խաղալով «կեղծ բարեկամություն», «դիվանագիտություն»: Մեր կաթողիկոսը պետք է անհապաղ հանդիպի վրաց պատրիարքին ու թեկուզ կոպիտ կերպով ներկայացնի ազգային շահը», ասաց նա:

Տեր Վահրամ խահանան էլ հակադրվեց խնդիրը կոպիտ եղանակով լուծելու առաջարկին՝ մասնավորեցնելով Վրաստանում բավականին մեծ թիվ կազմող հայկական համայնքի խնդիրը: «Եթե մենք խիստ արտահայտություններ հնչեցնենք, չեմ կարծում, որ դրանով լավագույնս օգնած կլինենք վրացահայ համայնքին, որ այդ տրամադրությունների անմիջական կրողն է», ասաց նա: Հայագետի արտահայտությանը, թե «Մայր աթոռը ոչինչ չի անում այս իրավիճակից դուրս գալու համար», տեր Վահրամը պատասխանեց. «Մի կարծեք, որ լռություն է տիրել: Ուղղակի մենք նպատակահարմար չենք գտնում այդ գործունեությանը հնչեղություն տալ: Որովհետեւ միշտ չէ, որ այդ հնչեղությունը օգտակար է գործընթացին»:



ՖՈՏՈԼՈՒՐ

Գյումրիում ստորագրահավաք են անցկացնում

Գյումրիում սկսվել է ստորագրահավաք ընդդեմ Շիրակի թեմի առաջնորդ Միխայել եպիսկոպոս Աջապահյանի: Ըստ շրջանառվող խոսակցությունների, ստորագրահավաքը կազմակերպել է Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանը: Քաղաքապետի եւ թեմի առաջնորդի միջեւ տարաձայնությունները սկսվել են այն ժամանակ, երբ նախընտրական շրջանում Միխայել եպիսկոպոս Աջապահյանը ճնշադատել է քաղաքապետի գործունեությունը, բացի այդ, ըստ մամուլում շրջանառվող լուրերի, վերջին մի քանի տարիներին քաղաքապետի եւ թեմի առաջնորդի միջեւ առաջացել են մի շարք տարակարծություններ տարբեր խնդիրների առնչությամբ: Մասնավորապես թեմի առաջնորդը մեղադրել է քաղաքապետին վանքապատկան հողերն օտարներին հանձնելու մեջ:

«Երբեւէ որեւէ առաջնորդ պատշաճաթող չի եղել ստորագրահավաքի արդյունքում: Որովհետեւ թեմի առաջնորդները բացառապես նշանակվում են Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից, Գեղարդայի հոգեւոր խորհրդի հավանությամբ: Ուստի որեւէ ստորագրահավաքով թեմի առաջնորդը չի կարող պատշաճանակ լինել: Մենք ցավում ենք, որ քաղաքապետի ու թեմի առաջնորդի միջեւ նման տարաձայնություններն արդեն փոխադրվում են անձնական հարթություն», ասաց Վահրամ խահանա Միխայելյանը՝ հույս հայտնելով, որ խնդիրը շուտով կհարթվի:

ՀԱՍՏԱՏԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԻՑ

«Իրանում կազմակերպվեց հայկական կոնֆերանս. Կազմակերպիչը սովորական կուսակցություն չէր, այլ ֆաշիստական Դաշնակցությունը»

Այս վերնագրով նոյեմբերի 13-14-ը Թեհրանում՝ «Արարատ» մարզավանի «Շահբազյան» սրահում գումարված «Հայ դատն այսօր» 6-րդ խորհրդաժողովին է արձագանքել թուրքական dunyabulteni.net-ը, որը «Աշխարհի տեղեկագիր» լրատվական գործակալության կայքէջն է:

«Ազգը» նոյեմբերի 19-ի համարում անդրադարձել է խորհրդաժողովին: Այդ իսկ պատճառով ներկայացնում ենք թուրքական այս գործակալության արձագանքը: Ահա թե ինչ է գրում վերոհիշյալ կայքէջը. «Հայաստանի ֆաշիստական Դաշնակցություն կազմակերպությունը «Հայկական հարցին» նվիրված միջազգային կոնֆերանս կազմակերպեց Թեհրանում: Նոյեմբերի 13-14-ն Իրանի մայրաքաղաքում կազմակերպված կոնֆերանսին մասնակցեցին Իրանի եւ Հայաստանի ներկայացուցիչները: Զեկուցողները մտքեր փոխանակեցին «Կովկասում խաղաղության հաստատման» հարցի շուրջը»:

Թուրքական կայքէջը զեկուցողների անունները նշելիս Թեհրանի համալսարանի իրավաբանության եւ քաղաքական գիտությունների ամբիոնի վարիչ Էլահե Քուլայիին ներկայացնում է որպես Ալաֆե Քոտայիի, Իրանում ՀՀ դեսպանորդ Գրիգոր Առաքելյանին՝ Հայաստանի դեսպանի, իսկ ՀՅԴ բյուրոյի Հայ դատի քաղաքական գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանին համարում է «Դաշնակցություն կուսակցության երեւանյան գրասենյակի» ներկայացուցիչ եւ ընդգծում է միջոցառմանը Հայաստանում Իրանի նախկին դեսպան Մուհամմադ Ֆարհադ Քոլեյնիի մասնակցության մասին:

Վերջում թուրքական dunyabulteni.net-ն ավելացնում է. «Որքան երազելի կլիներ ադրբեջանական որեւէ կուսակցության, նույնիսկ կրոնական կազմակերպության նախաձեռնությամբ Իրանում «Ադրբեջանի խնդիրներին» նվիրված կոնֆերանսի հրավիրումը, որքան իրողություն դարձավ հայկական խորհրդաժողովի գումարումը: Ընդ որում, միջոցառումը կազմակերպեց ոչ թե շարքային որեւէ կուսակցություն, այլ ֆաշիստական Դաշնակցությունը»:

«Աշխարհի տեղեկագիր» լրատվական գործակալության գրածները մեկնաբանության կարիք չեն զգում: Սակայն մեկ անգամ եւս հուշում են Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հավասարության նշան դնելու համար հայկական իրականությունում ծայրահեղ ազգայնամոլություն հայտնաբերելու մոլուցքի, եւ այդ մոլուցքով տառապող արեւմտյան որոշ կառույցների ու սրանց հայաստանյան շոշափուկների մասին:

Ֆաշիստական կառույցները յուրահատուկ են թուրքական իրականությանը: Եթե վերոհիշյալ լրատվական գործակալությունը տեղյակ չէ դրանից, գոնե պետք է իմանա Թուրքիայի ազգային մեծ ժողովում 69 պատգամավոր ունեցող «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպությունների՝ «Ազգայնական շարժում» եւ «Մեծ միասնությունների» կուսակցությունների, ինչպես նաեւ Ալփարսլան Թյուրքեշի մասին, որովհետեւ այս կուսակցությունները նեոֆաշիստականի համարում ունեն հենց թուրքական հասարակության մեջ, իսկ Թյուրքեշը որպես «գորշ գայլերի» առաջնորդ՝ «թուրքական ֆյուրերի» կոչմանն էր արժանացել Թուրքիայում:

Հ. ՉԱՔԲԱՏ

«Միացումը»՝ ԱԳՆ-ի մոտ

«Միացում» նախաձեռնությունը, որը երեկ բողոքի ցույց էր կազմակերպել Հայաստանի արտաքին գերատեսչության շենքի մոտ՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման ներկա փուլի մտահոգություններով, տարածել էր նաեւ հայտարարություն, որն ուղղված էր ԱԳ նախարարին եւ Հայաստանի արտաքին քաղաքականության պատասխանատուներին: «Հայաստանի ազատագրված տարածքի որեւէ հատվածի ենթադրվող հանձնումը հայոց պետականության հիմքերը քայքայելուն միտված ծանրագույն պետական հանցագործություն է, Հայաստանի քաղաքացիների կյանքի նկատմամբ անհանդուրժելի ոտնձգություն: Հայաստանի ազատագրված տարածքը հանձնելու ցանկացած նկրտում հարուցում է որոշում ընդունողների եւ այն գործադրողների պատմական, բարոյական եւ քրեաիրավական համընդհանուր պատասխանատվություն՝ որպես հայության բոլոր հատվածների նկատմամբ գործված ծանրագույն հանցանք եւ խստմնելի դավաճանություն», ասված է հայտարարության մեջ:

«Միացում»-ի կարգախոսները ազատագրված տարածքներից զիջելու անթույլատրելիության մասին ԱԳՆ հարեւանությամբ բարձրաձայնում էին նախաձեռնողներ Ժիրայր Սեֆիլյանը, Տիգրան Խզմալյանը, Զարուհի Փոստանջյանը, Գրիգելդա Ղազարյանը եւ այլք: ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանի առաջարկը՝ ցուցարարներին ընդունելու եւ լսելու վերաբերյալ, վերջիններս մերժեցին, իսկ նախարար Էդվարդ Նալբանդյանը չընդունեց ցուցարարներին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 61 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Նպատակահարմար է, որ կենտրոնական բանկերը աղահովեն գների կայունությունը եւ վերահսկեն ամբողջ ֆինանսական դաշտը»

Այս կարծիքը հայտնեց ԿԲ նախագահ Արթուր Զավադյանը

Հայկական դրամի 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում երեկ տեղի ունեցավ «Ֆինանսական կայունությունը փոփոխվող աշխարհում» թեմայով կլոր սեղանը, որին մասնակցում էին Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) տնօրեն-կառավարչի տեղակալ Մուրիլո Պորտուգալը, ԱՄՀ գործադիր տնօրեն Սխե Բակկերը, բազմաթիվ երկրների կենտրոնական (ազգային) բանկերի նախագահներ կամ փոխնախագահներ:

Հանդես գալով բացման խոսքով, Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանը մասնավորապես ասաց, որ ներկայիս ճգնաժամը ֆինանսական կայունությունը պահպանելու գործում կենտրոնական բանկերի դերի հետ կապված նոր հարցեր է բարձրացնում: Նա նշեց, որ Հայաստանի նման երկրների համար առավել նպատակահարմար է, որ կենտրոնական բանկերը եւ աղահովեն գների կայունությունը, եւ իրականացնեն ամբողջ ֆինանսական դաշտի վերահսկողությունը, այլապես փոքր զարգացող տնտեսությունները մեծ գին կարող են վճարել ճգնաժամերի ժամանակ: ԿԲ նախագահը կարեւորեց այն հանգամանքը, որ կենտրոնական բանկերը պետք է ձիշտ հավասարակշռեն գների եւ ֆինանսական կայունության նպատակները:

ԱՄՀ տնօրեն-կառավարչի տեղակալ Մուրիլո Պորտուգալը նախ շնորհավորեց դրամի 15-ամյակի առթիվ, ապա՝ անդրադառնալով ֆինանսական ճգնաժամին, ասաց, որ ճգնաժամի պատճառով, որը դեռ շարունակվում է, համաշխարհային տնտեսության աճի տեմպերը գնալով դանդաղելու են. 2008-ին համար 3,7 տոկոսով, իսկ 2009-ին՝ 2,2 տոկոսով: ԱՄՀ-ն դրան արձագանքելու է մի շարք միջոցառումների իրականացմամբ:

Անդրադառնալով Հայաստանի կացությանը, Մուրիլո Պորտուգալն ասաց, որ նոր մարտահրավերներին դիմագրավելու համար Հայաստանը գտնվում է ամոթ դիրքերում: Հիմնականում զերծ լինելով ֆինանսական վայրիվերումներից, Հայաստանում գնաճը համեմատաբար ցածր է, երկրի դիրքերը հարկաբյուջետային առումով ամոթ են, իսկ իրականացվող քաղաքականության վարկունակությունն ամրագրված է վերջին 15 տարիների ընթացքում արձանագրված նվաճումներով, մասնավորապես՝ պատշաճ մակրոտնտեսական քաղաքականությամբ եւ տարբեր ոլորտներում վճռական բարեփոխումների իրականացմամբ: Նա նշեց, որ ԱՄՀ-ն աջակցել է եւ աջակցելու է Հայաստանին թե՛ ֆինանսավորմամբ, թե՛ տեխնիկական աջակցությամբ:

ԱՄՀ գործադիր տնօրեն Սխե Բակկերն իր ելույթում անդրադարձավ փոքր զարգացող տնտեսությունների վրա ճգնաժամի հնարավոր ազդեցություններին: Նա նշեց, որ դրանք կարող են արտահայտվել առեւտրային հաշվեկշռի վատթարացմամբ, փոխանցումների եւ արտասահմանյան ուղղակի ներդրումների նվազմամբ: Հայաստանին դիմակայող հնարավոր արտաքին մարտահրավերների ցանկում նա նշեց փոխանցումների, ներդրումների, վարկային ռեսուրսների հնարավոր կրճատումները: Սակայն դրանց հետ մեկտեղ Սխե Բակկերը հիշատակեց դրական գործոնների մասին, որոնց թվում կարող են լինել ապրանքների ավելի ցածր գները, ներմուծման ծավալների կրճատումը՝ փոխանցումների նվազման պատճառով, դեպի բանկային համակարգ ներհոսքի աճը եւ արտաքին ֆինանսավորմամբ ենթակառուցվածքային բնույթի նոր նախագծերը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանի եւ Արցախի մոտեցումները տարբեր են

Արցախում կա միասնական դիրքորոշում. «ԼՂՀ միջազգային ճանաչում անվտանգության ազգային համակարգի գերակայությամբ»

ԼՂՀ խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանեսյանը հրավիրված ասուլիսի ընթացքում առաջին հերթին հայտարարեց, որ իր պատասխանները չեն ներկայացնում ԼՂՀ-ի պաշտոնական դիրքորոշումը, այլ մասնավոր անձի՝ Վահրամ Աթանեսյանի կարծիքը: Սակայն անգամ սեփական կարծիքը ներկայացնելիս բանախոսն ակնհայտորեն զգուշավոր էր՝ խուսափելով երկար հայտարարություններից:

Նա հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրակարգում ներկայումս մեկ խնդիր կա՝ ԼՂՀ միջազգային ճանաչումն Արցախի ժողովրդի համար ընդունելի սահմաններում եւ անվտանգության ազգային համակարգի գերակայությամբ: Իսկ ընդունելի սահմաններն ամրագրված են սահմանադրությամբ, ազատագրված տարածքներն էլ սահմանադրությամբ որակված են անվտանգության գոտի: Արցախի միջազգային ճանաչման վերաբերյալ ԼՂՀ խորհրդարանում լսումներն սկիզբ են առել դեռ երկու տարի առաջ եւ շարունակվում են մինչ օրս: «Լսումների երկրորդ փուլը շուրջ երկու շաբաթ առաջ էր», ասաց Վահրամ Աթանեսյանը: Թեեւ ԼՂՀ-ն կարգավորման գործընթացում բանակցային կողմ չէ, այնուհանդերձ ԼՂՀ ԱԺ պատգամավորը բացառեց պաշտոնական Երեւանի կողմից կարգավորման որեւէ տարբերակի պարտադրման հնարավորությունը: Մոսկովյան հռչակագրի ստորագրումը, Վահրամ Աթանեսյանի համոզմամբ, չի կարող հանդիսանալ կարգավորում կանխորոշող փաստաթուղթ: «Եթե հակամարտությունը կարգավորող հստակ պայմանագիր լինի, արդա ԼՂՀ-ի ստորագրությունը կլինի այդ փաստաթղթի ներքո», ասաց բանախոսը: ԼՂՀ-ի՝ որպես լիարժեք բանակցային կողմ հանդես գալուն միանշանակ կողմ է, սակայն համոզված է, որ բանակցություններին մասնակցելն իմիտացիա չպետք է լինի: «ԼՂՀ-ն բանակցությունների լիարժեք կողմ չէր անցած 1994-1997 թվականներին: ԼՂՀ արտգործնախարարի հետ բանակցում էր Ղարաբաղի այսպես կոչված ադրբեջանական համայնքի ղեկավարը: Այդ տարիներին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները, առանց ԼՂՀ-ի, պարբերաբար հանդիպում էին եւ ընարկում բանակցությունների ընթացքը: Մենք ցանկանում ենք լինել լիարժեք բանակցող կողմ, երբ ԼՂՀ արտգործնախարարի հետ կբանակցի Ադրբեջանի արտգործնախարարը, իսկ նախագահի հետ՝ նախագահը», ասաց Վահրամ Աթանեսյանը:

Այն կարծիքը, թե իբր Արցախում խուճապ է տիրում ազատագրված տարածքները չհանձնելու դեպքում պատերազմի վերսկսման հնարավորությունից, Վահրամ Աթանեսյանը միանշանակ չափազանցված է համարում: «Ես ընդհանրապես չեմ կիսում այն կարծիքը, թե հակամարտության կարգավորման հանգուցալուծումը մոտ է», նշեց Վահրամ Աթանեսյանը:

Հայաստանում սկիզբ առած ընարկումները թե՛ քաղաքական եւ թե՛ փորձագիտական մակարդակով բանախոսի մեջ միայն մեկ կարծիք է ձեւավորել. «Հայաստանյան իրականությունում չկա հակամարտության կարգավորման վերաբերյալ միասնական կարծիք»: Արցախում, ի տարբերություն Հայաստանի, միասնական դիրքորոշում կա, այն է՝ «ԼՂՀ միջազգային ճանաչում՝ անվտանգության ազգային համակարգի գերակայությամբ», վերահաստատեց բանախոսը: Նա նաեւ նշեց, որ Հայաստանի եւ Արցախի մոտեցումները տարբերվում են, ընդ որում տարբերվել են միտք: Իսկ թե ինչ ազդեցություն կունենա դիրքորոշումների տարբերությունը, Վահրամ Աթանեսյանի պատասխանը մեկն է. «դրական»:

Իսկ **«Ազգի»** այն հարցին, թե ինչ կասի ԵԱՀԿ Մինսկի ռուսաստանցի համանախագահող Յուրի Մերզլյակովի հնչեցրած հայտարարության մասին, թե «համապատասխան փոխարինում գտնելու դեպքում, որը կներառի նաեւ միջազգային երաշխիքներ, տարածքները կարող են վերադարձվել», Վահրամ Աթանեսյանն ընդգծեց, որ միջնորդները կարող են տարբեր կերպ մեկնաբանել իրավիճակը, իսկ «ԼՂՀ-ն հակված չէ, որեւէ միջնորդի եւ փորձագետի կարծիքն ընդունել որպես գերակա ճշմարտություն»:

Նա հերքել է նաեւ «Միացյալ» նախաձեռնության անդամ Ալեքսանդր Քանանյանի հայտարարությունը, ըստ որի՝ ազատագրված տարածքներում վերաբնակեցման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվում: «Վերաբնակեցման քաղաքականությունը շարունակվում է եւ Քարվաճառի շրջանում այժմ ավելի շատ մարդ է բնակվում, քան, օրինակ, 2005 թվականին, երբ ընտրվել եմ ԼՂՀ ԱԺ պատգամավոր», նշեց նա: Հիշեցնենք, որ Ալեքսանդր Քանանյանը վերաբնակվել է Քարվաճառում:

ԱՐԵՎԻԿ ԲԱՂԱԼՅԱՆ

Նոյեմբերի 24-ին Ստամբուլում կհանդիպեն Նալբանդյանն ու Բաբաջանը

1-ին էջից

Նոյեմբերի 20-ին Անկարայում Ռումինիայի արտգործնախարարի հետ համատեղ մամուլի ասուլիսում Բաբաջանը վերստին անդրադարձավ ՀՀ արտգործնախարարի այցին: Նա ասաց, որ Հայաստանի հետ սկզբունքորոշված երկխոսության նպատակը (հարաբերությունների) նորմալացումն է, սակայն դրա համար անհրաժեշտ է փոխադարձ քայլերի ձեռնարկումը: Այնուհետեւ Բաբաջանն ավելացրեց. «Տարածաշրջանում կարգավորման համար դրական մթնոլորտ է ձեւավորվել: Սա պատեհ առիթի կարեւոր պատուհան է: Կարծում եմ, պետք է լավ օգտագործել առիթը: Հաճախ եմ նշել պատուհանների կարեւորության մասին: Պատուհանները բացվում են, կարող են նաեւ ժամանակի ընթացքում փակվել... Քանի դեռ բաց է առիթի այս պատուհանը, կողմերը պետք է շտապեն Ե՛ւ Ադրբեջան-Հայաստան, Ե՛ւ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների արագ նորմալացման համար»:

Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, որքան էլ արագ կարգավորում չակընկալվի, Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա երկկողմ հանդիպումից, զարգացումները գոհունակություն են պատճառում Անկարային, որովհետեւ հուսադրում են մնայուն կայունության: Այնտեղ կարգավորման գործընթացի արագացման առումով դրական է գնահատվում նաեւ Ռուսաստանի ներգրավումը:

Եթե ամփոփենք Բաբաջանի պարզաբանումները, ապա ակնհայտ կդառնա Հայաստանի հետ երկխոսության գործընթացը հնարավորինս արագացնելու եւ դա գործնական քայլերով հագեցնելու Անկարայի նպատակամղվածությունը: Այլապես Բաբաջանը ո՛չ գործնական քայլեր կպահանջեր հայկական կողմից, ո՛չ էլ կզգուշացներ պատեհ առիթը կորցնելու հավանականության մասին: Ինչո՞վ է դա պայմանավորված: Ըստ երեւույթին, Ադրբեջանի հետ Հայաստանի հարաբերություններն արտգործնախարարների, այնուհետեւ նախագահների եռակողմ հանդիպումների միջոցով համակարգելու Անկարայի նկրտումներով: Քանի որ կողմերն իրականում չեն հարաբերվում, ուստի Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների փոխարեն եռակողմ հանդիպումների ոլորտ է ներքաշվելու Ղարաբաղի հակամարտությունը:

Ինչ վերաբերում է երկխոսության արագացման պատճառներին, ապա այդ առումով, հատկանշական է «Սաբահի» նոյեմբերի 16-ի համարը: Ահա թե ինչ է գրել այս թերթը. «Անկարան Երեւանի հետ երկխոսությունն արագացնելու մեկնարկ տվեց: Երեւան-Անկարա երկխոսությունը Ստամբուլ է տեղափոխվում: Արտգործնախարար Ալի Բաբաջանը նոյեմբերի 24-ին կիյուրընկալի հայ գործընկերոջը՝ Նալբանդյանին: ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում հայկական պնդումներին աջակցող Բարաք Օբամայի հաղթանակից հետո Անկարան որոշեց արագացնել Երեւանի հետ երկխոսության գործընթացը: Որոշումը նպատակ ունի կանխելու ինչպես «ցեղասպանություն» բառի օգտագործումը ԱՄՆ-ի նախագահի ապրիլի 24-ի ուղերձում, այնպես էլ հայկական նոր բանաձեւի հայտնվելը Կոնգրեսում»:

Այն, ինչ չեն ասում Թուրքիայի ղեկավարները, նրանց հանձնարարականով գրում են թերթերը, ինչը Հայաստան-Թուրքիա մերձեցման հետ մտահոգիչ է դարձնում Երեւան-Անկարա երկխոսությունը, իսկ դրա արագացման նպատակների ու պատճառների հրապարակումը հայկական կողմի համար անհրաժեշտ է դարձնում զգոնությունը հանդիպումներում:

ՀՀԿ

Եթե բոլորը սատարեն նախագահ Սարգսյանի տեսակետին, Ղարաբաղի հարցը դրական լուծում կստանա

Համենայն դեպս՝ այդպես է կարծում Գալուստ Սահակյանը

ՀՀԿ խմբակցության նախագահ Գալուստ Սահակյանը երեկ նոր քաղաքական մշակույթի ձեւավորում համարեց նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնությունը՝ ղարաբաղյան խնդրով խորհրդակցելու արդեն կայացած փաստը՝ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ, այդպիսով երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը կմասնակցեն նաեւ կուսակցությունները: Տերմեսրոսյանական ընդդիմության չմասնակցելուն էլ այսպես անդրադարձ արեց. «Կարծում եմ՝ այդ ուժերն արդեն վաղուց ոչ մի բանի չեն մասնակցում, պարզապես մեսիջներ ուղարկեցին հասարակությանը, թե դեկտեմբերին խնդիրը լուծվելու է, եւ փորձեցին այդ կերպ քաղաքական առաջընթաց ապահովել, բայց նրանց հույսերն ի դերեւ ելան երեկվա միջոցառումից հետո», նկատեց նա: Սակայն ընդդիմության վերջին դադարը, որը նրանք պայմանավորեցին ղարաբաղյան հիմնախնդրի սրացումներով, Գ. Սահակյանը դրական համարեց՝ չմոռանալով շեշտել տվյալ ընդդիմության սպառված լինելու հանգամանքը: Իսկ դրական է, որովհետեւ Հայաստանն, այդպիսով, ցույց է տալիս միջազգային ասյաններին, որ Ղարաբաղի նման կարեւոր հարցերում Հայաստանի քաղաքական դաշտը միակամ է:

Կարեւոր համարելով ԼՂՀ կարգավիճակի հարցը՝ նա երեկ մնացյալը դիվանագիտական ընարկումներից հետո լինելիք համարեց, նկատելով, որ ԼՂ կարգավիճակի հարցը հայտնի լինելուց հետո մնացյալն արդեն Ղարաբաղի, Հայաստանի, մեր ժողովրդի տարբեր շերտերի մոտեցումները լսելու արդյունքում պետք է ձեւավորվի: Թեեւ Գ. Սահակյանն ինքն էլ պաշտոնապես տեղեկացված չէր մադրիդյան սկզբունքների մասին, գիտեր միայն, որ որոշակի սկզբունքներ են ձեւավորվել, առանցքային հարցը Ղարաբաղի կարգավիճակի հարցն է, եւ ուզում էր, որ լուծումը լինի փաթեթային: Իսկ թե ինչ սահմաններով կարգավիճակի մասին է խոսք գնում՝ Գ. Սահակյանն ի պատասխան նկատեց. երբ կարգավիճակի հարցը հայտնի դառնա, այդ ժամանակ քննարկումներ կլինեն եւ բոլորի արտահայտած տեսակետների արդյունքում նաեւ այդ հարցի պատասխանը կտրվի, իսկ սահմանների խնդիրը դրական լուծում կունենա, եթե բոլորը Ղարաբաղի հարցում սատարեն նախագահ Սարգսյանի տեսակետին:

Անդրադարձ անելով ընդդիմության՝ շրջանառության մեջ դրած այն ձայնագրությանը, որտեղ արտերկրի լրատվամիջոցներից մեկին մարտի 1-2-ի դեպքերը քննող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանն իբր խոստովանել է 1 դիպուկահարի փաստի մասին, Գ. Սահակյանն ասաց. «...կարծում եմ, որ այն մարդիկ, ովքեր ստեղծել են մարտի 1-ի վիճակը, ովքեր ոչ սահմանադրական ճանապարհով ցանկանում էին երկրում իշխանությունը յուրացնել, նրանք էլ ունեցել են դիպուկահարներ, եթե եղել են»: Նրա խոսքով՝ մարտի 1-ին տեղի ունեցածը դրսի ուժերի կողմից էր ղեկավարվում, ովքեր Հայաստանը ուզում էին դարձնել կիսապետություն:

Մ. Խ.

Գագիկ Ծառուկյանի գլխավորած պատվիրակությունը «Եդինայա Ռոսիա» կուսակցության համագումարում

1-ին էջից

Կոնստանտին Կոսաչյովը ողջունեց Գագիկ Ծառուկյանի առաջարկը՝ 2009 թվականի գարնանը Երեւանում համատեղ կլոր սեղան անցկացնելու վարաբերյալ, որը նվիրված կլինի հայ-ռուսական համագործակցության խնդիրներին եւ հեռանկարին: «Եդինայա Ռոսիա» կուսակցության գլխավոր քարտուղարի տեղակալը տեղեկացրեց նաեւ, որ իրենք ընդունել են ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի հրավերը, եւ փետրվարին կայանալիք ԲՀԿ 4-րդ համագումարին կմասնակցի «Եդինայա Ռոսիայի» գլխավոր խորհրդի նախագահության պատվիրակությունը:

Կլոր սեղանից հետո «Գոստինինի Դվոր» համալիրում բացվեց «Եդինայա Ռոսիա» կուսակցության համագումարը, որտեղ ողջույնի խոսքով հանդես եկավ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը: «Եդինայա Ռոսիայի» նախագահ, ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը ներկայացրեց Ռուսաստանի զարգացման համադրույթը՝ մինչեւ 2020 թվականն, ու խոսեց դրա իրագործման առաջնահերթությունների մասին:

Համագումարի շրջանակներում ԲՀԿ պատվիրակությունը՝ Գագիկ Ծառուկյանի գլխավորությամբ, շփումներ ունեցավ ՌԴ Պետական դումայի պատգամավորների եւ արտասահմանյան մի շարք պատվիրակությունների ներկայացուցիչների հետ:

Այդ հանդիպումները եւս մեկ անգամ վկայեցին, որ ի դեմս «Բարգավաճ Հայաստանի» եւ նրա նախագահ Գագիկ Ծառուկյանի՝ նրանք տեսնում են լուրջ եւ վստահելի գործընկերոջ, որի դերակատարությունը գնալով դառնում է առավել նշանակալի եւ ազդեցիկ:

Երեկ ուշ երեկոյան Գագիկ Ծառուկյանի գլխավորած պատվիրակությունը վերադարձել է Երեւան:

ԲՀԿ ՍԱՍՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ցավալի սխալ

Երեկվա մեր համարի 4-րդ էջի «Իրանական խճանկար» հրապարակման մեջ կոպիտ սխալ է տեղ գտել: Էջի նախնական օրինակի վրա տպագրված տիկին Էրաթ Շայայենի նկարի փոխարեն վերջին պահին՝ անփութության հետեւանքով, կրկնվել է նույն էջում տեղադրված պարոն Ղասեմզադեի նկարը: Ներողություն ենք խնդրում ցավալի սխալի համար, առաջին հերթին, անշուշտ, տիկին Էրաթ Շայայենից եւ պարոն Ղասեմզադեից:

Կրթություն

Գնահատման 10 բալանոց համակարգը դժվարին ընթացք ունի

Կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնողների համար դժվար է եղել հասկանալ գնահատման նոր համակարգի ներդրումը, քանի որ մեր հասարակության մեջ թե՛ դպրոցականի, թե՛ ուսանողի ու նրանց ծնողների համար շատ ավելի ոգեւորիչ են բարձր գնահատականները, քան խոր եւ բազմակողմանի գիտելիքները: Տավալի իրողություն է, բայց փաստ, որը շտկելու համար երեւի թե ժամանակ է պետք:

Այս ուսումնական տարվանից դպրոց մտավ գնահատման նոր՝ 10 բալանոց համակարգը, որը մեկնման փուլ էր մտել 2003 թվականից: Կրթության եւ գիտության նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի կրթակարգ չափորոշիչներ եւ գնահատում բաղադրիչի ղեկավար Կարեն Մելիոնյանի խոսքով՝ «Երբ տարվա ընթացքում այդ համակարգը փորձարկվել է, հաշվի են առնվել բոլոր կարծիքները ինչպես գնահատման ձեւերի եւ եղանակների, այնպես էլ միավորների կիրառման ու ներդրման ժամկետների վերաբերյալ: Մեզ համար սկզբից ելեք պարզ էր, որ երկար մեկնվելուց ու լրամշակվելուց հետո պետք էր բավականին աշխատանք կատարել ուսուցիչներին լիարժեք տեղեկություններ տալու համար: Կրթության նախարարի հրամանով գնահատման ամբողջ մեթոդաբանությունն այս տարի ներդրվեց փորձնական փուլում գտնվող 10 ավագ դպրոցներում, իսկ մյուս բոլոր դպրոցներում, վարժարաններում կիրառվեց միայն 10 միավորանոց սանդղակը: Այլեւս հետաձգելու կարիք չկար, որովհետեւ այս տարի ավարտեցին բոլոր առարկաների չափորոշիչների եւ ծրագրերի ներդրումը, ինչը եւ հնարավորություն ստեղծեց անցում կատարելու այդ համակարգին: Նախկինում գնահատումը հիմնականում բացահայտում էր սովորողների ստացած տեղեկությունների, փաստերի մատաղահման ասիճանը եւ չէր նպաստում ճանաչողական, կիրառական կարողությունների զարգացմանը: Գնահատումը թափանցիկ չէր, ամբողջովին չէր արտացոլում ուսուցման արդյունքները, յուրաքանչյուր սովորողի եւ դպրոցի առաջընթացի իրական պատկերը: Այսօր էլ դեռ շատ անելիքներ ունենք, չենք տարվում պատրանքներով, թե ամեն բան իսկույն պիտի փոխվի: Գնահատման համակարգի փոփոխությունները եւս կատարվել են «Կրթության որակ եւ համապատասխանություն» ծրագրով: Դա երկարատեւ աշխատանք է եւ պետք է ընթանա ճիշտ ուղիով»:

Գնահատման նախկին եղանակը, ըստ Մելիոնյանի, թույլ չէր տալիս ճիշտ գնահատել դպրոցների ուսումնադաստիարակչական գործունեության հիմնական առանձնահատկությունները: Օրինակ՝ գյուղական վայրերում կան վատ պայմաններ ունեցող դպրոցներ, որտեղ սովորողներն աչքի են ընկնում խոր գիտելիքներով ու հմտություններով, եւ ընդհակառակը՝ հարմարավետ պայմաններով դպրոցներում աշակերտները դրսեւորում են ոչ այնքան գոհացուցիչ արդյունքներ: Մինչդեռ նրանցից ակնկալվում է ավելին:

Նրա համոզմամբ, գնահատման 5 բալանոց համակարգը չէր ապահովում ճիշտ տարբերակված գնահատում՝ «Ոչ երեքն էր երեք, ոչ էլ չորսը՝ չորս, եւ միավորային համարժեքության որոշման առումով բարդություն էր առաջացնում այլ երկրների գնահատման համակարգերի հետ: Գնահատման ընդօրինակելի ձեւերից մեկը Անգլիայում է, որտեղ գնահատում են ոչ թե թվերով, այլ տառերով, բայց էականը ոչ թե դա է, այլ արդարության ապահովումն ու միջազգային չափանիշների հետ համադրելիությունը»:

Նոր համակարգի համաձայն, կիսամյակի վերջում գնահատվում են սովորողի ամփոփիչ աշխատանքը, թեմատիկ գրավորը, բանավոր հարցումը եւ գործնական աշխատանքը: Ըստ 10 բալանոց սանդղակի, 1-3-ը համարվում է անբավարար, 4-6-ը՝ բավարար, 7- 8-ը՝ լավ, 9՝ գերազանց, 10՝ բացառիկ, բայց քանի որ մեզանում բարձր միավոր ստանալու ձգտումը չափից ավելի անզուսպ է, մեր ուսուցիչներն արդեն իսկ 10 միավորը զրկել են բացառիկության շնորհից՝ դարձնելով սովորական գնահատական: «Ժամանակն է, որ բարձր գնահատականը խրախուսական միջոցից դառնա գիտելիքի արտահայտություն: Պետք է նկատի առնել, որ գնահատումը պատճառ է դառնում երեխաների գերլարման, նյարդային հիվանդությունների ձեւավորման: 9 միավորը գերազանց համարելով հույս ունեինք, որ ոչ ոք չի համարձակվի բացառիկ միավորը դարձնել սովորական գնահատական, բայց, ցավոք, արդեն դարձել է: Չեմ կարծում, որ գնահատման համակարգը ներգործություն ունի բոլոր երեխաների վրա, բայց որ բոլոր ծնողների վրա ներգործում է՝ փաստ է: Կարծում եմ, բացառիկ գնահատականին պետք էր արժանացնել միայն միջազգային օլիմպիադաներում հաղթողներին, այսինքն՝ իրոք, բացառիկ դեպքերում նշանակել: Ի դեպ, որոշ երկրներում գնահատման 10 բալանոց համակարգը փորձարկումից հետո դարձել է 7, քանի որ չեն կարողացել ուսումնական նյութով ապահովել 1, 2, 3 գնահատականների տարբերությունները: Այնպես որ, չի բացառվում, որ հետագայում փոփոխություններ կարվեն նաեւ մեզ մոտ»:

Հանրակրթական բոլոր դպրոցներին արդեն ուղարկվել են ընթացիկ գնահատման թեստերի ժողովածուները՝ աշակերտներին կիսամյակային ամփոփիչ գնահատմանը նախապատրաստելու նկատառումով: Հայեցակարգի համաձայն չեն գնահատվում միայն առաջին դասարանցիները, նրանց համար կիրառվում են խրախուսական միջոցներ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Նոր պատմություններ «Ortr»-ի էջերում

Լույս է տեսել Պրահայում տպագրվող «Ortr» ամսագրի հերթական համարը: Հարցազրույցներ աշխարհի տարբեր անկյուններում ապրող հայ արվեստագետների հետ, վերլուծություններ եւ հայկական տարբեր գաղթօջախներում ծավալվող աշխատանքների մասին պատմող նյութեր. խմբագիրն ու լրագրողները փորձել են այս ամենն ամփոփել մեկ համարում: «Մեր բոլոր հոդվածագիրներն ու զրուցակիցները՝ սփյուռքահայ թե հայաստանցի, խոսում են մի քանի կարեւոր թեմաների շուրջը՝ սեր, հայրենիք, ազատություն, արդարություն եւ սեփական ժողովրդով ու պետությամբ հպարտանալու կարողություն», խմբագրականում գրում է «Ortr»-ի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը:

«Ortr»-ի այս համարում ընթերցողների ուշադրությանն է ներկայացվում «Արմենիան ոիփորթեր» շաբաթաթերթի մեկնաբան Թաթուլ Հակոբյանի վերլուծականը՝ «Հայաստանը նոր զարգացումների խաչմերուկում» խորագրով: Մարտյան դեպքերից մինչեւ ֆուտբոլային դիվանագիտություն. դեպքերը հեղինակի տեսադաշտում են: Այս անգամ եւս ամսագրի ուշադրության կենտրոնում է Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը: Մայնի Ֆրանկֆուրտում բացվել է ՀԲԸՄ-ի առաջին գրասենյակը: Հեղինակը պատմում է այս իրադարձության մասին եւ ներկայացնում գրասենյակի ծրագրերը: Արծվի Բախչինյանը հանդիպել է մնջախաղի վարպետ Ռուզան Հակոբյանի հետ: Հարցազրույցը դերասանուհու կյանքի, անցած ուղու, երազանքների եւ նպատակների մասին է: «Գիտական» խորագրի ներքո ֆրանսահայ Ալեքսանդր Արորդի Վարպետյանը վերլուծում եւ բացահայտում է Գերմանիայի Նեբրա հնավայրում հայտնաբերված բրոնզե «երկնային սկավառակ» կոչվող պեղածոյի շուրջը ծավալվող պատմությունները: Իսկ գրող-հրապարակախոս Ալեքսանդր Թոփչյանն իր գրախոսականն է ներակայացնում ֆրանսիացի պատմաբան Ֆիլիպ Վիդալեի «Թուրական գիշեր» գրքի մասին: Հայերի բարեկամ ֆրանսիացի պատմաբանն իր գրքում պատմում է Հայոց ցեղասպանության մասին:

Ընթերցողներին կհետաքրքրի բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանի մասին պատմող հոդվածը: Իսպաներենով, հայերենով եւ անգլերենով ստեղծագործող բանաստեղծուհու թեկնածությունն առաջարկվել էր Նոբելյան մրցանակի: «Աշխարհի ամենածանոթ հայ հոգեբույժը. Հակոբ Ակիսկալ» վերնագրությամբ հարցազրույցում Հակոբ Ակիսկալը պատմում է միջազգային հոգեբուժության եւ սեփական արմատների մասին: Այս համարում խմբագրի ուշադրության կենտրոնում է նաեւ ռեժիսոր Աննա Մելիքյանը: Ռեժիսորի «Զրահարը» ֆիլմը կներկայացվի «Օսկար» մրցանակի: Պրահայում անցկացվող «Ապոստրոֆ» միջազգային թատերական փառատոնին մասնակցել են Էդգար Էլբակյան թատրոնի գեղարվեստական ղեկավար եւ ռեժիսոր Արմեն Էլբակյանն ու դերասանուհի Աննա Էլբակյանը: Հարցազրույցն այս զույգի հետ պատմում է ոչ միայն նրանց ստեղծագործական ուղու, այլեւ անձնական կյանքի որոշ մանրամասների մասին:

Հետաքրքրական այլ պատմություններ եւս խմբագրակազմի դիտակետի ներքո են: Ամսագիրը գրավիչ կարող է լինել ոչ միայն սփյուռքի, այլեւ հայաստանյան ընթերցողների համար:

ԱՐԵՎԻԿ ԲԱՂԱԼՅԱՆ

Մայր համալսարանի անցած ուղին եւ այսօրը

ԵՊՀ պատմության թանգարանը կներկայանա նորովի ցուցադրությամբ

«1957-ին 17 տարվա ախտից վերադարձած մտավորականներ, որոնց մեջ էր հայտնի իրավաբան, սահմանադրության առաջին հեղինակներից մեկը՝ Գրիգոր Չուբարյանը: Ինձ հյուրընկալվելիս մի անգամ բարկացած ասաց, թե հերիք չէ՞ գրեն, որ համալսարանը խորհրդային կարգերի ծնունդ է. չէ՞ որ հիմնադրվել է մեր առաջին հանրապետության օրոք: Օրինակ, Լեոն գրեց Ներսիսյան դպրոցի պատմությունը, իսկ համալսարանի մասին գրող չկա: Մի՞թե հանրակրթական մի դպրոց էլ չարժե, որ չես գրում նրա մասին», Չուբարյանի խոսքերն է հիշում ԵՊՀ ռեկտորի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանը: Դա էր պատճառը, որ վերջինս սկսեց զբաղվել համալսարանի պատմության հարցերով: Այդ թվականին ռեկտոր Դավիթ Սարգսյանը ստեղծեց համալսարանի պատմության առանձին կաբինետ, որտեղ վարիչ նշանակեց Լյուդվիգ Ղարիբջանյանին, իսկ Սեդա Սարգսյանը նշանակվեց նրա օգնական:

«ԵՊՀ-ի մասին հավաքեցինք փաստաթղթեր, նյութեր, լուսանկարներ, ժապավենների եւ հիանալի կաբինետ հիմնեցինք», հիշում է ռեկտորի առաջին քարտուղարը:

1971 թվականից ԵՊՀ պատմության կաբինետը մտավ համալսարանի կառուցվածքի մեջ որպես առանձին ստորաբաժանում, իսկ 1980-ին վերակառուցվեց որպես ԵՊՀ պատմության թանգարան: Նոր ռեկտոր Սերգեյ Համբարձումյանը թանգարանի հիմնադիրներին հանձնարարեց համալսարանի կենտրոնական մասնաշենքի 7-րդ հարկը, որը գործում է մինչեւ օրս: Սակայն թանգարանի հիմնադիր տնօրեն Լյուդվիգ Ղարիբջանյանն այսօր էլ մտահոգվում է, որ հենց վերջին հարկի պատճառով շատ ուսանողներ անտեղյակ են թանգարանի գոյության մասին: Այդ բացը լրացնելու համար, ԵՊՀ 90-ամյակին ընդառաջ, պատմության թանգարանի եւ մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ մայիսի 20-ին բացվեց «Զարթնք» խորագրով ցուցահանդեսը, որտեղ ներկայացվեցին ԵՊՀ պատմության թանգարանի կերպարվեստի լավագույն կտավները, տարբեր տարիներին համալսարանին նվիրված գեղանկարներ: Համալսարանականները հնարավորություն ունեցան հիանալու հայտնի գեղանկարիչներ Հրաչյա Ռուխկյանի, Գեորգի Թովմասյանի, Մհեր Աբեղյանի, Իրակլի Օլիարու եւ այլոց գործերով:

Լյուդվիգ Ղարիբջանյանը նույնպես ներկա էր «Զարթնք» ցուցահանդեսի բացմանը եւ ոգեւորված էր, որ նման միջոցառումներով մայր բուհի պատմությունը ներկայացվում է լայն հասարակությանը: Նրա կարծիքով՝ թանգարանի ներկայիս տնօրեն Ժակ Մանուկյանը շարունակում է ժառանգը եւ հետաքրքրական աշխատանք կատարել: Համալսարանի թանգարանի նախաձեռնությամբ նոյեմբերի 7-ին Երեւան քաղաքի պատմության թանգարանում բացվեց «Երեւանի պետական համալսարանը երեկ եւ այսօր» խորագրով ցուցահանդես, որը կգործի մինչեւ դեկտեմբերի 8-ը: Ներկայացված են եզակի փաստաթղթեր, նիստերի արձանագրություններ, 1919 թվականի ԵՊՀ կանոնադրությունը, հռչակավոր գիտնականների ձեռագրեր, աշխատություններ:

ԵՊՀ թանգարանում վերանորոգման աշխատանքներ են սկսվել: Թանգարանի փոխտնօրեն Մարինե Մկրտչյանն արդեն հստակ ծրագիր ունի, թե ինչ բաժիններից է բաղկացած լինելու թանգարանը վերանորոգումից հետո. «Նոր ցուցադրությունը կսկսվի գրերի գյուտից, կներկայացվեն համալսարանի պատմությունը, ռեկտորների աշխատասենյակների անձնական իրերը, կահույքը, առանձին բաժնով՝ ֆակուլտետները, ուսանողական կյանքը, մի հատվածում էլ՝ ԵՊՀ ուսանողը պատերազմում, իսկ վերջում՝ այն բոլոր նշանավոր մարդիկ, ովքեր այցելել են համալսարան եւ որեւէ հուշ են թողել թանգարանին»: Փոխտնօրենի կարծիքով՝ այս ամենը ուսանողին հաղորդակից կդարձնի ԵՊՀ պատմության թանգարանին:





ԼՈՒՍԻՆԵ ԴԵՄԻՐՃՅԱՆ

22 ՆՈՅԵՄԲԵՐ 2008 ԷՋ Ա

ՀԱՅԵԼԿԱՅ ԱՇԽԱՐՀ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 22(65)

▼▼▼

«Ժամանակի գեսը» 500 խիս էջ հաշոտղ հասոր մըն է: ՀաանՁորէն մէկուկէս անգամ աւելի սուաար կ'ըլլար ան, բայց աւելի դիւրին ընթեռնելի, եթէ գիրերը աւելի խոշոր ըլլային եւ էջերը՝ նուազ խճողուած:

Ամբողջութիւնը բաժնուած է 16 մեծ հասուածներու. անոնք ալ, իրենց կարգին՝ բազմաթիւ ուրիշ փոքր հասուածներու: Այս ամէնը կը կարդացուի մեծ հեսաւրրուութեամբ՝ մեզի համար նիւթի կարեւորութեան պասճառով եւ հեղինակի գրողական ճարտարութեան:

Գրիգորեանի սահմանումով՝

«Ժամանակի գեսը» գիրք է մարդու ճակատագրի, ներաշխարհի ու իրականութեան մասին՝ դիսուած հայի ու ցեղասպանութեան ակնոցով, միսուած յարահոս ժամանակին՝ ինչ երէկ եղել է, այսօր կասարում է ու վաղը կը լինի:

Այս տողերը գիրքի բնոյթը եւ բովանդակութիւնը կը բնորոշեն միաժամանակ: Բնութագրումը կը շարունակուի Իոսիֆ Բրոդսկիէն առնուած բնաբանով, որուն վերջին բառերն են՝ ժամին արհամարհանքի: Անոնք կը յասկանՁեն գիրքի գրելաձեւը, ոճը: Ան հեգնական է գրեթէ միշտ եւ իրասեսութեամբ ու յոռեսեսութեամբ յասկանՁուող: Ճիշդ է, գիրքի վերջաւորութեան ակնարկութիւն կայ «Վերադարձ հայրենիք» գաղափարին, բայց ան ցանկութիւն ու մաղթանք է, ոչ՝ լաւասես նպասակ:

Դառն հեգնանքը կը ծնի մեր ազգային կեանքի վերջին դարուկէսի ուսումնասիրութենէն, եւ արհամարհանքը կ'ուղղուի այդ կեանքը դառնացնող թուրքերուն ու աշխարհի եւ ազգերու ճակատագիրը սնօրինող մեծ պեսութիւններուն: Այս վերջինները սեւամէս յիշուած են անուանաՄէս, բայց թերեւս ակնարկութեան առարկայ են նաեւ գիրքի հերոսներէն մէկուն՝ Ասոմին գործածած համացանցային կայքի հասցէին մէջ: Ան ասենը մէյ մը կը դիմէ www.eu.us հասցէի մը, որուն վերջին վանկերուն մէջ կարելի է Եւրոպա սեսնել եւ Միացեալ Նահանգներ: Հեգնանքի առարկայ կը դառնայ նաեւ հայութիւնը, յասկաՄէս Հայաստանի մէջ՝ հոն սեղ գասած ազաս շուկայի եւ շուայս կեանքի սանձարձակութիւններուն համար: Այս ինքնահեգնանքը ցաւոս է ու դառն: Հեգնական վերաբերումը կը յանգի խոր յոռեսեսութեան. վէրքի պասմողներէն մէկուն –եւ գլխաւոր հերոսին– արհամարհանքը կը հասնի նաեւ «Արարչի ձախորդ սեղծագործութեան» եւ պասմութեան, որ «կեղսաջրի փոս» է պարզաՄէս: Այս փոսին մէջ կը հոսի պասմութեան գարշահոս գեսը, որ կ'անցնի նաեւ վէրքի մեկնակէս Երեւանի հինգերորդ փողոցէն:

Գիրքի ամբողջ երկայնքին սեղ-սեղ կը մէջբերուին շեղագիր նախադասութիւններ կամ պարբերութիւններ: Այս մէջբերումները զանազան ժամանակներու թուրք պաշսօնասարներու յայսարարութիւններ են, այլ ազգի խաղաքաղաքներու, վկաներու, պասմաբաններու եւ լրագրողներու կողմէ կասարուած հասասումներ, որ ցեղասպանութեան փասարկումի հրաՄարակագրական գործի շեշս մը կու տան այս էջերուն:

Վահագն Գրիգորեանը անձնաՄէս մասնակցած է ցեղասպանութեան իրականութիւնը փասող աշխասանքներու: Վիլնիուսի մէջ նախագահած է յասուկ մարմինին, որ այս նպասակով գործունէութիւն ծաւալած է: Աշխասանքը յանգած է հայկական ցեղասպանութեան պաշսօնական ճանաչումին լիթուական պեսութեան կողմէ: Գրիգորեանը քաջածանօթ է ուրեմն ցեղասպանութեան պասմութեան եւ անոր իրականութիւնը հիմնաՄրող աշխասանքներուն: Աւելին. ունի պասմութեան եւ քաղաքականութեան մասին սեղեկութիւններ, որոնք համայնագիսական ծանօթութիւններու վրայ հիմնուած վաւերագրութեան մը նկարագիրը կու տան այս գիրքին: Քաղաքացիի եւ արուեսագէսի գործ է ան միաժամանակ:

Գրիգորեանը ի վիճակի է եզրակացութիւններ հանելու հայ-թրքական յարաբերութիւններու վերլուծումէն: Հիմնովին բացասական են այս եզրակացութիւնները մեզի՝ հայերուս համար: Ան կը հասկասէ, որ թուրքերու քաղաքականութիւնը միշտ եղած է շահագործել, ձուլել կամ ջարդել իրենց այլազգի եւ այլակրօն հպասակները: Այս քաղաքականութիւնը թելադրուած է իրենց հիմնական արժէքներէն եւ համաՄարած կերպով կիրարկուած Օսմանեան կայսրութեան ամբողջ սարածքին վրայ ու սեսողութեան ընթացքին: Հասասումը հիմնաՄրելու համար օրինակներ կու սայ ան, բայց նաեւ կը ցուցնէ, որ այս օրինակները իրարմէ անկախ եւ պասահական երեւոյթներ չեն, օրինաչափութիւն մը կ'արսայայսեն:

Այսպէս, յայսնաբերելէ եսէ, որ ԺԹ դարու վերջին քառորդին բարեկարգողի համբաւ շահած Միդհադ փաշան էապէս նման էր իր դահիճ յաջորդներուն՝ Սուլթան Համիսէն մինչեւ Իսմէթ Իւնոնիւ, ան կը խօսի յիշուած անձերուն եւ անոնց նախորդներուն կողմէ մեզի հասցուած վնասներուն մասին: Տեւիրմէի աւանդութեան եւ ենիչէրիներու հասասութեան միջոցով՝ թուրքերը միշտ կոսորակած են այլազգ փոքրամասնութիւնները, խսրականութեան զոհ դարձուցած զանոնք եւ սուրբով ծանրաբեռնած: Ասենը մէյ մըն ալ ջարդեր ձուցած են եւ ամբողջ զանգուածներ թրքացուցած, Պոլիսը եսս մայրաքաղաք հռչակած են արդէն ու կը պասրասսուին ծայրամասերու մէջ սակափն իրենց ինքնութիւնը պահած բնիկներն ալ թրքացնելու:

Յոռեսես այս պասկերը վէրքի կալուածին կը պասկանի անշուշս, բայց Գրիգորեանի մսածումը կ'արսայայսէ աղագայի սեսիլով:

Փասերը հաւասի են, փասարկումը՝ զօրաւոր, եզրայանգումը՝ սրամաբանական: Սակայն, ինչպէս աղագային վերաբերող հասուածը ցոյց կու սայ, հրաՄարակագրական կամ պասմագրական աշխասութիւն չէ «Ժամանակի գեսը», այլ վէրք: Հեղինակը օգսագործած է պասմական դէպքերն ու դէմքերը, բայց երեւակայութեամբ յասկանՁուող պասմութիւն մը յօրինած է՝ իր կողմէ սեղծուած դէմքերով ու դէմքերով, որոնք իրականանման են՝ իրական պասահարներու եւ անձերու պէս, ու կը պարսադրուին մեր երեւակայութեան:

Պէսք է ճանչնալ գիրքը նաեւ -մանաւանդ- այս սեսանկիւնէն, ուսումնասիրել անոր կառոյցը, պասումի կերպը, հերոսներու սեղծումը, եւ այլն, այսինքն՝ վիպագրութեան արուեսը Վահագն Գրիգորեանին:

«Ժամանակի գեսը» պասմութիւնն է սարօնցի իշխան Գալուսի յեսնորդներուն՝ խաՀրօնցի իշխան Գալուսի յեսնորդներուն՝ խաՀրեր դարու ամբողջ երկայնքին: Անոնք երկու ճիսղով հասասուած են Խարբերդ եւ Վան, ուրկէ Մեծ Եղեռնէն եսէ անցած են Եւրոպա կամ հասասուած Հայաստան: Տարօնցի Գալուսի խարբերդցի յեսնորդները կոչուած են Սրգալուսեան, Հայաստան հասասուած վանեցիները դարձած են Սրբ-Գալսեան: Զոյգ ճիսղերը անգամ մը կաղուած են իրարու վանեցի Մարիամի Խարբերդ հարս երթալովը Եղեռնէն անմիջաՄէս առաջ, յեսոյ նաեւ խաՀրեր դարու առաջին եւ երկրորդ կէսերուն՝ ներգաղթի եւ անկախութեան յաջորդող սփիւռքահայ զանգուածներու եւ անհասներու երթսղարձի բերումով:

Մարիամի գողգոթան՝ Խարբերդէն Սրբ Զօր երկարող ճամբաներուն վրայ, մանրանկարն է ամբողջ արեւմսահայութեան բռնագաղթին ու Եղեռնին: Ամուսինին եւ աներին սպանութենէն ու կեսուրին մահէն եսէ, Մարիամը դեռահաս Արուեսկն ու Յովսէփը կը յանձնէ «ընսանիքի բարեկամ» Աղսուլլա Պայրալին՝ 100 ոսկի սալով անոր զաղսիկներուն խնամքին համար, մինչեւ որ սեղ մը հասասուի եւ իր քովը բերել սայ զանոնք, 100 ոսկի ալ պահ կը դնէ անոր քովը: Ու ճամբայ կ'ելլէ դէպի անյայսութիւն՝ ընսանիքի մեծ մայրիկին հեսեւ: Մունեսիկին սեղահանութեան լուրը սարածած օրը իր արգանդին մէջ գոյութիւնը զգացուցած է արդէն զաւակը, որուն պիսի սայ ամուսինին անունը՝ Գլակ:

Մանրամասնօրէն կը պասմուի չարչարալի արկածախնդրութիւնը Մարիամին. մեծ մայրիկին մահը, իր յաջորդական փախուսները, Գլակին ծնունդը, թուրք ընսանիքի մը մէջ ժամանակաւոր կայք հասասելը, Սրբ Զօր հասնիլը եւ հոնկէ Հալէպ երթալը քալելով, Հալէպի ամերիկեան հիւպասոսին օժանդակութիւնը վայելելը եւ արաբ ընսանիքի մը քովը ապասան գսնելը:

Յեսոյ արդէն յեսեպասերազմեան սարիներն են, ժամանակաւոր սեղասրումը Կիլիկիա եւ վերջնական մեկնումը դէպի Արեւմուսք:

Մարիամն ու Գլակը կը հասասուին Մարսէյ. Գլակը կը մեծնայ մօրը պասմածներուն ունկնդիր եւ օսար երկիր ապրելու դժուարութիւններուն ենթակայ: Ուսում կը սսանայ, մասնագիսութիւն ձեռք կը ձգէ, միշտ հաղորդ կը մնայ իր ազգի սառապանքներուն ու ձգսումներուն: Մօրը մահէն սասնեակ մը սարի եսէ ալ կը ներգաղթէ Հայաստան՝ հոնկէ Երկիր երթալու հասաս որոշումով: Կը հաւասայ, որ Խորհրդային Միութիւնը պիսի առնէ Արեւմսահայասանի հայկական հողերը, եւ ինքնպիսի կրնայ հասասուիլ իր «հայրենիք»-ին մէջ:

Հայաստանի մէջ Գլակը նախ Արարասեան դաշսի Փրգրէս կոլխոզը կը սարուի, ապա կը հասասուի Երեւանի 5-րդ փողոցը: Հոն կը գսնէ Միսաք Սրբ-Գալսեանն ու անոր ընսանիքը: Միսաքը իր բեռիին սղան է՝ խորհրդային պայմաններուն յարմարած մարդ: Հօրն ու մեծ հօրը ախորէն եսէ չափազանց զգույշ կեանքը կը վարէ ան եւ չի վարանիր պեսական սպասարկութիւններուն հես գործակցելէ՝ մորթաղաՄս նպասակներով:

Գլակը բոլորովին ուրիշ նկարագիրի սէր է. ցնորասես, միամիս, համարձակաբան: Ազասորէն կը խօսի դրացիներուն հես, կը պասմէ «Շեմէթի գործ»-ին մասին, այսինքն՝ Վանի դահիճին վերաբերող թղթաղանակին, որ մօրէն ժառանգ մնացած է իրեն եւ պիսի ծառայէ դաս բանալու մեծ մարդասպանին դէմ: Շուսով ան կը կրէ հեսեւանքը իր վարուելակերպին՝ ախորուելով Սիպիրի Եուզակովօ ագանը: Հոն կը հանդիպի լիթուացի ախորեալներու եւ մսերիմ կաղեր կը հասասէ անոնց հես: 1952-ին ալ կ'ամուսնանայ ամբողջ ընսանիքը սիպիրեան ախորի ճամբուն վրայ կորսնցուցած ուրիշ ախորականի մը՝ Քնարին հես եւ կ'ունենայ մանչ զաւակ մը՝ Գալուսը: Վերջինը շուսով գնէլ պիսի կոչուի՝ զանազանուելու համար Միսաքի Գալուսէն: Այս գնէլն է կեդրոնական դէմքը եւ գլխաւոր պասմողը վէրքին, որ փասորէն իր հեղինակութիւնն է. «գիրքին մէջ գիրք» գրող է ան:

Գլակը կնոջ ու սղուն հես կը դառնայ Երեւան, բայց երկար չի մնար հոն: Շուսով, ֆրանսայէն ներգաղթած հայերու զանգուածին հես կը վերադառնայ Մարսէյ ու հոն մահկանացուն կը կնքէ քանի մը սարի եսէ: Գնէլը Քնարին հես կ'ապրի Մարսէյ, լաւ ֆրանսերէն կը սորվի եւ ֆրանսերէն գիրեր կը գրէ: Ծովափ հանգիսսի գացած մէկ երջանին կը հանդիպի կէս հայ օրիորդի մը՝ Մարիին, որ վէրքի ուրիշ մէկ հերոսին՝ Արարասին զարմէն է, եւ աղեսն մը եսէ կ'ամուսնանայ անոր հես ու կ'ունենայ աղջիկ մը՝ Անի: Ասեն մը եսէ կ'ամուսնալուծուին անոնք:

Քարիզի հայաբաս արուարձաններէն Ալֆորվիլ հասասուած Գնէլը կ'ապրի մօրը հես եւ պարբերաբար կ'ընդունի այցելութիւնը Անիին, երբ վերջինս կու գայ գիշեր մը կամ բաթաթվերջ մը անցընելու իր հօրը եւ մեծ մօրը հես:

Երբ Հայաստանը կ'անջասուի Խորհրդային Միութենէն եւ անկախութիւն կը հռչակէ, Գնէլը ասենը մէյ մը կու գայ Երեւան ու կը բնակի 5-րդ փողոցի բարձրադիր յարկաբաժիններէն մէկուն մէջ: Երկբեւեռ այս կենցաղը՝ Քարիզի եւ Երեւանի մէջ, շուսով կը վերածուի եռաբեւեռ երթեւեկի Քարիզի, Երեւանի եւ Պոլիսի միջեւ:

Մենք՝ ընթերցողներս ալ կը փոխադրուինք Պոլիս եւ թրքական այլ քաղաքներ ու գիւղեր: Արդէն վկան եղած էինք պոլսահայ Արամ Արարասի՝ Անիի մեծ հօր եւ Յակոբ Քէչեանի զրոյցներուն եւ սեղեկացած անոնց ողբերգութեան՝ հարսութեան սուրին (Վարլիք Վերկիսի) պասճառով: Հանդիպած էինք նաեւ Եուսուֆ Աղրըօղլու անուն սարօրինակ մարդու մը, որ, շուսով պիսի գիսնանք, Գնէլին ազգականն է՝ Յովսէփ Սրգալուսեանը: Պոլիս հասասուած են նաեւ ուրիշ գաւառացիներ, թուրք այս անգամ, Սրգալուսեան ընսանիքի «բարեկամ» եւ սան ու հարսութեան սիրացող Աղսուլա Պայրալը եւ գաղթի ճամբաներու ժանսարմ Ռեճեփ Փերինչէրը:

Չորրորդ սեղ մըն ալ՝ Լիթվիան, գործողութեան վայր կը դառնայ շուսով: Գլակին ու Քնարին ախորակից լիթվիացի սիկինը, որ

Տես էջ 5

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ

«ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՏ»-ԻՆ ՀՈՒՆՈՎ

*Երեւանի «Զանգակ-97» հրատարակչութիւնը շատ լաւ գործ տեսած է հրաՄարակ հանելով **Վահագն Գրիգորեանի «Ժամանակի գեսը»** վէրքը: Թեհրանահայ խումբ մը գրասէրներ նոյնպէս շատ լաւ գործ տեսած են «բարեկամական աջակցութիւն» բերելով ու մեկենաս դառնալով վէրքին: Այս երեւոյթը կը նշանակէ, հակառակ հեղինակի յոռեսեսութեան, որ հայ գիրքը ընթերցող ունի՝ տակաւին եւ թէ պարսկահայութեան մէջ ալ, բարեբախսաբար, ծանօթներ ու ջասագովներ կան Գրիգորեանի գրականութեան:*



ՃԱՊՈՆԻԱՅԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ...

Կատարելության ճանապարհին

Գինձան Տոկիոյի ամենաաշխույժ առեւտրային թաղամասն է. այստեղ է կենտրոնացված նաեւ պատկերասրահների մեծ մասը: Ինչպես իմ այսօրվա զրուցակիցը՝ գեղանկարիչ Արա Հայթայանն է նկատել, ճապոնական պատկերասրահները գերազանցապես ներկայացնում են իրենց ազգային նկարչությունը, թեեւ դրսից արվեստի հոսքն ապահովում են եւ կողքու բնակիչներին հատուկ հոգեբանությամբ ավելի են հետաքրքրված դրսով:

Տոկիոյի Գինձա ի Ճյուռե պատկերասրահը ութ օր, այս տարվա սեպտեմբերի 18-25-ը հյուրընկալել էր հայ նկարիչ Արա Հայթայանին: Ցուցադրված շարքն իր ստեղծագործական ուղու ամփոփ մի արտահայտություն է եղել՝ 1989-90-ականներից մինչեւ 2008-ն ընդգրկող ժամանակահատվածով, ֆիգուրատիվ նկարչությունից նատյուրմորտ եւ վերջին տարիների աբստրակտ արվեստի դրսեւորումներ: Այցելուներին առաջարկվող կատալոգում անդրադարձներ են եղել նաեւ հայոց պատմության կարեւորագույն դրվագներին, հայկական միջնադարյան արվեստի հետ նախնական ծանոթություններով, մանրանկարչական մի շարք գործերի վերատպություններով:

Ճապոնիայում հայեր գրեթե չկան, ըստ տեղեկությունների XIX դարում այստեղ երկար տարիներ ապրել է մի հայ կին, որ հետագայում իր տունը եկեղեցի է դարձրել: Հայաստանը եւ հայ մշակույթը ճապոնացիներին անծանոթ տարածք եւ երեւույթներ են: Արան ասում է, որպեսզի հասկանալի դարձնես քո արվեստը, սփիռված ես ամեն անգամ բացատրել Հայաստանի աշխարհագրական դիրքը, այժմ Վրաստանի դեպքերի բերումով կարող ենք ասել՝ Վրաստանի կողքին ենք, եւ հայերին ներկայացնել որպես քրիստոնեական մշակույթ կրող ժողովուրդ:

Ճապոնական պատկերասրահներում ձեւավորված են ցուցահանդեսների կազմակերպման մեզանից տարբեր եղանակներ ու մեթոդներ. դրանք անցնում են առանց պաշտոնական բացումների ու հրավերների, հրավիրյալների ներկայությունը ապահովվում է ցուցադրության ողջ ընթացքում, պատկերասրահում միշտ այցելուներ լինում են եւ հնարավորություն են ունենում շփվելու արվեստագետի հետ անմիջականորեն: «Ճապոնացու համար մինչեւ գործ գնելը կարեւոր է զրուցել արվեստագետի հետ, մի բան, որ Եվրոպայում չկա, որտեղ ընդհանուր միտումը գնորդի եւ պատկերի դիալոգն է: Եվ սրա մեջ ավելի ազնվություն կա. մարդն ուզում է հասկանալ, թե այդ արվեստագետն ինչպիսի միջավայրի ծնունդ է, ճանաչել թոտքը, կտավը, գույնը, մտածողությունը»:

Ցուցահանդեսը արձանագրել է հաջողություններ, հետաքրքրություններ առաջացրել, նաեւ վաճառքի առումով արդյունավորվել: Արվեստագետի տպավորությունները՝ մեզ համար գրեթե անծանոթ եւ օտար քաղաքակրթական այս միջավայրից, բավականին հետաքրքրական են՝ ոչ այնքան նկարագրական, որքան վերլուծական-համադրական՝ միտքը հարստացնող փորձառությամբ, ինչը որքան էլ տարօրինակ թվա, ինչ-որ տեղ կարելի է զուգահեռել մեր կյանքին եւ ինչ-որ բան վերցնել, սովորել:

Տեսարան Տոկիոյի Գինձա թաղամասից

Ճապոնական տպավորություններ

- Հայտնվեցի շատ լուրջ երկրի, շատ խորը ժողովրդի դեմ հանդիման՝ խոնարհ եւ արժանապատիվ. հասնել այսպիսի նվաճումների եւ այդպիսի խոնարհ կեցվածք ունենալ՝ անհավատալի է: Համենայն դեպս, պերֆեկցիոնիզմով, կատարելապաշտությամբ, կյանքը սրբագրելու կատարյալ քայլերով Եվրոպան իրենց չի կարող հասնել:

Երբ նոր երկիր ես մտնում, չգիտես՝ այդ երկրի ինքնությունը որ կետում կգտնես: Կյանքի յուրահանչյուր ասպեկտի այստեղ շատ բծախնդիր մոտեցում է ցուցաբերված, կատարելության հասցված եւ շատ ներդաշնակված է. սեփական երկիրը կազմակերպելու ինչպիսի՞ մշակույթ ունի ճապոնացին: Հենց օդանավակայանում առաջին հանդիպումից, մախավորի, թե սահմանապահի, ծառայող անձնակազմի մոտեցումից ու վերաբերմունքից զգում ես, որ իրենց ողջ վարվելակերպը սպասարկման ոլորտում ոչ թե լավ վարժեցված, այլ ամեն ինչ ներդաշնակված է իրենց ազգային նկարագրին, ոչ թե դրսից ներմուծված մեթոդ է, այլ իրենց մշակույթից, հոգեբանությունից է գալիս:

- Ո՞ր է այդ մշակույթի մեջ իրենց ամենաբնորոշը:

- Եթե կա իդեալ որեւէ մշակույթի մեջ, որ Դաֆնս, Նիրվանա կամ մեկ ուրիշ անուն ունի, դա կիրառումը առօրյայում պետք է անել: Եթե երկրային համակեցության նման մոդել կյանքում ցույց չի տվում, կամ արդյոք որեւէ հնարավորություն պատկերացում կազմելու դրա երկնային մոդելի մասին: Պարզապես կենցաղայինը, կիրառականը, մշակութայինը, գեղարվեստականը միմյանցից պիտի չտարբերվեն: Այդ ինը օրերին մարդկային համակեցության հարմարավետությունը, նրբությունը, վերաբերմունքը, հարաբերությունների ձեւն էր, որ ինձ ապշեցրին: Այդ փոքր կղզու վրա 150 մլն բնակչությունը կարողացել է այնպիսի մոդել ստեղծել, որ ներդաշնակ համակեցություն ապահովվի: Իրենց գերծանրաբեռնված կյանքը թեթեւացնելու աշխատող համակարգեր են ստեղծել, օրինակ, ուրբաթ երեկոյան ամբողջ Ճապոնիան մեղմ հարբած է. աշխատանքից դուրս են գալիս, գնում ռեստորան՝ իրենց ղեկավարների հետ, շաբաթ-կիրակին արդեն հանգստի օրերն են՝ ընտանիքի հետ:

Հետաքրքրական շատ հանդիպումներ ունեցա առվեստագետների, համալսարանական պրոֆեսորների հետ, ինձ հնարավորություն տվեց՝ դառնալու իրենց կյանքի մասնիկը, մասնակիցը որոշ տարիքների սովորույթների:

- Այ, ինչպիսի՞ն էր նրանց վերաբերմունքը օտարի հանդեպ:

- Սարսափելի պատրաստակամ էին: Այդպիսի պատրաստակամություն ես ոչ մի երկրում չեմ տեսել: Առավոտյան մետրոյում այդ բազմահազար անցուդարձի, արագության մեջ բավական է խրտեզդ հանես՝ կողմնորոշվելու, եւ 3-4 մարդ քեզ կմոտենա, եւ նրանցից մեկը միշտ կասի՝ արի ինձ հետ: Եթե մարդը մարդուն չօգնի, անտանելի կլինի կյանքը, հետաքրքիր մոդելներ են գտնվել մարդկային համակեցությունը տանելի դարձնելու:

- Ճապոնացիները համարվում են ամենաավանդապաշտ ժողովուրդներից մեկը, միաժամանակ գերժամանակակից մտածողություն ունեն թեկուզ էլեկտրոնիկայի բնագավառում: Ինչ տպավորություն ունես այս առումով:

- Տոկիոն ոչտրամոդեռն քաղաք է՝ արդիական ճարտարապետությամբ, բայց ճապոնական մոտեցումներով: Եղա նաեւ Օսակայում, Յոկահամայում, Կիոտոյում: Ճապոնացիք ասում են՝ եթե Կիոտոն չտեսնես, չես հասկանա ճապոնացու հոգին: Մի կողմից հին մայրաքաղաք՝ պահպանած ֆեոդալական միջավայրը. ամբողջ սրբատեղիները, տաճարները Կիոտոյի շուրջն են: Այդ ամենը, ծեսերը, արարողությունները գործում են այսօրվա կիրառելիությամբ, ազգային զգեստներով, կիմանոներով գնում են աշխատանքի: Եվ այս միջավայրը ձեւական չէ: Կիոտոն՝ որպես ազգային ավանդույթների կրող քաղաք, շատ ավելի ընդգծված է:

Տեխնիկական առաջընթացը, որ գրանցել է Ճապոնիան, իմ կարծիքով շատ առումներով պայմանավորված է իրենց կրոնական մոտեցումներով: Այն բնապաշտությունը, որ իրենց խորքում կա, հատուկ արտահայտություններ է գտել: Այնպիսի մի ժողովուրդ, որ ուշադրություն է դարձնում խոտի ամեն տեսակի, ձեւի եւ դրա միջոցով փորձում աշխարհը տեսնել, հասկանալ, նման որակի մակրոէլեկտրոնիկա կարող է ստեղծել: Էլեկտրոնիկայի նկատմամբ իրենք գրեթե կրոնական վերաբերմունք ունեն:

Անշուշտ, մեծ ջանքեր են պահանջվում մի կողմից աշխարհի նորագույն նվաճումներին համատեղ ընթանալու, մյուս կողմից՝ պահպանելու էթնիկ մշակույթը կիրառելի դարձնելով: Հարցն այն է, թե ինչպես ես նայում քո խորքին, արմատներին, դրանք օգտավորվում են, թե՞ խոչընդոտում:

Ճապոնացիների համար կարեւորը վարքեցությունն ու կատարելությունն է: Կատարելություն են փնտրում ամենուրեք: Մեծ անհատականություններ հնարավոր է չտեսնես, բայց շատ պատասխանատու արվեստ է ստեղծվում, մոտեցումները շատ խորն են: Եվ մի կարեւոր բան՝ արհեստներն անընդհատ կատարելագործում են, արհեստների գերիշխանությունը սարսափելի մեծ է այդ երկրում, ամեն փոքր դեպք արվեստի մակարդակի է հասցված: Ես ավելի իրենց խեցեգործության մեջ գեղանկարչություն գտա, բայց խնդիրն այն չէ, թե ինչ ձեւերի մեջ է ճապոնացին իրեն արտահայտում՝ կտավի, թե՞ խեցու, խնդիրը նվիրման աստիճանն է:

Այս երկրում ամեն երեւույթ խորքային լուծում է ստացել, հատուկ վերաբերմունք, սահմանազատում կա մարդու, կենսական տարածքի եւ բնության միջեւ, ընդգծված է բնության կարեւորությունը, բնության հանդեպ որեւէ միջամտություն արգելված է:

- Որտե՞ղ ի վերջո գտար այդ ազգի ինքնությունը՝ կրոնի, ավանդույթների, լեզվի, փիլիսոփայության մեջ:

- Կարծես գաղտնիքների միջով անցնես: Այնպիսի մեծ հետաքրքրություններ էին առաջացնում, որ ինձ անընդհատ ասում էի՝ հաջորդ կյանքում պիտի ունենամ ճապոնացի կին:

- Ինչո՞ւ, ինչ-որ յուրահատուկ, առեղծվածային բան ունե՞ն:

- Նախ արեւելյան համակրելի կին-էության վաղուց չէի հանդիպել, բացի այդ եթե ուզում ես անցնել այդ ամենի միջով, խորհրդանիշները հասկանալ, պիտի այդ ծեսի միջով անցնես:

Արա Հայթայանը արվեստի հավաքորդ Անդո սանի հետ

Անհամեմատելին համեմատության մեջ

- Որքան էլ պատմությամբ, քաղաքակրթություններով, հոգեբանությամբ շատ տարբեր, գրեթե օտար, այնուամենայնիվ, որեւէ ընդհանրություն գտար մեր եւ ճապոնացի ժողովուրդների միջեւ:

- Ճապոնացիները Հերոսիմայի ցավից բացի մինչեւ հիմա տանում են նաեւ այն ցավը, որ ստիպված են դարերի իրենց ապրելակերպը հարմարեցնել ժամանակի առաջընթացին: Պիտի գիտակցական ու սթափորոշում կայացնել, թե որտե՞ղ կարելի է պահպանել ինքնությունը, ո՞րը զոհել, ո՞րը զարգացնել: Եթե մենք էլ նման վճիռ կայացնենք, մեզ համար եւս ցավոտ է լինելու: Իրենք կարողացան հաղթահարել այդ ցավը (ամերիկացիների հետ հարաբերություններում) եւ նաեւ կարողացան բնության, քաղաքակրթության տրանսֆորմացիաներով գտնել իրենց տեղը նոր միջավայրում: Այդ ամենն արվեց շատ սրընթաց, դրան դիմանալը հոգեբանորեն, իհարկե, դժվար է: Շատ ճապոնացիներ ուրիշ երկրներում էլ են ապրում, բայց ճապոնական գենը նոր որոշումների, նոր խնդիրների մեջ կայացավ եւ կայացավ լուրջ ու հաստատուն:

Մենք շարունակում ենք ինքներս ձեզով մեր ռոմանտիկ որոնումներում ապրել, ինչ-որ պատկերացումներով մեր ինքնության նշանների մասին: Այդ երազներով անընդհատ կորուստներ ենք ունենում ու կառչում փրփուրներից: Մեր ճգնաժամը շատ ավելի խորն է եւ ուրիշ տեղ, քան այսօրվա աշխարհի ֆինանսական ճգնաժամը, որին ուշադրություն չի դարձվում: Ինքներս սխալ գաղափարախոսությունները մեզ հասցրին այսօրվա վիճակին, որ երբեմն պահում է մեզանից շատերին երջանիկ ու հպարտ: Տեսնել այդ գոհունակությունը, շատ տխուր է, որովհետեւ չկան հիմքեր նման բավարարության, երբ տեսնում ես, թե մարդիկ ինչ խնդիրներ են դրել եւ ինչերի հասել եւ դեռ մտահոգ են: Աշխարհը շատ դինամիկ է, եւ խեղճերը արագ դուրս են մղվում: Իսկ մենք շարունակում ենք չգիտես ինչու մեր երջանիկ հպարտության մեջ մնալ:

- Դա ինչի՞ հետեւանք է:

- Աշխարհը չճանաչելու, չհասկանալու վիճակը, պրոցեսները, թե ինչ է կատարվում եւ ազգերը ինչ են զոհում եւ փոխարենը ինչ են ստանում:

Տես էջ 9

Գիոն տաճարը Կիոտոյում

...Ոչ մի ուրիշ երկ, Աստուածաշնչից զատ, նման լայն տարածում չի գտել: Նարեկի մի էջի ընթերցանությունը աւելի մեծ սփոփանք էր բերում, քան Դաւթի բոլոր սաղմոսները:

Մատթէոս Զուլայեցի

...Գրիգորի ստեղծագործությունը՝ հայ քնարերգության եւ հոգեւոր առուեստի կիզակէտը, շատ երկար է մնում մեկուսի՝ անգերազանցելի իր հոյակով, որպէս հայ միջնադարեան պատմության վերջին շրջանների մէկի ժամանակ անսպասելի փայլատակած մի գիսաստղ: Այս գլուխգործոցի ուժն ու կարողությունը իր նմանը չունի դարի եկեղեցական Վերածննդի խստաճաշակ շողարձակման մէջ...

Ժան-Փիէռ Մահէ

- Շնորհաւորում ենք Ձեզ գրքի լոյս ընծայման առթիւ: Հետաքրքրական է, որքա՞ն ժամանակ էք տրամադրել գրքին, չէ՞ որ առաջին անգամը չէ, որ անդրադառնում էք Նարեկացիին:

- Նարեկացիի մասին գրելը, իմ մտքով, հին, շատ հին ցանկութիւն եղած է, ըսենք անցեալ դարու 70-ականներուն: Գրքի յառաջաբանին մէջ այս մասին ակնարկներ կան: Ա, ժամանակ արդէն, կարծեմ իմ երրորդ գիրքը՝ Ի գործ արկանել (2004, Մոնթրէալ) արդիւնքն է այս աշխատանքին: Ի հարկէ ուրիշ առիթներով ալ գրած էի յօդուածներ, Նարեկացիի գործերը՝ Մատեանը, Ճառերը, մանաւանդ Երգ երգոցի մեկնութիւնը գիս միշտ կը հետաքրքրէին, իմ մէջ կը պահէին իրենց տարօրինակ հմայքը: Այնքան ալ դիւրին չէ նման հմայքէ ազատագրուիլ, զայն չէզոքացնել:

Այս հատորին մէջ խմբուած են առաջին երկու գրքերս եւ բոլորովին անտիպ երրորդ մը: Հատորը ինքը պատուէր մըն էր Խաչենց •Փրինթինֆո հրատարակիչներէն, որոնք այսպէս ինծի առիթը կու տային ընթերցող հասարակութեան ներկայացնելու աշխատանքներս:

- Ինծ համար անակնկալ էր Արթօ Չամտաճեանի գծանկարները. ինչպէ՞ս յայտնուեցին գրքում:

- Ես տեսած էի Արթոյի քանդակները Մոնթրէալի արուեստանոցին մէջ, մանաւանդ Նարեկացիի «դիմանկար» մը, որ գիս շատ տպաւորած էր: Արդէն Ի գործ արկանել հատորի կողքին կար իր մէկ գծանկարը, յատուկ այդ գրքին համար: Արթոյի համար ալ Գրիգոր Նարեկացին մեր մշակոյթի եւ գրականութեան համար էական անձնաւորութիւն մըն է: Եւ քանի որ երկուքս ալ նոյն «պաշտամունք-հիացումը» ունինք՝ ոչինչ կ'արգիլէր որ նոյն հատորին մէջ գիր ու գիծ, գրութիւն եւ նկար հանդիպին իրարու: Անձնապէս նման ընկերակցութիւնը կը սիրեմ եւ կարծեմ նկարիչները իրենք ալ կը սիրեն իրենց գործերը տեսնել բանաստեղծներու էջերուն դիմաց: Անշուշտ աշխատանքներու միջեւ ո՛չ այնքան նոյնութիւն է պէտք, որքան տարբեր միջոցներով ոլորտի մը, իմացական կամ բանաստեղծական ոլորտի մը ձգտում: Պարզ է, Արթոյի գծանկարները իմ գրութիւններս չեն պատկերազարդեր, առանձին, լիարժէք գործեր են, քանդակագործի տեսանկիւնէ տեսնուած Նարեկացի մը տուող:

- Արդեօ՞ք տարօրինակ չէ, որ երկխօսութիւն էք սկսել մի մարդու հետ, որ ձայն չունի, որ չի խօսում, լուռ է, հազարամեակից աւելի:

- Ի հարկէ, «երկխօսութիւն» եզրը գրքի խորագրին մէջ յարակարծիք կը թուի, պարադոքս: Եւ սակայն անիկա կը կազմէ գրքի թեմաներուն ամենէն կարեւորներէն մէկը: Նարեկացի ինքք արդէն իր խօսքը կը բնորոշէ իբրեւ «խօսք ընդ Աստուծոյ», նոյն ատեն «յաղագս Աստուծոյ», այսինքն՝ երկխօսութիւն Աստուծոյ հետ, Անոր մասին, ի հարկէ նաեւ մարդու, իմ մասին: Գրքին մէջ կը խօսիմ երկխօսական կառուածքէ, ինչ որ չի նշանակեր, թէ Աստուած, բացարձակ Ուրիշը կը խօսի: Ան խօսած է արդէն Աստուածաշունչ մատեանին մէջ: Ուստի՝ Աստուած կը լռէ, անիկա մեծ լռութիւնն է: Ասոր համար իր խօսքը Աստուծոյ ուղղող մարդը երբէք վստահ չէ, որ խօսքը կը հասնի իր տեղը: Տարակոյսը մաս կը կազմէ հաւատքին: Իսկ խօսող մարդը, ետը, մարդկային հոգին է, որ իր մէջ ունի համայն մարդկութիւնը: Նարեկացին կ'ըսէ. իմ մէջս է ինչ որ կայ բոլորին մասը. բոլորինը իմն է: Հասկնալի է թէ ինչո՞ւ բոլոր մեղքերն ու յանցանքները Գրիգոր Վանականի Նարեկայ վանքի քահանայ վարդապետի մեղանչումի արդիւնքը չեն: Խօսողը նոյն ատեն կը խօսի ինքն իր հետ, ներքին եսին հետ: Ահա երկրորդ բեւեռ: Նոյն ատեն այս երկխօսութեան մէջ կայ ընթերցողը, որուն համար գիրքը կը գրուի: Ուստի՝ երկխօսութիւն կը բանի ամէն տեղ Մատեան ողբերգութեան մէջ: Այլ հարց. Նարեկացի չի դադրիր իր Մատեանը ներկայացնելէ իբրեւ իր իսկ ձայնը, իրմէ մնացող յեսին նշանը: Ինքն է ըսողը. պիտի մեռնիմ բայց ասով (Մատեանով) թող նկատուիմ (գրեցոյց) կենդանի: Մատեանով թող կենդանի ըլլամ եւ մշտապէս Աստուծոյ առջեւ, մինչեւ երկրորդ գալստեան օրը, շարունակ թուեմ մեղքերս եւ յայտարարեմ Աստուծոյ մեծութիւնն ու փառքը: Հետեւաբար, եթէ խօսողը մեռած է, Մատեանը կը շարունակէ ձայնել, բացագանչել, խօսիլ: Եթէ ձայնը կայ, հնարաւոր է անոր հետ խօսիլ: Այլեւս այդ ձայնը գիրքի մը մէջ է, այդ գրքին կոռութիւն կու տայ, կը կազմէ անոր ներքին շունչը: Ուստի՝ այդ ձայնը-գիրքը կարելի է լսել, կարդալ, մէջբերել, վերլուծել ու մեկնաբանել, քանի որ անոր թելադրածները ո՛չ յստակ են, ոչ ալ իմանալի: Կարդալ կը նշանակէ այլեւս մտնել երկխօսական կարգի մը մէջ, այսինքն՝ գրուածը ընդունիլ իբրեւ երկրորդ մը, ուրիշ մը, որուն տարբերութիւնը հարկ է պահպանել: Հարկ է յարգել զայն, չդարձնել անոր սա կամ նա գաղափարախօսութիւնը: Որով չի՛ երկխօսութիւն առանց այն նոյնին, որուն շուրջ կը կազմակերպուի գրուածքին եւ ընթերցողին յարաբերութիւնը: Ամէն մարդ գիտէ որ Նարեկի լեզուն թէ՛ դժուար գրաբար է, թէ ալ չափազանց անհասկանալի, իւրայատուկ իմացական գործիք: Որ ունի հոգեւոր հրահանգի դեր: Որովհետեւ-եւ ասիկա երբէք պէտք չէ մոռնալ-ճգնողական գրականութիւնը, ինչպէս ճարտասանական մարզանքները, կարեւոր տեղ կը գրաւեն Մատեան ողբերգութեան մէջ:

- Նարեկը միջնադարեան գիրք է... սակայն նոր է նաեւ... ինչպէ՞ս հասկանալ...

- Անկասկած, ինչպէս հին է Աստուածային կատակերգութիւնը (Դանթէ): Հին, նոր, նոյն ատեն օժտուած ժամանակէն վեր ըլլալու գերազանց յատկութեամբ: Ամէն սերունդ իր Նարեկը կը ստեղծէ, երբ կը կարդայ: Որով եթէ կան ընթերցման բազմաթիւ հնարաւորութիւններ, կայ նաեւ անոր ընթերցման, ազդումի շրջանակի պատմութիւնը, այսինքն՝ անոր ընկալման պատմութիւնը: Այս հարցին նուիրած եմ կարճ գլուխ մը: Գուցէ կարելի է զայն ընդլայնել: Բայց նման պատմութիւն մը գրելու համար՝ հարկ է ուսումնասիրել մեր ամբողջ հին ու նոր գրականութիւնները, չբաւարարուիլ Նարեկի իբր թէ յայտնագործութեամբ, ԺԹ դարուն:

- Ո՞վ է Նարեկացին, արդեօք գուշակ, բժիշկ, ի վերջոյ հազարամեակի ընթացքում գիտենք օգտագործուել է որպէս բուժման միջոց, մինչեւ այսօր էլ բազմաթիւ ընտանիքներում Նարեկը սրբութիւն է եւ պահպանւում է իբրեւ Աղօթամատեան:

- Գուշակ. չգիտեմ, բայց դեղ, բուժիչ յատկութիւններ ունեցող մատեան՝ անկասկած, գոնէ Ձեր յիշած կերպով: Մատեանի մէջ դեղի թեման անդադար ներկայ է եւ առնչուած է փրկութեան հարցին: Նարեկի խօսողը Մատեանի խօսքը կը վերընծայէ Աստուծոյ, որպէսզի Ան այդ խօսքը վերածէ մաքրող, սրբող բանի: Սրբելէն կու գայ սրբութիւնը: Ինչ որ կը սրբուի՝ կ'անջատուի կեղտէն, եւ Մատեանը կարդացողը կը մտնէ հաղորդումի ծիրին մէջ: Նարեկացի խորհրդէս կը հաստատ խօսքի զօրութեան, ոչ թէ խօսքի կախարդական ուժին, այլ անոր բանական կարողութեան ազդելու մարդոց մտքին, հոգիին եւ մարմնին: Մարմին եւ հոգի, թող նշենք ինքնի եթէ ըսեմ, որ նոյնն են, ո՛չ թէ մէկ են, այլ նոյնը: Խօսքը, Նարեկացի անդադար կը կրկնէ ասիկա, ազդում է, կարող մեզ փոխելու, վերափոխելու: Գիտէք, հոգեվերլուծութեան մէջ, խօսքը նոյն հանգամանքը ունի: Մեղատրը երբ Նարեկի մէջ կը խոստովանի, կը յիշէ ու կը վերյիշէ իր մեղքերը՝ հետզհետէ կ'ազատագրուի ատոնցմէ: Նարեկի ամբողջ վերջաւորութիւնը ճիգ մըն է հասնելու այդ ազատագրումին, բայց ինչպէս ջանացած եմ ցոյց տալ՝ Մատեան ողբերգութեանը կը սկսի ու կը վերջանայ ամէն գլուխի, գրեթէ ամէն մէկ բանի աւարտին: Երբէք հարկը չկայ ամբողջը կարդալու, վէրքի մը պէս: Մատեանը վէրք մը չէ: Այնքան տարբեր գիրք մըն է անիկա, որ կարծէք չի նմանիր ոչ իսկ Նարեկացիի միւս երկերուն, ներբողներուն, Երգ երգոցի մեկնութեան կամ տաղերուն: Եթէ ներբողները կը թելադրեն մարդուն գեղեցկութիւնը, Մատեան ողբերգութեանը կը պատմէ անոնց գեղեցիկ գոյութիւնը:

- Շնորհակալութիւն զրոյցի համար, մինչ նոր հանդիպում, բարի ճանապարհ Ձեզ:

Զրուցեց ՎԱՀԱՆ ԱՌԵՏՆԵՆԸ



...ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՀԵՏ...

Սարգիս Խաչենց • Փրինթինֆո հրատարակչութիւնները համատեղ լոյս են ընծայել Փարիզի Արեւելեան լեզուների համալսարանի պրոֆեսոր, գրող, գրականագէտ Գրիգոր Պոլսեանի «Երկխօսութիւն Նարեկացիի հետ» աշխատութիւնը ('Իմացություն' գրադարան - էսթեթիկա, արվեստի տեսություն մատենաշար, 527 էջ, Երեւան, 2008թ.), որը հրատարակուել է Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան (հայկական բաժանմունքի տնօրեն՝ դոկտ. Զաւէն Եկաւեան) հովանաւորութեամբ:

Մեր զրոյցը Գրիգոր Պոլսեանի հետ վերաբերում է այդ գրքին:

Գրիգոր Պոլսեան եւ Գոհար Աճեմյան

Գրիգոր Նարեկացի
գործ՝ Արտո Չաքմաքչյանի

Տրամ հատորի սկիզբը նշած էի, որ Նարեկացին անշրջանցելի է: Ուստի՝ առաջին անգամ գրած եմ Գր. Նարեկացիի լեզուի սահմաններուն մէջ (1985, Վենետիկ), Մխիթարեան հայրերու ստեղծած շարքով:

Յաջորդ գիրքը գրած եմ շատ աւելի ուշ, 2000 թուականին, երբ արդէն ամբողջ տասնամեակ մը Լիոնի Աստուածաբանական համալսարանի հայկական «Գ. Կիւլպենկեան» ամբիոնի վարիչն էի: Այդ շրջանէն Նարեկացիի գործը տեսակ մը խաչմերուկ էր, բազմաթիւ թեմաներու առթիւ կ'անդրադառնայի, ինչպէս օրինակ արուեստի, երկի, գեղեցկութեան խնդիրներու առթիւ: Որով երկրորդ գիրքը՝ Ի գործ արկանել (2004, Մոնթրէալ) արդիւնքն է այս աշխատանքին: Ի հարկէ ուրիշ առիթներով ալ գրած էի յօդուածներ, Նարեկացիի գործերը՝ Մատեանը, Ճառերը, մանաւանդ Երգ երգոցի մեկնութիւնը գիս միշտ կը հետաքրքրէին, իմ մէջ կը պահէին իրենց տարօրինակ հմայքը: Այնքան ալ դիւրին չէ նման հմայքէ ազատագրուիլ, զայն չէզոքացնել:

Այս հատորին մէջ խմբուած են առաջին երկու գրքերս եւ բոլորովին անտիպ երրորդ մը: Հատորը ինքը պատուէր մըն էր Խաչենց •Փրինթինֆո հրատարակիչներէն, որոնք այսպէս ինծի առիթը կու տային ընթերցող հասարակութեան ներկայացնելու աշխատանքներս:

- Ինծ համար անակնկալ էր Արթօ Չամտաճեանի գծանկարները. ինչպէ՞ս յայտնուեցին գրքում:

- Ես տեսած էի Արթոյի քանդակները Մոնթրէալի արուեստանոցին մէջ, մանաւանդ Նարեկացիի «դիմանկար» մը, որ գիս շատ տպաւորած էր: Արդէն Ի գործ արկանել հատորի կողքին կար իր մէկ գծանկարը, յատուկ այդ գրքին համար: Արթոյի համար ալ Գրիգոր Նարեկացին մեր մշակոյթի եւ գրականութեան համար էական անձնաւորութիւն մըն է: Եւ քանի որ երկուքս ալ նոյն «պաշտամունք-հիացումը» ունինք՝ ոչինչ կ'արգիլէր որ նոյն հատորին մէջ գիր ու գիծ, գրութիւն եւ նկար հանդիպին իրարու: Անձնապէս նման ընկերակցութիւնը կը սիրեմ եւ կարծեմ նկարիչները իրենք ալ կը սիրեն իրենց գործերը տեսնել բանաստեղծներու էջերուն դիմաց: Անշուշտ աշխատանքներու միջեւ ո՛չ այնքան նոյնութիւն է պէտք, որքան տարբեր միջոցներով ոլորտի մը, իմացական կամ բանաստեղծական ոլորտի մը ձգտում: Պարզ է, Արթոյի գծանկարները իմ գրութիւններս չեն պատկերազարդեր, առանձին, լիարժէք գործեր են, քանդակագործի տեսանկիւնէ տեսնուած Նարեկացի մը տուող:

- Արդեօ՞ք տարօրինակ չէ, որ երկխօսութիւն էք սկսել մի մարդու հետ, որ ձայն չունի, որ չի խօսում, լուռ է, հազարամեակից աւելի:

- Ի հարկէ, «երկխօսութիւն» եզրը գրքի խորագրին մէջ յարակարծիք կը թուի, պարադոքս: Եւ սակայն անիկա կը կազմէ գրքի թեմաներուն ամենէն կարեւորներէն մէկը: Նարեկացի ինքք արդէն իր խօսքը Աստուծոյ ուղղելով

Սարոյան-100

Վիլյամ Սարոյան-

Ֆրեզնոյում երկու հայեր

Ի՞նչ է

Սկիզբը՝ նախորդ N167, 177 եւ 187, 197 , 207 համարներում

Մանուել Թոլեգյան- Քարի վրա ընկած սվերը, կամ որեւէ կարծր առարկայի վրա ընկած լույսի շողը, որ նաեւ սվեր է առաջացնում, ֆիզիկա՞ն երեւույթներ են:

Վիլյամ Սարոյան- Ինչ՞ան գիտեմ, այո:

Մ. Թ.- Իհարկե, համաձայն եմ: Ֆիզիկական երեւույթներ են: Բայց իմ մտքում հարց է առաջանում: Ինչո՞ւ պիտի այս ֆիզիկական երեւույթների հանդեպ արվեստագետի մտահոգությունն այդքան կարեւոր համարվի: Գաղափարներն էլ կարեւոր չե՞ն, ինչո՞ւ արվեստի ամբողջ «մտահոգությունը» պետք է առնչվի ֆիզիկականի, նյութականի հետ: Եթե որեւէ ֆանդակագործ քարի մի կտոր ֆանդակի, որի վրա լույսն ընկնի ոչ այն նույն ձեւով, որ ընկել է ասենք հույն ֆանդակագործի քարակտորի վրա, ինչո՞ւ պիտի այս «ձեռքբերումը» այդքան կարեւոր համարվի: Ինչո՞ւ ենք մենք ասվածացնում, պաշտամունքի առարկա դարձնում «նյութեղեն» այդ քարի կտորը, կամ նրա վրա ընկած լույսի շողը: Ինձ ճիշտ հասկացիր, չեմ ուզում նսեմացնել այդ ամենի կարեւորությունը, գուցե ես չեմ հասկանում դրա իմաստը, բայց ի՞նչ է նման գործի նպատակը, ի՞նչ է հաջողվում ձեռք բերել դրանով: Հենրի Մուրին ի՞նչ է հաջողվել հաղորդել՝ ինչպես ասացիր, «խորանալով հարցի էության մեջ»: Մի՞թե դրանով մենք դարձյալ «մաստերիան», նյութեղենը չենք փառաբանում, անտեսելով գաղափարը:

Վ. Ս.- Դե, ես ի նկատի ունեի, որ արտահայտչամիջոցը՝ ֆանդակը, ի՛նքը կհաղորդի այն, ինչ ասացի: Գիտակցում էի, որ գուցե ճշգրիտ չեմ կարողանում բնորոշել, բայց դա էլ արդեն լեզվական խնդիր է:

Մ. Թ.- Իմ ցանկությունը մեր անձնական հավանել-չհավանելու ոլորտից դուրս գալն էր, եւ մուտք գործել արվեստի գործերի ստեղծած գաղափարների աշխարհը, ննել դրանք ինչ-ման հնարավոր է օբյեկտիվ կերպով: Մի ֆանի որոշ առաջ նշեցի, թե հունական ֆանդակներում կերպարները իրականում խորհրդանշում էին հոգեւոր գաղափարներ: Այսինքն «իդեան», գաղափարն էր կարեւորը: Կերպարի վրա ընկած լույսը կամ նյութը, որից պատրաստված էր կերպարը (քարը, եւ այլն) նվազ կարեւոր էր: Դրանք սոսկ գաղափարը արտահայտելու միջոցներ էին: Կան, իհարկե, բազմաթիվ արտահայտչամիջոցներ, եւ որոշ գաղափարներ կարող են լավագույնս արտահայտվել միայն ֆանդակների միջոցով: Այնպես որ համաձայն եմ, որ երբեմն բառերը չեն կարող արտահայտել այն, ինչ ֆանդակը կարող է հաղորդել:

Վ. Ս.- Այո: Ավելացնելու բան չունեմ: Այդպես եմ իրականում ընկալում դրանք եւ հավատացած եմ՝ ֆանդակագործն ինքն էլ ցանկանում էր, որ այդպես ընկալեմ:

Մ. Թ.- Հասկանալի է: Անուղղակիորեն դու նշեցիր մի բան, որ արդեն որոշ ժամանակ է, ինչ ինձ հետաքրքրում էր, թե ինչու մարդ արարածն ստեղծել է արվեստի տարբեր ձեւեր, եւ ոչ թե լոկ բավարարվել միայն մեկով՝ արտահայտելու իր գաղափարները: Կարծում եմ պատճառն այն է, որ մենք կարող ենք «ընկալել», ինչպես նշեցիր, մեկը բայց ոչ մյուսը, սահմանել մեկից այն, ինչ չենք կարող սահմանել մյուսից:

Արվեստներից յուրաքանչյուրը՝ նկարչությունը, ֆանդակը, գրելը, պարը, թատրոնը, ուրույն ձեւով են հարստացնում մեզ, տարբեր ոլորտներով են մոտենում մեզ, տարբեր հույզեր արթնացնում մեր մեջ եւ տարբեր ձեւով լուսավորում կամ հաճույք պատճառում մեզ: Սա է երեւի պատճառը, թե ինչու Մուրի ֆանդակները այդքան հրապուրիչ ես գտնում: Որովհետեւ դրանք ինչ-որ բան են տալիս քեզ, բավարարում են քո մեջ մի բան, որը դու չես կարող բավարարել արվեստի մեկ ուրիշ ձեւով:

Վ. Ս.- Ճշմարիտ է: Ամեն անգամ, որ դիտում եմ Մուրի գործերից որեւէ մեկը, զգում եմ, որ իմ առաջ կանգնած է իսկական ֆանդակագործ, գուցե ոչ խոշորագույնը, բայց կարեւորագույններից մեկը: Այս միակ ֆանդակագործը, որին այս որոշեցի կարող եմ հիշատակել, եւ ասել, որ բացի ֆանդակներից ստեղծել է նաեւ մի շարք այլ հրաշալի բաներ եւ եղել է Հենրի Մուրի հակապատկերը, դա մեկ ուրիշ անգլիացի է՝ Էրիկ Գիլ անունով: Նա ե՛ւ գրող էր, ե՛ւ օդապարիկ նախագծող եւ բազմաթիվ այլ հետաքրքրական բաներ համադրող: Նրա ֆանդակները արվեստի կախարդանքն ունեն իրենց մեջ եւ մի տեսակ հավերժական են թվում...

Մ. Թ.- Այո: Ծանոթ եմ նրա գործերին: Նա նաեւ փորագրիչ էր, տառատեսակներ ստեղծող: Նրա գործերը, սակայն, բառացիորեն ֆանդակներ կոչելը երեւի սխալ կլինի: Նա օգտագործում էր, հատկապես իր խորամանդակներում, միեւնույն սկզբունքը, որ հույներն ու հռոմեացիներն էին օգտագործում, այսինքն՝ կերպարներն օգտագործում էր որպես խորհրդանիշ եւ ոչ թե իրականի սոսկ ընդօրինակում: Այդ խորհրդանիշերը, ինչպես հունահռոմեական ֆանդակների պարագայում, ճշգրտորեն էին արտահայտում Գիլի մտահղացումները, գաղափարները: Չնայած դրանք (այդ կերպարները) ծանոթ ու հասկանալի ձեւով էին ներկայացված, այդտեղերձ, կարողանում էին արթնացնել հոգեւոր վիճակներ, արտահայտել հոգեւոր իմաստներ: Դա է նրանց արժանիքը: Գիլը կարողանում էր քարը հոգեւոր իրի վերածել: Քարը նրա ձեռքերում դառնում էր սոսկ միջոց՝ ստեղծելու հոգեւոր գեղեցկություն:

Վ. Ս.- Ինձ համար ամենակարեւորն այն է, որ Գիլն ու Մուրը երջանկություն են պարգեւել ինձ, ավելացրել արդելու հաճույքը: Չգիտեմ, թե ուրիշների համար նրանք ինչ են կարողացել անել:

Մ. Թ.- Կարծում եմ բնական է, որ մեր ժամանակների արվեստագետների գործերում ես գտել բավականություն: Արվեստագետի համար միշտ էլ հաճելի է հասկանալի լինել եւ գնահատվել սերնդակիցների կողմից: Դժբախտաբար հաճախ չի պատահում դա:

Վ. Ս.- Կասկած չկա, որ Մուրի նման մեկը իր ազդեցությունը թողած պիտի լիներ երկրորդ կարգի ստեղծագործողների վրա:

Գլուխ VII

Մ. Թ.- Անկասկած, մենք նաեւ կդժվարանանք որոնելու պատճառները այն հարցի, թե ինչո՞ւ որոշ մարդիկ արվեստագետ են դառնում, ուրիշներ գող եւ այլն: Վստահ եմ, շատ պատճառներ կան, բայց կարծում եմ ամենաճիշտ պատասխանը իրենք՝ արվեստագետներն ու գողները կարող են տալ, յուրաքանչյուրն իր ուրույն նկատառումներով:

Սակայն հակված եմ մտածելու, որ վարպետ, պրոֆեսիոնալ արվեստագետն իր ժամանակը արվեստի բնագավառում չի ծախսի սոսկ անձնական պահանջները բավարարելու համար: Եթե այդպես վարվի, չեմ կարծում, որ կկարողանա հարատեւել որպես արվեստագետի: Նույնիսկ մի ֆանի ամիս էլ չի դիմանա: Արվեստով զբաղվելու, հարատեւելու համար արվեստագետը արժեքավոր մի բան պետք է ներդնի իր ապրած հասարակության մեջ: Դու արել ես դա: Ես փորձել եմ անել: Ուրիշներ աշխատում են այդ ուղղությամբ: Եվ խնդրեմ Բիլ, գույնի սահմանումը տալ, վստահեմ կդժվարանաս ճշգրիտ բառերը գտնել, մինչդեռ նկարչության մեջ գույնն ու ձեւը, որեւէ առարկայի արտաքին տեսքն ու գունային երանգավորումը մշտական, պարտադիր գործոններ են:

Վ. Ս.- Համաձայն եմ, կդժվարանայի գույնի սահմանումը տալ:

Վերջիններս, ձեւի եւեւից ընկնելով, նվազեցնելու, նսեմացնելու էին արժեքը իրենց ստեղծագործությունների՝ թույլ տալով ընդօրինակելիս բազում սխալներ, անճշտություններ գործել: Սա ամեն բնագավառում է տեղի ունենում: Մինչդեռ ձեւը չէ կարեւորը: Իսկական արվեստը պատեհությունների արդյունքը չէ:

Մ. Թ.- Չեմ կարծում, որ գաղափարներ, լավ, իմաստուն գաղափարներ ունեցող մարդը երբեւէ կարիք ունի ընդօրինակելու մեկ ուրիշի գործերը, չնայած համաձայն եմ, որ նույնիսկ «ամենաօրիգինալ» գաղափարներն անգամ կարող են իրենց «տարբերակներն » ունենալ: Այն բառերը, որ մենք հիմա օգտագործում ենք, ստեղծվել եւ օգտագործվել են դարեր առաջ այլ մարդկանց կողմից:

Նույնն է նաեւ նկարչության ասպարեզում: Ներկերը, գույները, պատկերները եւ ձեւերը, որ մենք օգտագործում ենք այսօր, ստեղծվել են դարեր առաջ հնարամիտ հանճարների կողմից: Ժամանակակից եւ նախկինում ապրած արվեստագետների միջեւ գոյություն ունեցող հիմնական տարբերությունն այն է, որ ներկայիս ապրող եւ ստեղծագործող արվեստագետի տեսադաշտում մեր ժամանակներն են, մեր դարաշրջանը: Եվ եթե նրա մտքում գաղափարները ծնվում են մեր առօրյա կյանքի գեղեցիկ եւ տգեղ երեւույթներից, կատակերգություններից եւ ողբերգություններից, ապա նա հազիվ թե կարիքն ունենա ընդօրինակելու որեւէ ուրիշ արվեստագետի գործ: Իր նկարածը լինելու է ինքնուրույն, անկախ նրա օգտագործած ձեւից կամ ոճից:

Վ. Ս.- Այժմ տեսնենք, թե ինչպես կկարողանանք քննարկել մի հիմնական հարց, որն ի մի կբերի, միմյանց կկապի այն ամենը, ինչ մինչեւ հիմա ասում էինք:

Մ. Թ.- Կարծում եմ այդ հարցը հետեւյալն է՝ ի՞նչ նպատակներ է հետապնդում արվեստը: Ինչո՞վ է նա ծառայում մարդկանց: Ես արդեն պատասխանել եմ, որ նկարչության մեջ, օրինակ, ինչպես այլ արվեստներում, արվեստագետի գլխավոր նպատակն է հայտնաբերումը, մեր ապրած աշխարհի բացահայտումը: Արվեստները, յուրաքանչյուրն իր ձեւով, ինչ-որ բան հայտնաբերում են. բացահայտում ապրելու կենսական ձեւերը, գործողությունները, «դրաման», մարդու եւ բնության համակեցության ամբողջ «ցիկլը»: Այնպես որ, արվեստները, այս կամ այն ձեւով, ծառայում են՝ արդկանց լուսավորելու, տեղեկացնելու այն ամենի մասին, ինչը նրան պիտանի է, մտահոգում է եւ կամ հետաքրքրում է:

Նկարչության մեջ կյանքի այս դրաման ընկալվում է տեսողական միջոցներով: Այդ պատճառով էլ նկարչությունը յուրահատուկ, եզակի դեր է կատարում արվեստների մեջ:

Կյանքի շատ երեւույթներ ներկայացնելու ամենաարդյունավետ միջոցը տեսողականն է: Նկարչությունը **ձեւի** եւ **գույների** միջոցով տալիս է այդ հնարավորությունը: Եթե քեզ



պատճառը, որ մենք բոլորս «դիմացել» ենք մեր բնագավառներում, առավել կամ նվազ չափով, այն է, որ այն, ինչ «արտադրել» ենք, պիտանի է եղել հասարակությանը, բավարարել է նրա էսթետիկական ամենազգայուն պահանջները: Իհարկե ոչ բոլոր մարդկանց, դա անհնարին կլիներ: Բայց որոշ խումբ մարդկանց: Հասկանում եմ նաեւ, որ բացառություններ, անշուշտ, կան: Որոշ արվեստագետներ երբեմ էլ չեն հասկացվել հասարակության կողմից, չեն գնահատվել իրենց կենդանության օրոք: Բայց պատմականորեն, մեծ նկարիչներ են եղել նրանք, ովքեր ամենաբատն են նպաստել ե՛ւ հասարակությանը, ե՛ւ արվեստին: Հետեւաբար նաեւ իրենք իրենց: Նրանք լավ են վաստակել: Նրանցից ոմանք, Ռուբենսը, Տիցիանը, Վելասկեզը միլիոնատեր են դարձել մեր ժամանակների չափանիշներով: Չպետք է ուրեմն մոռանանք, որ արվեստագետը գիտակցաբար թե անգիտակցաբար պատասխանատվություն է կրում՝ ծառայելու հասարակությանը, եւ իր ներդումը, իր լման չափազանց կարեւոր է: Նույնը կարելի է ասել հասարակությունում աշխատող բոլոր մարդկանց մասին:

Այժմ վերադառնանք այն հարցին, որ արվեստը հիմնականում գյուտարարություն է, հնարք, եւ ինչպես բոլոր հնարքները կամ գյուտերը ծնվում են անհրաժեշտությունից ելնելով: Երբ այդ անհրաժեշտությունը, կարիքը բավարարվում է, մենք բոլորս օգտվում ենք այդ «ներդրված լումայից»: Կարծում եմ՝ հիմամիտ կլինես ինձ հետ այն հարցում, որ լավ ճաշը, ստեղծագործաբար պատրաստված սննդարար ճաշը նույնպես արվեստի գործ է, ստեղծագործություն: Ես կասեի ապրելու հաճույքին նպաստող արժեքավոր ներդրում: Բայց երբ քննում ենք կամ խորանում ներքին ազդակների մեջ, որոնք մղել են խոհարարին՝ այդքան ժամանակ տրամադրելու եւ պատրաստելու այդքան համով ճաշատեսակ, ապա կտեսնենք, որ այդ խթանիչ ազդակը ընդամենը նրա ցանկությունն է՝ գոհացնելու, լրացնելու ինչ-որ մի պակասություն, կարիք: Լավ խոհարարները, նկատել եմ, նույնքան, եթե ոչ ավելի, հաճույք են ստանում դիտելով, թե ինչպես են մարդիկ ախորժակով ուտում իրենց պատրաստած ճաշատեսակը, որքան՝ իրենք: Համաձայն չե՞ս, որ նման մարդիկ ինչ-որ բան, լրացուցիչ հրապուրանք են ավելացնում ապրելու մեր հետաքրքրություններին, եռանդին, տենչանքին:

Վ. Ս.- Լիովին համաձայն եմ: Արվեստի, ինչպես բոլոր մյուս լավ բաների, ֆունկցիան հետաքրքրական, աչալուրջ հսկողություն սահմանելն է, դինամիկական «գրոհ» կազմակերպելն է ամեն ինչի վրա, հանուն ավելի մեծ, ավելի խորը բացահայտումների: Կարծում եմ՝ սա՛ պիտի լինի մեր մտահոգության առարկան: Դա է արվեստի էությունը: Եթե գույների մասին, օրինակ, մենք շատ նոր բան չենք կարող ասել այլեւս, պատճառն այն է, որ բավարարված չենք մակերեսային սահմանումներով կամ բացատրություններով: Ինչքան խորանում ես նյութի մեջ, այնքան դժվար է դառնում ճշգրիտ բնութագրումներ տալը: Եզրակացությունն այն է, որ անհրաժեշտության կարիքի այդ գործընթացը պետք է

շարունակական, հարատեւ լինի: Ինչքան շատ ենք իմանում, շատ ենք բացահայտում, այնքան շատ է մնում իմանալու, բացահայտելու: Խորությունը գնալով ավելանում է: Այլ խոսքերով, ինչքան խորանում ենք, այնքան բարդանում է պատասխաններ գտնելը: Հետո հարցերին պատասխանելն այլեւս անիմաստ է դառնում: Դա անում ենք պարզապես, որովհետեւ ավելի լավ է, քան ոչինչ չանելը:

Մ. Թ.- Ես այն դրական կարծիքին եմ, Բիլ, որ յուրաքանչյուր մարդ իր առօրյա աշխատանքը կատարելով՝ մեզ բոլորիս ավելի է մոտեցնում մեր կյանքի իրականություններին:

Վ. Ս.- Նա կարող է ուղղակի թե անուղղակի ձեւով պատասխանատու լինել կամ նպաստող գործոն հանդիսանալ արվեստի որեւէ մեծ գործի ստեղծմանը: Չնայած պատահում է նաեւ, որ արվեստի մեծ գործեր ստեղծվեն սովի ու կարիքի պայմաններում:

Մ. Թ.- Անշուշտ: Սովը պատճառ դարձած է լավ ուսեսներ «հնարելուն»: Անկասկած, մեր այսօրվա ճաշատեսակների մեծ մասը դրա հետեւանքով է առաջ եկել: Սկզբում գուցե դրանց, այդ նոր ճաշատեսակների համտեսելը սխալ է համարված կամ փորձություն, բայց հետագայում նրանց օգուտը եւ սննդարարությունը գիտակցված է, եւ մարդիկ սկսած են հաճույքով օգտագործել դրանք: Վստահ եմ՝ կհիշես մեր պատանեկության տարիները Ֆրեզնոյում, երբ մարդիկ կարծում էին, որ լոլիկը թունավոր ուտելիք է: Շատերը հրաժարվում էին լոլիկ ուտելուց: Հիմա տարօրինակ է հնչում, բայց արի խոստովանենք, որ առաջին լոլիկ ուտողը ոչ միայն խիզախ մարդ պետք է եղած լիներ, այլեւ մտածող, ստեղծագործող հնարող: Կարելի է նաեւ նրան բնութագրել որպես «խաղցած անհատականություն»: Ինչեւէ: Ինձ համար հետաքրքրական էր խոսքիդ մեջ սովի մեջբերումը որպես խթան, մղիչ ուժ՝ բարձրարժեք արվեստի գործ ստեղծելու: Դու դա՞ի նկատի ունեիր:

Վ. Ս.- Կարծում եմ բոլորիս մեջ էլ կա այսպես կոչված «անխուսափելիության ծարավ» կոչվածը, կամ ծարավը հանդեպ կյանքում կատարվելիքի, անխուսափելի ելքի: Երեկ մեր ընկերներից մեկը Գյոթե էր արտասանում, «Չգիտեմ ինչո՞ւ, տխուր եմ» բանաստեղծությունը: Հավանաբար դա մի երեխայի մասին էր, որ ինչ-որ բան էր ասում գերմաներենով, որը գուցե անգլերենով անիմաստ թվա: Բայց մեր այդ ընկերը փորձում էր բացատրել, թե դա ինչ խորը իմաստ ուներ գերմաներենում: Պետք է որ բոլոր մարդկանց մեջ «անորոշությունների», «անհայտի» հանդեպ ծարավ, մշտական, անհագ, հարատեւ ծարավ գոյություն ունենա, եւ մարդ անհատի

Մասնաբաժնեգրություն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից մասնավորեցման կամ օտարման ներկայացվող պետական գույքը գնահատելու համար գնահատող կազմակերպության (անկախ գնահատողի) ընտրության նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հայտարարում է մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործունեություն իրականացնելու լիցենզիա (թույլտվություն) ունեցող առեւտրային կազմակերպությունները, որոնք բավարարում են հետեւյալ պահանջներին.

- կազմակերպությունում ունեն գնահատման գործունեություն իրականացնելու լիցենզիա (թույլտվություն) ունեցող առնվազն 1 (մեկ) աշխատակից,
- ունի գնահատման բնագավառում իրականացված գործառույթների առնվազն 2 (երկու) տարվա փորձ:

Մրցույթի մասնակիցները պետք է մինչեւ սույն թվականի դեկտեմբերի 23-ը, մինչեւ ժամը 13-00-ն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն (4-րդ հարկ, 438 սենյակ) ներկայացնեն վերոնշյալ պայմանները հավաստող համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաեւ

- իրենց կողմից մատուցվող ծառայությունների սակագները՝ անշարժ գույքի, հողատարածքի, շարժական գույքի, ընկերության բաժնետոմսերի գնահատման սակագները ներկայացնելով առանձին-առանձին,
- տեղեկանք գնահատման ընթացքում իրենց կողմից օգտագործվող մեթոդների, դրանց ընտրության վերաբերյալ,
- տեղեկանք իրենց կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ՝ նշելով դրանցից առավել ծավալուններ եւ հաջողվածների մասին:

Մրցույթի հաղթողի կատարած աշխատանք(ներ)ի դիմաց վճարումները կիրականացվեն տվյալ պետական գույքի մասնավորեցման կամ օտարման գործարքը կնքելուց հետո:

Մրցույթը կայանալու է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը 16-00-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության շենքում (հասցեն՝ ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, 3-րդ հարկ, 321 սենյակ):

Մատուցվող ծառայությունների ծավալների, մեկնարկային սակագների եւ այլ տեղեկությունների համար զանգահարել 527635 հեռախոսահամարով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1242-Ն որոշման, «ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված օտարման ենթակա տրանսպորտային միջոցը

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տ/թ.	Գնահատված արժեքը 08.09.08թ. դրությամբ /դրամ/	12.12.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	12.12.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	29.12.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	29.12.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	13.01.09թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	13.01.09թ. աճուրդի նախավճար /դրամ/	29.01.09թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	29.01.09թ. աճուրդի նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ԳԱԶ-24-10» (պետհամարանիշը՝ 783LL 64, թափքը՝ 1371186)	1990թ.	262500	262500	13125	210000	10500	168000	8400	134400	6720

Հ/Հ	Գույքի անվանումը	13.02.09թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	13.02.09թ. աճուրդի նախավճար /դրամ/	02.03.09թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	02.03.09թ. աճուրդի նախավճար /դրամ/	17.03.09թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	17.03.09թ. աճուրդի նախավճար /դրամ/	01.04.09թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	01.04.09թ. աճուրդի նախավճար /դրամ/	16.04.09թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	16.04.09թ. աճուրդի նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ԳԱԶ-24-10» (պետհամարանիշը՝ 783LL 64, թափքը՝ 1371186)	107520	5376	86016	4301	68813	3441	55051	2753	44041	2203

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1242-Ն որոշման ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր, դրանում նախատեսելով, որ աճուրդի հաղթողը պարտավոր է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված 18000 դրամ վճարը՝ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:00-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղը), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը թի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00), զանգահարելով Հովհաննես Հունանյանին 22-56-64 կամ 093-58-64-95 հեռախոսահամարներով: Ավտոմեքենան գտնվում է ք. Երեւան, Հր.Քոչարի 4 հասցեում:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս մեկ օրվա ժամկետում դիմելուց հետո:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան,Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝ 2008Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ, 2009Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ, «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 03.08.06թ. թիվ 1239-Ն որոշմամբ լուծարվող «Մեղրու գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ-ի (հասցեն՝ Սյունիքի մարզ, ք.Մեղրի) հաշվեկշռում գտնվող գույքը՝

N	Գույքի անվանումը	Թողարկման տ/թ.	Քանակը /հատ/	Գնահատված մեծությունը (ներառյալ ԱԱՀ-ն) դրամ	Մեկնարկային գինը (ներառյալ ԱԱՀ-ն) դրամ
1	տեմբեր ու շինություններ՝ որոնց մեկ ամբողջական միավոր	2700000	2700000		
	այդ թվում՝				
	Տնակ (43,3ք.մ.)				
	Տնակ (42,2ք.մ.)				
	Ավտոտնակ (43,9ք.մ.)				
	Շինություն (7,2ք.մ.)	1988թ.	1	120000	120000
2	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-315112-01» (պետ АДЗ 17-67)	1990թ.	1	220000	220000
3	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-3303» (պետ АДУ 98-11)	1985թ.	1	30000	30000
4	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-3303-01» (պետ АДЭ 50-99)				

* 1-ին լոտի գնորդը պարտավոր է աճուրդի արձանագրությունն ստանալուց հետո, սահմանված կարգով համապատասխան հաշվին վճարել հողի կադաստրային արժեքը՝1304160 դրամ:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդող աշխատանքային օր, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է 1- ին լոտի համար 135000դրամ, իսկ 2-րդ - 4-րդ լոտերի համար 15000 դրամ: մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարվել նաեւ կանխիկ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) մինչեւ աճուրդի նախորդող աշխատանքային օր, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մեկից ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից, իսկ լոտի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթած մասնակիցներին, մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմումի դեպքում,:

Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել (091) 26-11-92 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4դ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հայտարարում է բաց մրցույթ՝ «Նարինե Պանսիոնաս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

«Նարինե Պանսիոնաս» փակ բաժնետիրական ընկերության (ք.Հրազդան, գ.Ագարակ (Արզական)) գործադիր տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- մեկ լուսանկար 3/4 չափի,
- խղճամիտ աշխատանքային գրքույկից,
- ինքնակենսագրություն,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- տեղեկանք մշտական բնակության վայրից,
- հրաժարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
- բնութագիր վերջին աշխատանքի վայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- արական սեռի անձանց համար՝ նաեւ զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր եւ զորակոչային տեղամասին կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթն անցկացվում է մասնակցի անմիջական մասնակցությամբ փաստաթղթային ուսումնասիրության եւ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին մասնակցելու թույլտվություն ունեն այն անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ունեն մրցույթին մասնակցելու իրավունք, համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն եւ ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային սպասք:

Հանձնաժողովը խղճամիտ չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել եւ լսել նաեւ մրցույթին մասնակցելու համար դիմած խղճամիտ անդամի կողմից: Եթե մասնակցի կողմից պետք է հնչեցվի ճիշտ պատասխանը կամ տվող անդամի կողմից պետք է հնչեցվի ճիշտ պատասխանը:

Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն ավարտելուց հետո անցկացվում է քվեարկություն՝ հանձնաժողովի նախագահի կողմից կնքված եւ ստորագրված քվեաթերթիկների միջոցով:

Քվեարկության արդյունքում ընդունված է համարվում այն որոշումը, որն ստացել է հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները, իսկ հավասար ձայների դեպքում՝ մասնակցի համար առավել նպաստավորը:

Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, ապա այդ մասին տեղյակ է պահվում վարչության պետին եւ նշանակվում է կրկնակի մրցույթ:

Մրցույթին չեն կարող մասնակցել այն անձինք, ովքեր՝

- դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ընդգրկված հիվանդություններից որեւէ մեկով, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը եւ լիազորությունների իրականացմանը,
- դատապարտվել է հանցագործության համար եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,
- օրենսդրությամբ իրավունք չունի զբաղեցնել որոշակի պաշտոններ կամ զբաղվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից,
- նախորդ երեք տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված եւ կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար,
- խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթը անցկացնելուց հետո նույն օրը՝ անմիջապես:

Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումների (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացման վերջին ժամկետն է 2008թ. նոյեմբերի 28 -ը, ժամը 13 00-ն:

Դիմումները պետք է ներկայացվեն՝ ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, քարտուղարություն:

Մրցույթը կանցկացվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում (ք.Երեւան, Տիգրան Մեծի 4), 2008թ. դեկտեմբերի 29 -ին, ժամը 14 30-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, կամ զանգահարել 52-35-36 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝ 2008 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ԺԱՄԸ 12:00-ԻՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ,Դ.ԱՆՀԱՂԹԻ 23/4-ՐԴ ՀԱՐԿ)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 2-ի թիվ 1106-Ն որոշմամբ մասնավորեցման ենթակա գույքը

N	Անվանումը	Գույքի գնահատված արժեքը 21.05.08թ. դրությամբ (դրամ)	Գույքի մեկնարկային գինը (դրամ)
1.	ՀՀ Տավուշի մարզի Մոսեսգեղ գյուղում գտնվող 5470.1 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող դպրոցի անավարտ շինարարության օբյեկտ (դպրոցի կիսակառույց 2 մասնաբենքերը, կաթսայատան եւ ենթակայանի շինությունները)	558000	558000

* Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Բերդի տարածքային ստորաբաժանման 20.04.08թ. թիվ 10 դրության, անավարտ շինարարության ավարտվածության աստիճանը «մինչեւ 50%»:

** Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 2-ի թիվ 1106-Ն որոշման՝

- ածուխի հաղթողին է մասնավորեցվում նաեւ գույքին հատկացված 0.65 հեկտար հողատարածք՝ իր կադաստրային արժեքով:
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը ածուխի հաղթողի կողմից առաջարկված գնի եւ հողամասի կադաստրային արժեքի վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնողը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված 61800 դրամ վճարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարները ու տուրքը՝ օրենքով սահմանված կարգով:

Աճուրդը կանցկացվի դասական եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել այն մասնավորեցման սուբյեկտները, որոնք մինչեւ 2008 թ. դեկտեմբերի 1-ը, ժամը 17:00 «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն ներկայացրել են՝

- աճուրդի մասնակցության հայտը,
- ընկերության հիմնադիր փաստաթղթերի պատճենները, եթե հայտ ներկայացնողը ընկերություն է,
- աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, մասնակցության վճարի չափն է 27900 դրամ, վճարները մուտագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025:

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է 5000 դրամ, աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար (դիտորդների) տոմսի գինն է 3000 դրամ:

Հայտերն ընդունվում են (տոմսերը վաճառվում են) մինչեւ 2008 թ. դեկտեմբերի 1-ը, ժամը 17:00, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23, IV հարկ), իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Առավելագույն արժեքն առաջարկած թեկնածուն աճուրդավարի կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո ճանաչվում է աճուրդի հաղթող եւ պարտավոր է (30 րոպեի ընթացքում) վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 %-ի չափով գումար, որը մասնակցության վճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում եւ փոխանցվում է մասնավորեցման հատուկ հաշվին:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել աճուրդային հանձնաժողովին՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23, IV հարկ հասցեով կամ զանգահարել 23-73-00 հեռախոսահամարով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2008թ. դեկտեմբերի 2-ին, ժամը 11:30-ին «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում, հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 25-ի թիվ 1075-Ն որոշմամբ մասնավորեցվող ներհոիիջալ բաց բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը

N	Ընկերության անվանումը	Ընկերության կանոնադրական կապիտալը (դրամ)	Ընկերության զուտ ակտիվները (դրամ)	Ընկերության ընդհանուր բաժնետոմսերի քանակը (հատ)	Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը (դրամ)	Մասնավորեցման ենթակա պետական բաժնետոմսերի			Մեկ բաժնետոմսի մեկնարկային գինը	Ընկերության պարտավորությունները (հազ.դրամ)
						բաժնեմասը ընկերության կանոնադրական կապիտալում (%)	քանակը (հատ)	արժեքը (դրամ)		
1	Առարատի «Բերրիություն» ԲԲԸ	6600000	6076000	1320	5000	34	449	2245000	2500	առ 01.01.08թ.՝ 1200, այդ թվում՝ կարճ. կրեդ. պարտք պետ. բյուջեի մ՝ 73, պարտավ. անձնակ. աշխատանքի վարձ. գծով՝ 395, սոց ապահ.. գծով՝ 252, կարճ. կրեդ. պարտք մասնակիցներին (հիմնադիրներին)՝ 286, այլ կրեդ. պարտավորութ.՝ 140, եկամուտ.վերաբերող շնորհներ՝ 54

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 25-ի թիվ 1075-Ն որոշման՝

- բացի նշված պարտավորություններից մասնավորեցումից հետո այլ պարտավորություններ ի հայտ գալու դեպքում վաճառողը պատասխանատվություն չի կրում:
- Առարատի «Բերրիություն» բաց բաժնետիրական ընկերությունը 1999-2007 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահութաբաժինների գծով պարտավորություններ չունի:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը բաժնետոմսերի վաճառքի գնի վճարումից հետո երկամսյա ժամկետում գնողի հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել մասնակցության իրավունք ձեռք բերած մասնավորեցման սուբյեկտները կամ նրանց կողմից լիազորված անձինք:

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք մինչեւ 2007թ. հուլիսի 9-ը, ժամը 17:00 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) են ներկայացրել՝

- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը (աճուրդի նախավճարի չափն է՝ 112250 դրամ,
- իրավաբանական անձինք ներկայացնում են հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

Նախավճարի մուտագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025:

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է 5000 դրամ, աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդների) տոմսի գինն է 3000 դրամ:

Աճուրդում հաղթողը պարտավոր է տեղում (30 րոպեի ընթացքում) վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 %-ի չափով գումար, որը նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ սահմանված ժամկետում (10 օրվա ժամկետում), հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, զանգահարել 23-73-00 հեռախոսահամարով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Մարոյան-100

Մանուել Թոլեգյան.

Զրուցում են արվեստի շուրջը

Ակարշությունը

պարտականությունն է բացահայտել այդ ծարավը, իմանալ, թե իր մեջ բուն դրած այդ ծարավը ինչի՞ հանդեպ է: Հենց նա կարողանա ճշտել դա, կդառնա արվեստագետ, կդառնա մեծություն: Այն մարդը, որ չի կարողանա բացահայտել՝ դատարկված է մշտապես ափոթմունքի, անորոշության մեջ ապրելու: Արվեստագետն իր կարողությունների սահմաններում հասկանալով իր ներքին ծարավը, ամեն ջանք թափում է հագեցնելու այն: Եվ եթե նույնիսկ նրան չի հաջողվում այդ բանն անել, լիովին հագեցում տալ, ապա ծարավի ուղղվածության գիտակցությունն անգամ բավական է, որ նա իմաստուն քայլերի դիմի: Իսկ իր ծարավի ուղղվածությունը չգիտակցողը չի կարող հետաքրքիր անձնավորություն լինել: Նապոլեոնը լավ օրինակ կարող է ծառայել ասածիս համար: Նա հավատում էր, որ ծարավ է իշխանության, նվաճումների: Բայց չէր գիտակցում այդ ծարավի պատճառները, դրա համար էլ...

Մ. Թ.- Դրանք տրամաբանական պատճառներ չէին...

Վ. Ս.- Այո, տրամաբանական չէին եւ այդ պատճառով էլ չէին կարող հագեցնել իր ծարավը:

Մ. Թ.- Մի՞թե առեղծվածային չէ այս բոլորը:

Վ. Ս.- Առեղծվածայի՞ն: Ամեն ինչ, որ մարդ էակի հետ է առնչված, առեղծվածային է եւ շարունակելու է մնալ այդպիսին, մինչեւ մարդ արարածը դադարի գոյություն ունենալ:

Մ. Թ.- Ճիշտ է: Կարո՞ղ ենք այժմ վերադառնալ իմ նախորդ հարցին, որն է՝ ի՞նչ է քո կարծիքը արվեստներում հմտությունների կարեւորության վերաբերյալ: Անհրաժե՞շտ են որոշակի հմտություններ, ասենք, գրելու արվեստում: Եթե այո, որո՞նք են դրանք:

Վ. Ս.- Կարծում եմ հմտություններն անհրաժեշտ են նույնիսկ ընչելիս: Ոչ մի գործողություն, մտահղացում, ցանկություն, դիտավորություն առանց դրան չի կարող տեղի ունենալ: Այլ խոսքերով, դիտավորությունն ու հմտությունը, այդ դիտավորությունը գործի դնելու վարպետությունը սերտ կապի մեջ են միմյանց հետ: Դիտավորության մեջ առաքինություն պետք է լինի: Եթե մի բան ես ուզում անել, պետք է փորձես լավ անել այդ բանը: Դա էլ հենց կա՛տարողական «տեխնիկան» է, հմտությունը:

Մ. Թ.- Հրաբալի սահմանում տվեցիր: Բայց ցանկանում եմ ավելի կոնկրետ, որոշակի բնութագրել: Այդ կատարողական տեխնիկան ձեռք բերվի՞ է: Արվեստագետներն իրե՞նք են ստեղծում այդ տեխնիկան: Ինչպե՞ս կարետր է դա:

Բոլորս էլ տեսել ենք երեխաների նկարած նկարները: Դրանցում անհատականության բնական կարողությունների վառ դրսեւորումներ կան: Որտեղի՞ց են դրանք գալիս:

Վ. Ս.- Երեխան կամ երեխայանման անձնավորությունը մեծ, հսկայական առավելություն ունի...

Մ. Թ.- Ուզում ես ասել երեխան որոշակի «տեխնիկա» է գործի դնում...

Վ. Ս.- Այո:

Մ. Թ.- Շատ լավ:

Վ. Ս. - Այո, այդ «տեխնիկան» կա, բայց դեռ մշակված չէ: Ես պատրաստվում էի խոսել դրա առավելությունների մասին: Երեխայի իմաստության, գաղափարների սահմանափակվածությունն է, որ հետաքրքրական է դարձնում իր ասածն ու ստեղծածը, մտքերի ու պատկերների միջեւ եղած հարաբերությունները: Երեխան հազիվ թե անհետաքրքրական, ձանձրալի բան կատարի կամ ասի, եթե ինքնուրույն է գործում եւ չի զգնվում, ասենք, դպրոցի կամ դրա նման «կաբկանդող» միջավայրում: Նա ամեն ինչ լավ է կատարելու: Լավ է նկարելու, լավ է պարելու, այն իմաստով, որ կատարածը անաղարտ է լինելու, չմշակված, չուղղորդված, ինքնաբուխ: Ճիշտ է, մենք հարգում ենք մշակվածը, դրա կարիքն ունենք, բայց նրանն էլ ի՛ր առավելությունն ունի, որ անմեղությամբ է պատված, այսպես ասած հմայք ունի, հրապուրանք եւ բերեն դա ավելի մեծ իմաստություն է կրում իր մեջ, քան մեծահասակների «մշակված» գաղափարները...

Մ. Թ.- Որովհետեւ չգիտակվա՞ծ է, անմիջա՞կան, տարերայի՞ն...

Վ. Ս.- Որովհետեւ պատահականությունից է ծնվում: Դա է կարծեմ ճիշտ բառը: Պարզապես տեղի է ունենում:

Մ. Թ.- Կարելի՞ է ասել, որ դրանում բնազդը դեր է կատարում, թե՞ զուտ պատահականության արդյունք է:

Վ. Ս.- Այո, զուտ պատահականության արդյունք է: Երեխան կարող է անհավասալիորեն խելացի խոսքեր ասել, որոնք առաջին հայացքից անճշտություններ կարող են թվալ, «համով» անճշտություններ: Բայց հետո, ավելի ուշ դրանք խորը իմաստ են ձեռք բերում, ճշմարտություն են դառնում: Երեխան, օրինակ, կարող է ասել. «Անմիջապես որ մահանամ, վերադառնալու եմ եւ ձեզ այցելության եմ գալու»: «Գրողը տանի, ի՞նչ է խոսում այս երեխան» կասես առաջին տպավորության տակ, «ինչո՞ւ պետք է մահանա նախքան քեզ այցելելը», բայց հետո երկար խորհրդածելու արդյունքում կարող ես պարզել, որ իմաստ ունի ասածը:

Մ. Թ.- Ես այն մտքին եմ, որ երեխայի կարողություններն ու գործողությունները սոսկ պատահականության արդյունք չեն, չնայած դրանց «տեխնիկան» անաղարտ, չմշակված եւ չուղղորդված կարող է լինել: Հավատացած եմ, որ բնածին կարողություններն ու բնազդային գործոնները դեր ունեն նրա դրսեւորումներում: Ես այս մոտեցումը հատկապես ճիշտ եմ համարում երեխաների նկարած կտավների պարագայում: Բոլոր երեխաների կտավները չէ, որ ունեն արտահայտության այդ հրապուրանքն ու մաքրությունը, ինչպես նշեցիր: Պատճառն, իմ կարծիքով այն է, որ որոշ երեխաներ նույնքան օժտված չեն՝ բնազդայնությամբ, որքան մյուսները: Նվազ տաղանդավորները անիմաստ նկարներ են հորինում: Եթե բնական, բնածին կարողությունները անկարեւոր լինեին, երեւի բոլորն էլ մեծ նկարիչներ կդառնային:

Հասկանում եմ, որ որոշ դեպքերում երեխաները դպրոցներում երբեմն չափից ավելի եռանդուն դասատուների ազդեցության տակ կարող են «գեր»-ուսուցում, «գեր»-միջամտություն ստանալ եւ կորցնել իրենց բնական «ածի», ինքնուրույն ստեղծագործելու ունակությունը: Այստեղից, կարծում եմ վարպետության դասեր տալը, «տեխնիկայի» կիրառման չափավոր հմտություններ ձեւավորելը չափազանց արդյունավետ են երեխաների համար: Լավ կտավներ ստեղծելը արհեստին լավ ծանոթ լինելու արդյունք է: Այնպես որ եթե մենք տեսնում ենք, որ երեխան նկար է նկարում, եւ այդ նկարը բացառիկ լավ է ստացվում, դա պետք է բացառություն համարենք եւ ոչ թե օրինաչափություն:

Դա զուտ պատահականություն էլ չէ: Ես դա կանվանեի «բնազդային ձեռնհասություն»: Հիշո՞ւմ ես անցյալ օրը մեր բակի ծառերի վրա ծվարած բուերի մասին մի օրինակ բերեցի, թե ինչպես մութ գիշերին նրանք երկինք են բարձրանում եւ պտտվում-պտտվում մինչեւ նկատում են իր «որջից» հազիվ դուրս եկած թափառամկանը եւ անմիջապես նրանցից մեկն ուղիղ գծով սլանում է դեպի նա եւ վայրկենապես որսում նրան: Ես դա «տեխնիկա» եմ անվանում, կատարողական արվեստ, վարպետություն, մեծ բնազդային ունակություններ կշռադատված գործադրություն եւ նպատակի իրագործում:

Սերո Խանզադյանը, Վիլյամ Սարոյանը, Հովհաննես Շիրազը, Վահագն Դավթյանը:

Գլուխ VIII

Մ. Թ.- Կարծում եմ, լավ է, որ մեր քննարկումները երբեմն կիսավարտ են մնում, որովհետեւ դա մեզ հնարավորություն է տալիս վերստին անդրադառնալու դրանց եւ նոր անկյունից դիտարկելու: Մեր խոսակցություններից մեկի ժամանակ նշեցիր, որ «գաղափար» բառը ունի էսթետիկական նշանակություն, որ դա էսթետիկական հասկացություն է: Համաձայն եմ դրան, բայց մենք ուղղակիորեն չենք քննարկել այդ հարցը: Ուստի ճիշտ կլինի գուցե այս անգամ անդրադառնալ դրան:

Վ. Ս.- Շատ լավ, Մանուել: Կարծում եմ ինչպես մեզ, այնպես էլ ընթերցողի համար հետաքրքրական կլինի հետեւել մեր քննարկումներին: Գուցե նրա գլխում էլ թարմ մտքեր առաջանան ընդհանրապես էսթետիկայի վերաբերյալ: Այնպես որ եթե այդ թեմայի շուրջ մի որեւէ հարցով սկսես , ուրախ կլինեմ առաջ տանել քննարկումը:

Մ. Թ.- Սկսեմ հին մի հարցից. ի՞նչն է քեզ համար գեղեցիկը կյանքում եւ արվեստում: Քո կարծիքով գեղեցիկի հասկացությունը մեր զգայարանների՞ փորձառության արդյունքից է ծնվում, թե՞ մեր հոգեկան ապրումներից է առաջանում: Գեղեցկությունը կենսակա՞ն նշանակություն ունի արվեստի համար:

Վ. Ս.- Տեսողությունն է գեղեցիկ: Գուցե պատասխանս տարօրինակ հնչի, բայց մենք պետք է ելակետ ընդունենք, որ անկախ նյութից (որից պատրաստված է), այն, ինչ ձեւ ունի, գեղեցիկ է: Մեր տեսադաշտում ամեն բան ինչ-որ նյութից է պատրաստված, ձեւ ունի եւ զուրկ չէ գեղեցկությունից: Այլ հարց է, որ գոյություն ունեն կամ կարող են ունենալ գեղեցկության հարաբերական աստիճաններ: Այդուհանդերձ, որեւէ իրի գեղեցկությունը «կազմողը» տեսողությունն է: Գեղեցկությունն ընդգծվում է, ավելանում է տեսողության լարվածության, սրության կամ հստակության հետեւանքով: Ամեն ինչ մեր շրջապատում ունի իրեն հատուկ գեղեցկությունը:

Մ. Թ.- Շատ լավ: Տեսողությունը մեր զգայարաններից մեկի առանձնահատկությունն է, չէ՞: Ուրեմն, կարծում ես գեղեցիկը մենք ընկալում ենք միայն մեր աչքերի՞ միջոցով, թե՞ դրանում մեզ օգնում են նաեւ հոգեւոր կամ մտավոր գործընթացներ:

Վ. Ս.- Ապրելու փորձառությանը մաս կազմող ամեն բան անխուսափելիորեն կապ ունի մեր զգայարանների հետ:

Մ. Թ.- Այդ թվում նաեւ գեղեցիկի մեր ընկալո՞ւմը:

Վ. Ս.- Անշուշտ:

Մ. Թ.- Այդ դեպքում ինչպե՞ս ես վերաբերում այդ հարցի շուրջ մեծ փիլիսոփաների, գրողների, բանաստեղծների խոսքերին: Ջոն Քիթսն, օրինակ, ասում է. «Ճշմարտությունը գեղեցկություն է, գեղեցկությունը՝ ճշմարտություն»: Կարծո՞ւմ ես, որ այս հասկացությունը դեռեւս ժամանակակից հնչեղություն ունի, չի կորցրել իր իմաստը մեր օրերում: Իմ կարծիքով նման հասկացությունները բոլորովին այլ ժամանակների, այլ դարաշրջանի համար են: Նրանք լրացնում էին կոնկրետ որոշակի ժամանակների հասարակության որոշակի պահանջները: Այդ իսկ պատճառով այժմ դրանք կորցրել են իրենց նշանակությունը, իրենց ուժը, կամ հիմնավորվածությունը:

Իհարկե, ես ուզում եմ իմանալ դրանք, հասկանալ դրանց իմաստը, բայց կարծում եմ տեսաբանները, գեղագետները ու մյուս բոլոր մասնագետները այնքան են ոտնձգել դրանց նշանակությունը, որ մտածում ես՝ դրանք ունեն «հավիտենական արժեք», որ դրանք նույնքան ճշմարիտ են այժմ, որքան եղել են իրենց որոշակի ժամանակներում: Չե՞ս կարծում, որ որպես արվեստագետներ մենք պետք է սեփական արժեքները, էսթետիկական հասկացությունները «կազմավորենք» ելնելով մեր փորձառությունից, մեր հասարակության պահանջներից:

Վ. Ս.- Կարծում եմ այս հարցի շուրջ կարիք չկա, որ վիճենք: Ոչ էլ՝ մի որեւէ արվեստագետ մի այլ արվեստագետի հետ: Ճիշտ է, որ գեղագետները գեղեցկությունը դարձրել են կանոնակարգված մի բան, որն անտեղի է, քանի որ գեղեցկության նման ներհատուկ հրաշալի երեւույթը չի կարող վերջնական, համապարփակ, միաբեւեռ կամ անփոփոխ տպավորություն թողնել մարդկանց վրա: Եվ դա անկախ այն բանից, թե մարդիկ ինչ կասեն:

Մ. Թ.- Ճշմարիտ է: Բայց իմ մտահոգությունն այն չէ, որ նրանք ինչ կասեն, այլ այն, թե ինչքանով «վավերական» են ժամանակին արված այդ խոսքերը կամ հասկացությունները այսօր: Այդ կարծիքները, որոնք որպես «դոգմաներ» մեզ պարտադրված են, արդյո՞ք մեր ժամանակներին հարմար են, սազական են, չեն կորցրել իրենց «այժմեականությունը»: Վերցնենք, օրինակ, 50 տարի առաջ կուբիստների եւ էքսպրեսիոնիստների՝ Պիկասոյի, Կլեեի եւ նրանց հետեւորդների մշակած էսթետիկական տեսությունները, որոնք, իմ կարծիքով, կորցրել են իրենց «ուժը» մերօրյա իրականությունների պայմաններում: Դրանք այլեւս չեն արտահայտում սոցիալ-տնտեսական այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել դարասկզբից ի վեր: Այդ փոփոխությունների թվում են սոցիալիզմի աճը, ատոմական ռումբը, ավտոմատացումը, նորանոր գիտական նվաճումները, հանգստի նորաստեղծ պայմանները՝ եւ այլն: Բայց ի՞նչ ենք մենք տեսնում՝ մերօրյա պատկերասրահներն այցելելով: Փոխանակ տեսնելու այս փոփոխությունները մենք մերօրյա նկարիչների գործերում ականատես ենք լինում Պիկասոյի, Կլեեի կամ մյուսների գործերի «ընդօրինակումներին», նրանց անցյալի էսթետիկական գաղափարների «կրկնօրինակներին», որոնք համահունչ չեն մեր ժամանակներին:

Շարունակելի

Թարգմանությունը՝
ՀԱՍԿՈ ՕՈՒԼԻԿՅԱՆԻ

Հուշարձանները եւ մեր մշտական պարտականությունը

Հայագետ-նախիջեւանագետ Արգամ Այվազյանը 1970-ականներից աշխատում է հուշարձանների պահպանության բնագավառում: Ժամանակին գլխավորել է նաեւ հանրապետության հուշարձանների պահպանության գլխավոր վարչության հուշարձանների պահպանության բաժինը, եղել հրատարակչական եւ աղբյուրագիտական բաժինների վարիչ, աշխատել է ՀՍՍՀ ԳԱԱ արվեստի, հնագիտության եւ ազգագրագիտության ինստիտուտներում:

Այժմ էլ, որպես տնօրենի տեղակալ, գլխավորում է մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանություն» ՊՈԱԿ-ի գիտական աշխատանքները: Իր գործի նվիրյալ է, անխոնջ գիտնական, բազում աշխատությունների հեղինակ, մեր պատմամշակութային ժառանգության խնդիրներով մտահոգ անհատ:

- Պրն Այվազյան, Դուք Ձեր «Նախիջեւան. բնաբխարհիկ պատկերազարդ հանրագիտակ» աշխատության մեջ ասում եք, «որ առանց անցած դարերի ու նախընթաց սերունդների կուտակած իմաստության ու պատգամների անհնար է հասու լինել մայր ժողովրդի ու հայրենիքի թե՛ պատմական հիշողությանն ու մշակույթին, եւ թե՛ հայրենյաց ձեռակերտ ու անձեռակերտ արժեքներին»: Այդ գիտակցումը պիտի մշտարթուն լինի յուրաքանչյուրիս մեջ, բայց հուշարձանների պահպանության գործը տնօրինող, այն կազմակերպելու կոչված անձանց մեջ առավել եւս: Կա՞ արդյոք այդ գիտակցումը, եւ եթե այո, ինչպիսի՞ դրսեւորումներ է ունենում:

- Առանց պատմական անցյալի համակողմանի ուսումնասիրման դժվար է, նույնիսկ առանձին դեպքերում անհնար է ճիշտ կողմնորոշում ունենալ թե՛ ներկայի եւ թե՛ ապագայի նկատմամբ: Պարզ օրինակ բերեմ. մի պահ եկեք պատկերացնենք Հայաստան երկիր-աշխարհը առանց մեր վանքերի ու եկեղեցիների, բերդերի ու հնավայրերի, խաչքարերի ու Մատենադարանի եւ հայ մարդու ձեռքով արարված այլ նյութական արժեքների: Անմիջապես կաղճատանա թե՛ բնությունը, եւ թե՛ մեր պատմությունն ու խոսքարվեստը, գրականությունն ու կենցաղը: Այնպես որ մեր հուշարձանները նախ եւ առաջ մեր ժողովրդի պատմությունն ու մշակույթը, արվեստն ու հիշողությունը, մտածելակերպն ու հոգեբանությունը կրող նյութական արժեքներ ու վկայախոսներ են: Այս բանը, կարծում եմ՝ գիտակցում ենք կամ գրեթե գիտակցում ենք բոլորս: Այն հատկապես ավելի ցայտուն է արտահայտվում մեր գինովցած բաժակաճառերի ժամանակ, հուշարձանների մերձակայքում աղ ու հաց կտրելիս, հովեկներին եւ այլազգիներին մեր հուշարձաններին ծանոթացնելիս: Սակայն մեր ամենօրյա գործունեության, հուշարձանների անվնասությունը ապահովելու, պահպանության խնդիրների առնչությամբ հարցեր քննարկելիս, մեղմ ասած, այնքան էլ մտահոգ չենք նրանց պահպանության ճակատագրով: Մի խոսքով՝ մեր հուշարձաններն էլ են ենթարկվում դրամի գերիշխանությանը, առօրյա շուկայական հարաբերություններին, մերօրյա առի ու վաճառքին:

Հուշարձանների պահպանության խնդիրներով զբաղվելը գրեթե հավասարազոր է սխրանքի: Այսպես է եղել խորհրդային իշխանության տարիներին, եւ իրավիճակն այսպիսին է նաեւ այսօր: Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր հուշարձանապահպան կառույցների ջանքերը մեծ մասով ուղղված են նորից Հայաստանի պետական կառույցներից ու կազմակերպություններից (նախարարություններից, քաղաքապետարաններից, գյուղապետարաններից, զանազան ընկերություններից), նրանց առօրյա գործունեություններից փրկելու այս կամ այն հնավայրի ու հուշարձանի պահպանական գոտի-տարածքները: Լինում են դեպքեր, որ հաջողվում է հուշարձանները զերծ պահել հնարավոր վնասումներից: Սակայն միշտ չեն նաեւ այն դեպքերը, երբ օրենքը չի գործում, եւ խաթարվում են պատմական արժեքները:

- Իսկ ինչպիսի՞ն է երկրում հուշարձանապահպան մարմինների կառուցվածքն այսօր:

- Հուշարձանների պահպանման ու վերականգնման նախկին գլխավոր վարչությունը, որը 1978-ից առընթեր էր Մինիստրների խորհրդին, նոր ժամանակներում՝ 1995-ին վերակազմավորվեց մշակույթի նախարարության ենթակայության: Այսօր այն նույն նախարարությունում գործակալության (2002 թ.) կարգավիճակով է իրականացնում պետական օրենքները: Ընդգծենք, որ անցյալի պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գաղափարները առհասարակ արմատավորել են 18-րդ դարում: Օրինակ, Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ Կոնվենտի դեկրետներով անցյալի հուշարձաններն առաջին անգամ դիտվել են որպես համաժողովրդական սեփականություն եւ վերցվել պետական պահպանության տակ: Այնուհետեւ 19-20-րդ դդ. եվրոպական մի շարք պետություններում իրար ետեւից ստեղծվեցին անցյալի արժեքները պահպանելու պետական տեսչություններ ու մարմիններ, որոնք պահպանության խնդիրներից բացի՝ ասիճանաբար մշակեցին նաեւ ավերված ու վնասված հուշարձանների ամրակայման եւ վերականգնման մեթոդները: Վերջին տասնամյակում արդիի 18-ը միջազգայնորեն հռչակվել է որպես հուշարձանների պահպանության օր, որը, ցավոք, մեզ մոտ դեռեւս այնքան էլ ճանաչում չի գտել:

Հայաստանում պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության պետական առաջին մարմինը ստեղծվել է 1920-ին՝ ՀՅ խորհրդարանի հոլիսի որոշմամբ: Արդա 1923-ի դեկտեմբերին ստեղծվել է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն, որի առաջին նախագահն է եղել (1923-1933 թթ.) մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: Հանրապետությունում 1964-ին կազմավորվեց եւ մինչեւ այժմ էլ գործում է Պատմական հուշարձանների պահպանության հայկական (հասարակական) ընկերությունը (դաշնությունը):

Ինչպես անցած տասնամյակներում, այնպես էլ վերջին շրջանում՝ 2003-ից, հանրապետությունում պետական ֆինանսավորմամբ շարունակվում են հուշարձանների վերականգնման ու ամրակայման աշխատանքները: Պետք է հուսալ, որ այդ աշխատանքները տարեցտարի կընդլայնվեն:

Մեր ծառայությունից բացի, հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվում է նաեւ մշակույթի նախարարության ենթակայության տակ գտնվող «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Ինչպես հանրապետության շատ բնագավառները, այնպես էլ այս բնագավառը վերջին տարիների վերակազմավորումներից, իմ կարծիքով, ոչ թե այնքան շահել է, այլ տուժել: Քանզի անհարկի լուծարվեց հուշարձանների վերականգնման նախագծեր կազմող նախագծային գրասենյակը, ցրվեց հանրապետությունում որոնակարներ վերականգնող 5-6 նկարիչներից կազմված միակ խումբը: Մի խոսքով տասնամյակներով այդ գործում մասնագիտացած ու փորձառու դարձած մասնագետները ցրվեցին այս ու այն կողմ: Ըստ հարկի համակարգված չեն նաեւ բնագավառի աշխատանքները, օրենսդրական-իրավական դաշտը: Այս առումով միայն մի օրինակ բերեմ: ՀՅ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի N 95 հոդվածի («Պատմության եւ կուլտուրայի պահպանության եւ օգտագործման կանոնները խախտելը») նախատեսած պատասխանատվության չափերը, մեղմ ասած, ծիծաղելի են: Քանզի վերոհիշյալ հոդվածով պահպանության եւ օգտագործման կանոնները խախտելու դեպքում (իսկ դրանք հաճախ են պատահում) «առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 10%-50%-ի չափով եւ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 30%-ից մինչեւ դրա լրիվ չափը»:

- Որքան հիշում եմ՝ ժամանակին խոսվում էր նաեւ հայկական հուշարձանների համահավաք հատորներ կազմելու մասին: Այդպես էլ մնա՞ց:

- Ցավոք, այո: Այդ ուղղությամբ հանրապետությունում աշխատանքներ են կատարվում դեռեւս 1970-ական թվականներից: Հիշեցնեմ, որ այն ընդգրկելու էր միայն Հայաստանի Հանրապետության տարածքի հուշարձանները: Սկզբում այն (10 հատորով) պետք է իրականացվեր ՀՅ ԳԱԱ, հուշարձանների պահպանության գլխավոր վարչության եւ Հանրագիտարանի գլխավոր խմբագրության համատեղ ջանքերով: 1980-ական թվականներին այդ գործից շատ «համեստորեն» հրաժարվեցին ԳԱԱ-ն եւ Հանրագիտարանը: Այնուհետեւ հուշարձանների պահպանության վարչության համակարգի համահավաքի բաժինը ՀՅ կառավարության որոշմամբ վերակազմավորվեց «Հայկական հուշարձանների համահավաքի» խմբագրության, ապա մի քանի տարի հետո՝ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի»: Այնպես որ, շուրջ 30 տարիների աշխատանքի արդյունքում այսօր չունենք հրատարակված ոչ մի հատոր:

Մանրամասնությունների մեջ չմտնելով, որի հնարավորությունը չի տալիս հարցազրույցի ծավալը, փաստենք, որ մեր պետական, գիտական, կազմակերպչական միտքն ու կարողությունն առ այսօր ի զորու չեղան (այլ բան չես կարող մտածել) որոշակի սկզբունքներով, գիտահանրամատչելի ու հանրագիտարանային շարադրանքներով պետական պահպանության տակ առնված մեր նյութական ժառանգության վերաբերյալ հատորներ պատրաստելուն ու հրատարակելուն: Նույնիսկ առ այսօր հրատարակված չունենք հանրապետության տարածքի պետական պահպանության տակ առնված հուշարձանների ցուցակը: Դա չարվեց ոչ խորհրդային իշխանության տարիներին, ոչ էլ հիմա:

- Թեեւ համահավաքի հատորները մեզ մոտ, ցավոք, չեն հրատարակվել, բայց գոնե մխիթարական է այն, որ աշխատանքներ են տարվում հայոց աշխարհասփյուռ հուշարձանների համահավաք ցուցակ կազմելու ուղղությամբ:

- Թերեւս դրա՞մ ճիշտ եք: Այդ մասին ես առաջին անգամ խոսելով՝ ուզում եմ հատկապես ընդգծել, որ դա շատ կարեւոր տեղեկատվական ծրագիր է, որի աշխատանքները տողերիս հեղինակի նախաձեռնությամբ սկսվել են 1982-83 թթ.: Միով բանիվ, մանրամասնությունների մեջ չմտնելով, ուզում եմ միայն նշել, որ մեր ծառայությունում՝ ի պատիվ տնօրենությանը, 1990-ական թվականների դժվարին տարիներին իր գոյությունը պահպանած բաժինը, որի աշխատակիցների թվակազմը թերեւս 10-12-ից իջավ 4-ի, իր կատարած հսկայածավալ աշխատանքների շնորհիվ ստեղծել է մի բացառիկ շտեմարան՝ քաղվածքներ կատարելով ոչ միայն հայերեն, այլեւ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն հրատարակված բազմաթիվ եւ բազմահազար մամուլներ կազմող եւ բազմահազար մամուլներ կազմող գրականությունից: Եվ ստեղծված այդ քարտարան-շտեմարանի նյութերի հիման վրա արդեն բաժինը ձեռնամուխ է եղել հայոց հուշարձանների համահավաք ցուցակը կազմելու-հրատարակելու աշխատանքներին: Ուրախությամբ պետք է արձանագրեմ, որ առաջին փուլն արդեն պատրաստ է, եւ ծրագրել ենք մինչեւ եկող տարվա կեսերը հրատարակել: Նշեմ միայն, որ սկսել ենք Արեւմտյան Հայաստանի հուշարձաններից եւ առաջին փուլը, որը նվիրված է Բիթլիս նահանգի գավառներին, ընդգրկում է ավելի քան 1800 հուշարձաններ: Սա աշխարհասփյուռ հայոց արժեքների արձանագրման (որքանով էլ այն ամբողջական չլինի) իմ ծրագիր-երազանքի առաջին ծիծեռնակը կլինի: Համահավաք ցուցակը կազմելուն զուգահեռ նպատակ ունեմ հիմք դնելու նաեւ այդ ծրագրի երկրորդ մասի՝ որոշակի սկզբունքներով հանրագիտարանային հատորների հրատարակման առաջնեկ հատորի ի հայս գալուն: Տա Աստված, որ այս հիմքը դրվի եւ հետագա տասնամյակներում շարունակվի:

- Մի մտահոգիչ հարց եւս: Ինչպիսի՞ն է հայոց հուշարձանների պահպանության խնդիրը այլ պետություններում: Արդյո՞ք մենք կարողանում ենք ապահովել գործնական ու արդյունավետ աշխատանք:

- Եթե կարճ պատասխանեմ, ապա դա ոչ թե վատ է, այլ աղետալի: Այս մասին ես մեկ անգամ չէ, որ նշում եմ: Ընթերցողը, կարծում եմ՝ քաջատեղյակ է Թուրքիայի, Ադրբեջանի, Նախիջեւանի տարածքում հայոց հուշարձանների կործանումներին ու մշակութային եղեռնին: Ոնձգություններ են կատարվում նաեւ Վրաստանում, Ռուսաստանի առանձին վայրերում եւ այլուր: Այլ պետությունների տարածքներում հայկական հուշարձանների թե՛ պահպանության եւ թե՛ նորոգումների խնդիրը գոհացուցիչ է հարեւան Իրանի տարածքում, սփյուռքի մեծ համայնք ունեցող երկրներում:

Այլ պետությունների տարածքներում հայկական նյութական ժառանգության թե՛ պահպանության, եւ թե՛ուսումնասիրման ու վերականգնման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության իրավունքները շատ սահմանափակ են ու անիրագործելի: Անբավարար է այս բնագավառում նաեւ համահայկական ու համազգային կառույցների դերն ու աշխատանքները: Պարզապես պետք է խոստովանել, որ մենք այդ ուղղությամբ չենք կատարում հետեւողական աշխատանքներ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում: Իսկ դեպքից դեպք երբեմն հնչող բողոքի ու զայրույթի պոռթկումներն էլ, ինչպես հայտնի է, չեն կարող էական դեր կատարել: Այս տեսակետից դատապարտելի է թե՛ Հայաստանի, եւ թե՛ սփյուռքի մտավորականության անտարբերությունն ու դանդաղկոտությունը, Հայ դատի, Համազգայինի, Հայաստանի հուշարձանապահպան կառույցների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայաստանյան հանձնախմբի, բոլորի ու երիտասարդական, քաղաքական կազմակերպությունների ու կուսակցությունների, այլ երկրներում ՀՅ դեսպանատների մշակութային կցորդների զանգվածային դիտորդումները: Այնպես որ, շատ ու շատ դեպքերում այս ամենը արտահայտվում է մտահոգությունների եւ ոչ գործնական ու իրական աշխատանքների կարգով: Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ մշակութային ու դիվանագիտական, պատմական խնդիրների առնչությամբ ու քաղաքական հարցերի վերաբերյալ տարվող պատերազմում մեր կողմից անասելի անտարբերություն է ցուցաբերվում: Եվ սա այն դեպքում, երբ հակառակ կողմը լկտիաբար ու կեղծարարությամբ, զանազան քարոզչությամբ միջազգային կազմակերպությունները հեղեղում է բազմազան գիր ու գրականությամբ, ջանում հոգուս իրեն ձեւավորել միջազգային հանրային կարծիքը, սրբագրել պատմությունը:

Իսկ այս ամենի հետեւանքն այն է լինելու, որ այդ քողի տակ առաջիկա 20-30 տարիների ընթացքում այլ պետությունների կազմում գտնվող պատմական Հայաստանի տարածքներում եւ գաղթօջախներում առկա կանգուն ու կիսականգուն ժառանգությունը գրեթե ամբողջությամբ կործանվելու է: Այս ցավալի իրողության հերթական ականատեսներն ու արձանագրողները կլինենք, եթե օր առաջ այդ ուղղությամբ չմտածենք եւ չիրագործենք պետական ու համազգային կոնկրետ քայլեր, երկարաժամկետ ու հետեւողական ծրագիր: Քանզի մեր հարեւան երկրներից Թուրքիան ու Ադրբեջանը, որոնց կազմում են պատմական Հայաստանի տարածքները, վերջին շրջանում ուղղակի որդեգրել են մշակութային հուշարձանների ու ժառանգության արժեքների հիմնահատակ ոչնչացման միջոցով ամեն կերպ պատմական իրականությունը վերացնելու, աղճատելու, հայ ժողովրդին ու նրա ապագա սերունդներին պատմական հիշողությունից զրկելու քաղաքականություն: Սա էլ, ավելորդ չլինի նշել, ամենաուղղակի կերպով խոցելի հարված է մեր ազգային անվտանգությանը:

Արդյո՞ք մենք պետք է այսպիսի զարմանալի անտարբերությամբ համակերպվենք մեր մշակութային արժեքները մաս առ մաս կորցնելու, մեր ժողովրդի ազգային եւ պատմական արժանապատվության անարգել ոնձգությունների հետ: Իհարկե՝ ոչ: Այնպես որ մեզ պետք է թե՛ պետականորեն, եւ թե՛ համազգայնորեն սթափվել եւ շրջադարձ կատարելով՝ լծվել մեր արմատների ու նախընթաց սերունդներից ժառանգություն ստացած արժեքների պահպանության շատ անհրաժեշտ ու դժվարին խնդիրների կատարմանը: Միով բանիվ, մեր մշակութային արժեքները մեր ժողովրդի մտածողության ու ավետաբերության, պատմության, ներկայի ու ապագայի աղն ու շաղախն են, եւ պետք է լինեն մեր մշտական հոգածության պարտականությունը:

Հարցազրույցը վարեց
ԼԵՎՈՆ ՊԼԲՈՒՅՏՈՆԸ

ՀԱՅ ՀԵՐՈՍԻՆ ԳՈՎԱԲԱՆՈՂ ԵՐԳԵՐ

Կոմիտասին՝ միջազգային ճանաչում

Ատորեւ «Արմինյն Միրոր-Սփեթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 25-ի համարից թարգմանաբար (եւ հատվածաբար) ներկայացվող համանուն վերնագրով հոդվածը տպագրվել է նախ «Նյու Յորք թայմսում» Մելինե Թումանիի ստորագրությամբ: Պահպանել ենք հոդվածի որոշ՝ մակերեսային արտահայտություններն ու գնահատումները:

Երեւանի պետական երաժշտանոցը կրում է Կոմիտասի՝ 19-րդ դարի վերջերի մի երգահանի անունը, որն անծանոթ է բոլոր նրանց, ովքեր հայ չեն: Երեւանում կա նաեւ մի պողոտա եւ մի այգի նրա անունով: Իսկ քաղաքի կենտրոնում տեղադրված հուշարձանը ուրվագծում է նրա մարմնի նիհարությունը եւ դեմքի մելամաղձությունը: Հուշարձանից պարզ է դառնում նաեւ, որ նա եղել է ձեռնադրված կրոնավոր:

Կոմիտասը ծնվել է 1869-ին եւ համարվում է հայ երաժշտության հայրը: Ա. համաշխարհային պատերազմին նախորդած տասնամյակում նա բազմիցս ճանապարհորդել է Անատոլիայում եւ Կովկասում՝ հավաքելու համար երգեր հայկական գյուղերից եւ աղա ուսումնասիրել եւ դասակարգել դրանք: Նրա ձեռագրերն ու վերլուծական հոդվածները հիմն են հանդիսանում հայ ժողովրդական եւ դասական երաժշտության: Այդ պատճառով էլ բոլորովին զարմանալի չէ, որ նրա անունը այդքան հայտնի է ամբողջ հայկական հանրապետությունում:

Բայց զարմանալի է, որ նույնիսկ Երեւանի հուշարձանից ավելի բարձր մի հուշարձան տեղադրված է Փարիզում, Սենի ափերին: Իսկ մեկ ոտիը՝ Դեսոյթում: Անցյալ հոկտեմբերին Քվեբեկի խորհրդարանի շենքի առաջ բացումը կատարվեց նրա բրոնզե կիսանդրու: Ալֆորվիլում (Ֆրանսիա) փողոց կա նրա անունով, իսկ Լոնդոնում՝ գիտահետազոտական կենտրոն:

Սրանք վկայում են, որ Կոմիտասն իր ազդեցությունն է թողել նաեւ Եվրոպայի եւ ընդհանրապես արեւմտյան աշխարհի երաժշտության վրա: 1899-ից 1914-ը նա հայ երաժշտության մասին դասախոսություններ եւ համերգներ է տվել այնպիսի վայրերում, ինչպիսիք են Բեռլինը, Ժնեւը, Փարիզը եւ Վենետիկը: 1906-ին ֆրանսիական «Մերկյուր» (Mercure) հանդեսը նրա գործերը «բացահայտում, հայտնագործություն» է որակել: Իսկ Դեբյուսին նշել է, որ եթե նույնիսկ «Անտունիից» բացի Կոմիտասը ոչինչ գրած չլիներ, նրան դարձյալ մեծ երգահան կարելի էր համարել:

Բայց Կոմիտասը ոչ սիմֆոնիկ, ոչ էլ օպերային երաժշտություն չի գրել: Եվ նրա հավաքած կամ հորինած երաժշտության մեծ մասը կորել է կամ ոչնչացել: 46 տարեկանում նա կորցրել է մսավոր հավասարակշռությունը՝ որպես հետեւանք Օսմանյան Թուրքիայում 1915 թվի կոտորածներին ականատես լինելու: Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում աստող Կոմիտասին 200 ուրիշների հետ Անատոլիա են տարագրել, բայց «հատուկ միջամտությունից հետո» ազատ արձակել: Վերջին երկու տասնամյակներն իր կյանքի նա անցկացրել է ֆրանսիական հոգեբուժական հիվանդանոցում:

Այնպես որ հայերն աշխարհով մեկ լծված են իրենց ազգային հերոսին եւ ազգային ողբերգությանը ճանաչում ձեռք բերելու գործընթացին: Եկել է ժամանակը, որ Կոմիտասի անունը հայտնի դառնա Արեւմուտքի դասական երաժշտության աշխարհում:

Միջազգային ճանաչում ձեռք բերած կանադահայ երգչուհի Իզաբել Բայրաքդարյանն ու նրա կանադահայ ամուսինը՝ դաշնակահար եւ երգահան Սերուժ Քրաճյանը վերջապես կարող են հայ երաժշտության ջատագովների պահանջը բավարարել: Նրանք «Հիշողության շրջագայություն» են նախաձեռնել «Մանիտոբա» կամերային նվագախմբի (խմբավար՝ էն Մենսոն) մասնակցությամբ: Նրանց առաջին համերգը տեղի ունեցավ Բոստոնում՝ Զորդան Հոլում, իսկ երկրորդը՝ Զանկել Հոլում (համապատասխանաբար հոկտեմբերի 19-ին եւ 20-ին): Նրանք Մ. Նահանգների այլ քաղաքներ եւս այցելելու են եւ արդեն թողարկել են Կոմիտասյան երգերի իրենց ալբոմը «Նանսաչ» պիտակի ներքո:

Քրաճյանն ասում է, որ Կոմիտասի երգերը գործիքավորելու ներշնչանքն զգացել է, երբ լսել է նրա 1912 թվին արված ձայնագրությունները: Նրան թվացել է, թե այդ երգերի ծալքերում լսում է ջութակի, թավջութակի եւ կլարնետի մեղեդիները: Նրա ուսումնասիրությունները պարզել են, որ Կոմիտասն իրոք մտածել է իր երգերը գործիքավորելու մասին: «Երբ բացահայտեցի այդ իրողությունը, իմ հետաքրքրասիրությունը վերածվեց կրքի», ասում է նա:

Տես էջ 5

«ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՏ»-Ի ՀՈՒՆՈՎ

Ա էջից

մտերիմ կարեր հաստատած էր իրենց հետ, իր ամառանոցը կը կտակէ Քնարի որդի Գալուստ Տրգալուստեանին, այսինքն՝ Գնէլին: Անունմականունի շփոթին բերումով՝ Հիթլիայի ներկայացուցիչը տեղեկութիւնը կը փոխանցէ Տր-Գալստեան Գալուստին, որ կնոջը՝ Կարինէին հետ կ'երթայ Վիլնիուս՝ տէր կանգնելու իր ժառանգութեան: Հոն սխալը կը բացայայտուի, բո՛ւն ժառանգորդը՝ Գնէլը կը ժամանէ Վիլնիուս, բայց կը հրաժարի ժառանգութեան տէր կանգնելէ եւ ի վերջոյ բոլորը մէկ կը վերադառնան Երեւան: Լիթվական արկածախնդրութենէն կը մնան Ասա-Գնէլ սիրային կարը եւ Ռուսլֆ հովվուաբուն, որմէ չ'ուզեր բաժնուիլ Գալուստը:

Գիրքի վերջաւորութեան կը տեսնենք նաեւ աւարտը Յովսէփ Տրգալուստեանի պատմութեան: Ան պայտի-գամի կրպակը կոռնցուցած է հարստութեան տուրքին պատճառով, ինքզինք Ֆրանսա նետած, ուր ապրած է երկար տարիներ եւ ի վերջոյ վերադարձած Խարբերդի շրջանը, ուր մենակեցի կեանք կը վարէ: Հո՞ն է որ զինք կը գտնէ Յակոբ Քէչեանի որդին՝ Աւետիսը, կը համոզէ ու կը տանի հետը Պոլիս՝ Սուրբ Փրկիչ հիւանդանոցը:

Գնէլը կ'երթայ զինք տեսնելու եւ կարը կը վերականգնուի անցեալին հետ: Յովսէփը հասու կ'ըլլայ, որ հոյրը իր զաւակին կին դարձնող եւ զինք սնոյգ մահուան ղրկող Ամտուլլա Պայքալը Պոլիս է եւ բարութեան պատճառով երկարակեաց ըլլալու համբաւը կը վայելէ: Առտու մը դուրս կու գայ Ս.Փրկիչէն, կ'երթայ քաղաք եւ Ամտուլլայի ականջին կը պոռայ ճշմարտութիւնը: Դիպուածի հեգնանքով, Պայքալը բան չի հասկնար, որովհետեւ... խլացած է: Վրայ կը հասնի Պայքալի թոռնուհին՝ իրաւաբանուհի Ֆեշիէ հանումը, որ մեղմութեամբ կը հեռացնէ զինք ու կը տանի Ս.Փրկիչ: Գնէլ-Ֆեշիէ վերջին հանդիպումին խօսք կ'ըլլայ թրքուհիի նմանութեան մասին Արուեստակին հետ...

Նիւթի ուռուագծային այս ներկայացումէն կը յայտնուի արդէն, որ բարդ կառոյցով վէպի մը առջեւ ենք: Ո՛չ միայն բազմաթիւ վայրերու մէջ տեղի կ'ունենայ գործողութիւնը, այլեւ զանազան տարիներու ընթացքին, որոնք ժամանակագրական կարգով չեն ներկայացուած մեզի: Գործող անձերուն հետ տեղ տեղ կ'անցնինք եւ ետ ու առաջ ոստումներ կ'ընենք ժամանակին մէջ:

Պատումն ալ միաձայն եւ միալար չէ. չորս պատմող կայ, որոնցմէ մէկը յոգնակի «մենք» մըն է տեղ տեղ փոխադրուող, Երեւանի 5-րդ փողոցէն մինչեւ Պոլիս ու այլուր: Առաջին պատմողը Գլակն է, որ ... չծնած իսկ կը խօսի: Երկրորդը եւ գլխաւորը Գնէլն է՝ պատմող, հերոս եւ «հեղինակ», երրորդը Ատոմ Տր-Գալստեանը՝ համացանցով աշխարհին հետ կապուող թրքագէտ: Վահագն Գրիգորեանն ալ բացակայ չէ ցանկէն. անշուշտ կրնայ «մենք»-ի գլխաւոր ձայնը ըլլալ, եւ Ֆեշիէ-Գլակ զոյգին անտես վկան, բայց յանկէ-ացին անտես վկան, բայց յանկէ-ա-նուանէ յիշատակուած է նաեւ գիրքի վերջաւորութեան, ապագայի երեւակայական պատկերացումին մէջ:

Այս բոլոր պատմողները կը խօսին հերուն եւ ապագայի մէջ տեղատրուած «բարեկամ»-ի մը, որ ժամանակէն վեր ու անդին մենաշնորհեալ ունկնդիրն ու վկան է հայութեան մէկ դարը ներկայացնող այս պատմութեան:

Կառոյցի բարդութիւնը կը շեշտուի հերոսներու անակնկալ յայտնութեամբը այս կամ այն պահուն՝ շարունակելու համար նախապէս սկսուած գործողութիւն մը կամ պատմութիւն մը, կամ կապուելու համար հին անցուդարձի մը, որ ընթերցողը աչքաթող ըրած կրնայ ըլլալ:

Ընթերցողը կրնայ նաեւ ուշադրութիւն ըրած չըլլալ պատահական մանրամասնութեան մը, հերոսի մը անունի յիշատակումին, օրինակ, եւ անդրադառնալ որ այդ մանրամասնութիւնը կ'օգտագործուի շարունակութեան մէջ, երբ տուեալ հերոսը կը շարունակէ իր անցեալ գործունէութիւնը բնականօրէն: Վահագն Գրիգորեանը այնքան լաւ կը տիրապետէ բարդ կառոյցով իր նիւթին, որ բնականօրէն կ'ագուցէ -անցեալը- ներկային, ներկան անցեալին եւ ամէն ինչի տեղն ու դերը գիտցող ճարտարապետի պէս կը զետեղէ մանրամասնութիւնը ամբողջին մէջ՝ կարծես փազըլի մը մէկ մասնիկը իր յարմար տեղը կը զետեղէ պատկերին մէջ: Այսպէս է որ, օրինակ, Ասան կրնայ չնկատուիլ վէպի սկիզբը, երբ շարունակութեան մէջ կարեւոր դեր պիտի խաղայ Գնէլի կեանքին մէջ եւ վէպի կառոյցին: Յատկանշական է նաեւ, որ «Ժամանակի գետը» սնորերկրեայ կարերով յարակցուած է Գրիգորեանի նախորդ գործերուն: Ցանց մը կը ներկայացնէ անոր ստեղծագործութիւնը, ամբողջ մը, որ յատկանշական նոյաս մը կը բերէ մեր արդի գրականութեան:

Հեղինակի գրողական ճարտարութիւնը կը յայտնուի նաեւ կերպարաստեղծումի մարզին մէջ: Վէպը հանդիսավայրն է -հոն կը խօսուի բեմի եւ բեմելու մասին- քանի մը խումբ հերոսներու, որոնք իրենց նախնական տեղին մէջ կամ այլուր եւ տարբեր ժամանակներու կը հանդիպին իրարու եւ իրենց խօսքերով ու գործերով կը հիւսեն ցանցը վէպի գործողութեան: Լաւ տիպականեր ստեղծուած, կենդանի կերպարներ են անոնք, ողբերգական կամ կատակային խորքով, հեղինակի վերլուծական խօսքերով ու հեգնանքով եւ իրենց արարքներով ու խօսքերով ներկայացուած:

Կարեւոր հերոսներէն մէկ քանին՝ Գլակը եւ Արարատը յատկապէս, բայց նաեւ Գնէլը երբեմն, ընդհանուր գիծեր կը բացայայտեն, որոնք կատակով նշուած են յաճախ, բայց լուրջ յատկանիշները կը կազմեն անոնց նկարագիրներուն: Մաքուր են, անկեղծ, համարձակախօս, բայց Տոն Քիշոթեան կողմ մը ունին, որ միաժամանակ անգործնական կը դարձնէ զիրենք, բայց համակրելի:

Կարգ մը հերոսներու պարագային Գրիգորեանը չէ կրցած խուապիլ հակումէ մը, որ ժամանակակից հայաստանցի գրողներու «ոգի մեղք»-ը կը կազմէ: Անոնք լաւ գործածել չեն գիտեր արեւմտահայերէնը, բայց կ'ուզեն «տեղական գոյն» ստեղծել եւ երբեմն կը յանգին տարօրինակ արդիւնքներու: Ինք ծագումով արեւմտահայ է թէեւ, բայց իբրեւ գործածական լեզու արեւելահայերէնին դիմած է միշտ եւ արեւմտահայերէնի նրբութիւններուն մտերիմ ծանօթութիւնը չէ ունեցած:

Գլակն ու Գնէլը բնական է որ խառն լեզու մը գործածեն, քանի պարած են արեւմտահայ եւ արեւելահայ միջավայրներու մէջ եւ կ'ուզեն հասկնալի ըլլալ իրենց խօսակիցներուն, բայց այս պատուաստուած հայերէնի մասին չէ խօսքը, այլ ուրիշ հերոսներու խօսակցութեան ոգտիկ անհեթեթութիւններուն:

Արեւմտահայը, օրինակ, «Տր Զօրին մօտ» չ'ըսեր, այլ՝ «Տր Զօրի», առանց յօդի, «կնանիք» չ'ըսեր, այլ՝ «կիներ», շաս-շաս՝ «կանայք», ոչ՝ «ոչ մէկուս կեանքին չէ դպած», այլ «դպած է», «Կարս ու Անի առաւ ձեռքէն» այլ՝ «Կարսն ու Անին», «գաւառներ բոլորիս փաճացուց» այլ՝ «գաւառներու մէջ բոլորս փաճացուց»: Կարելի է երկարել ծաղկաքաղը: Գրիգորեանը կրնար խուսափիլ սխալներէն՝ պարզապէս արեւմտահայերէնի նրբութիւններուն ծանօթ մէկու մը օգնութեան դիմելով:

Երկրորդական հերոսներէն քանի մը հատը այնքան յաջող կերպարներ են, որ կրնային այլ շրջանակի մէջ աւելի կարեւոր դեր խաղալ: Հինգերորդ փողոցի Մնացը, օրինակ, ժանտարմ Ռեմէփ Փերինչէքը, կամ Յովսէփը «որդեգրող» Սուլէյմանը զիրենք անհատականացնող անուա գործնականութեան, խորամանկ հաշուագիտութեան եւ երազկոտ ծուլանքի յատկանիշներ ունին, որոնց վրայ աւելի բարդ ու կարեւոր նկարագիրներ կարելի է հիմնել:

Պետական անձնատրութիւնները՝ Մորկընթաու, Տէյուիս, Միդհադ, Համիտ, Իթթիհատի եւ թուրք հանրապետութեան ղեկավարները պատմական դէմքեր են անշուշտ, բայց վիպական հերոսներու դեր կը խաղան գրեթէ՝ առանց դադրելու իրական անձնատրութիւններ ըլլալէ:

Վահագն Գրիգորեանի վիպագրական յիշուած արժանիքներուն պէտք է աւելցնել նաեւ անոր վիպական մթնոլորտ ստեղծելու եւ պատմելու կարողութիւնը: Իրականութենէն առնուած ընթացիկ դէպք մը կը կերպարանափոխէ ան, կը ներկայացնէ հետաքրքրաշարժ պատմողի ճարտարութեամբ ու մեզ կը փոխադրէ ուրոյն աշխարհ մը. ուրոյն՝ իր մթնոլորտով, ամբողջական կառոյցով, սեփական օրէնքներով: Իր բառերով կը փոխադրուինք այդ աշխարհը եւ հմայուած՝ ունկնդիր կ'ըլլանք իր ձայնին եւ ակնդիր՝ մեզի ներկայացուցած անձերուն ու անցքերուն:

▼▼▼

Փաստագրական եւ վիպագրական այս յատկանիշներով՝ «Ժամանակի գետը» մեզի կը ներկայանայ իբրեւ օգտակար, կարեւոր եւ արժէքաւոր ստեղծագործութիւն մը:

Օգտակար է ան եւ կարեւոր, որովհետեւ ամէն հայ ընթերցողի եւ յատկապէս փաստագրական գործերու չմօտեցող անձերուն կը փոխանցէ պատկերաւոր եւ ամբողջական ներկայացում մը հայկական ցեղասպանութեան եւ անոր յարակից հարցերուն, հաղորդակից կը դարձնէ զանոնք մեր ազգի հիմնական խնդիրներուն: Կը ստեղծէ նաեւ ազգային մթնոլորտ մը, որ կրնայ վարակիչ դառնալ եւ քաղաքացիական կրթութեան դեր կատարել առանց ուռուցիկ եւ պոռոտ քարոզի:

«Ժամանակի գետը» արժէքաւոր է նաեւ իբրեւ գրական գործ: Այժմեական վէպ է ան, բնորոշ հերոսներով, բարդ բայց տիրապետուած կառոյցով, հետաքրքրաշարժ պատումով: Վահագն Գրիգորեանը վաւերական գրող է, մեր ժամանակի ամենէն ինքնուրոյն արձակագիրներէն մէկը: Վաթսունական թուականներու առաջին պատմուածքներէն ու վիպակներէն կը յայտնուէր արդէն իր բացայայտ տաղանդը, իր հեքիաթները եւ վէպերը նոր որակ բերին մեր արձակին. այս վէպը կը շարունակէ անձնական այս աւանդութիւնը:

Բայց նախորդ՝ «Առաջնորդի կեանքն ու մահը» վէպը եւ այս «Ժամանակի գետը» ուշադրութիւն կը գրաւեն իրենց դառն երգիծանքով ու հեգնանքով: Յոռետես է գրողը անոնց մէջ, եւ պայծառ չեն իր ներքին աշխարհը եւ վէպերու մթնոլորտը: Իրեն պէս չխանդավառուելով մեկտեղ մեր ներկայով ու գուշակելի ապագայով՝ իր գալիք օրերուն ու գործերուն ի խնդիր կը մաղթեմ, որ արեւ ծագի իր ներաշխարհին մէջ ու պայծառ օր ըլլայ հոն:

Ռէյրաք

Խորհրդավոր ընթրիքի պատկերագրային մեկնաբանություններ

Վարդան Դեւրիկյանի ուսումնասիրության մեջ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Վարդան Դեւրիկյանի բանասիրական ուսումնասիրությունների հերթական հրատարակությունը «Խորհրդավոր ընթրիք Հայկական ավանդույթից մինչեւ Լեոնարդո» գիրքն է՝ տպագրված Երեւանի Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ: Նախապես ընդգծենք գրքի բացառիկ ճաշակավոր եւ հարուստ հրատարակությունը: Թղթի գունային՝ մագաղաթե մայրաններ հիշեցնող միջավայրը թեմային համահունչ տրամադրություն է առաջացնում: Գրքի 112՝ շատ փոքր բացառությամբ բոլոր էջերին, ըստ դիտարկվող նյութի, զետեղված են համապատասխան պատկերագրության գունավոր իլյուստրացիաներ: Գրքի ձեւավորման եւ էջադրման հեղինակը Նարինե Բաղդասարյանն է, տպագրության իրականացնողը «Տիգրան Մեծ» հրատարակչատունը:

Հեղինակի ուսումնասիրության առարկան Խորհրդավոր ընթրիքի պատկերագրային արտահայտությունն է, ժամանակային ընդգրկում հատվածում՝ վաղ քրիստոնեությունից մինչեւ ուշ միջնադար, մինչեւ Լեոնարդո դա Վինչի: Անդրադարձ է արված հայկական ավետարանական մանրանկարչությանը, սրբապատկերային արվեստին, ոճնանկարչությանը, խաչանկարչությանը: Խնդրո առարկա նյութը ընկված է հանգամանալի վերլուծությամբ. տրված են մանրամասն մեկնաբանություններ՝ ըստ միջնադարյան պատկերագրության օրինաչափությունների, մանրանկարչության արվեստում ընդունված կանոնների, գունային համադրության, պարզ, կոնտրաստային լուծումների, գաղափարակիր կերպարների ընդհանրացված արտահայտություններին, ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունների ու զարգացումների. միջնադարյան գունային, պատկերային ավանդույթներից մինչեւ դասական միջնադար ու Վերածնունդ՝ տարածական, հեռանկարային արվեստ, կերպարային անհատականացումներ:

Ժամանակի պատկերագրությանը վերաբերող հեղինակային մեկնաբանություններին զուգահեռ տրվում են թեմային առնչվող նկարագրություններ՝ խորհրդավոր ընթրիքի աստվածաշնչյան պատմությունների, դրանց այլաբանական իմաստների, խորհրդանիշների պարզաբանումներով: Գրքի առաջին բաժինը ընթերցողին վերհիշեցնում է քրիստոնեական վարդապետության մեջ ծիսական եւ դավանանքային գլխավոր նշանակությամբ հաղորդության խորհրդի հաստատման մասին, որ տեղի ունեցավ նշանավոր Վերնատանը, Հիսուս Քրիստոսի եւ առաքյալների Վերջին ընթրիքին. անդրադարձ է արվում օրվա խորհրդին, հրեական զատկական տոնին, դրա հետ կապված սովորույթների իմաստներին ու նշանակությանը: Հաջորդ՝ «Ընդհանուր պատկերագրություն» խորագրով բաժնում հեղինակը հանգամանալի քննում, նկարագրում է չորս ավետարանիչների պատմությունների հիման վրա ստեղծված միջնադարյան ձեռարվեստի նմուշներ, որ ընդգրկում է շուրջ ութ տասնյակից ավելի ավետարանական ծաղկողների ու գրիչների, նաեւ ոճնանկարային, խաչանկարչական ստեղծագործություններ: Համեմատական ընդհանրություններով եւ առանձնահատկություններով հեղինակը նկարագրում է յուրաքանչյուր դեպք, առանձին դրվագներ՝ ամենայն մանրամասներով, ուշադրություն դարձնելով խորհրդանիշներին՝ հացը, գինին եւ հատկապես ձուկը, որպես քրիստոնեության հիմնական խորհրդանիշ դիտարկելով:

Կարետրվում են ընթրիքի սեղանի ձեւերը՝ պատկերագրություններում դրանք էլիպսաձեւ են, ուղղաձիգ կիսաշրջանաձեւ եւ ուղղանկյուն, ուշադրություն է դարձվում կերպարների՝ Հիսուս Քրիստոսի եւ առաքյալների նստած դիրքին, դեմքի արտահայտություններին, գունային լուծումներին, մանրանկարն ամբողջացնող հարակից դեպքերին ու իրերին: Պատմողական եւ մեկնողական սույն ուսումնասիրությունը կարելի է երեք շերտի բաժանել՝ ավետարանական պատմությունների նկարագրություններ, հիշատակում ունեցող ձեռավեստի՝ ավետարանի տեղադրման եւ գրչագրի մասին (եթե հայտնի է), ապա եւ մանրանկարի նկարագրություն: Քննության են առնված Երեւանի Մատենադարանի, Մայր աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատան, նաեւ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի մատենադարանում պահվող տասնյակ ձեռագրեր: Հեղինակային տեքստն ուղեկցվում է անցյալի ու ներկայի հայ եւ օտար մեկնիչների, աստվածաբանների, արվեստաբանների կարծիքների հղումներով:

Այս ուշագրավ ուսումնասիրությունն, իրականացել է հեղինակի պատմաբանասիրական, արվեստաբանական ընդհանուր գիտելիքների, Հին եւ Նոր Կտակարանների, եկեղեցու ծիսական եւ առհասարակ հոգեւոր իրողությունների խոր իմացությունների շնորհիվ:

Առանձին բաժնով հեղինակն անդրադառնում է XI դարում Փոքր Հայքում գրված՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի 3624, Երեւանի Մատենադարանի 3723 եւ 3784 երեք ձեռագրերի՝ Խորհրդավոր ընթրիքի պատկերագրությանը: Նմանապես ներկայացվում է հայկական միջնադարի (XI դ.) գրչության եւ մանրանկարչության արվեստով նշանավոր Մուղնիի ավետարանը: Ավետարանական մանրանկարների շարքում առանձնացվում են Թարգմանչաց (XIII դ.), Հալլեի (XIII դ.) ավետարանների Խորհրդավոր ընթրիքի պատկերագրությունները:

Վ. Դեւրիկյանը անդրադառնում է նաեւ քրիստոնեական վարդապետության խոնարհության բարձրագույն արտահայտությանը՝ Խորհրդավոր ընթրիքին նախորդող Ոտնլվայի խորհրդին եւ հայ միջնադարյան պատկերագրության մեջ այս երեւույթի արտահայտություններին՝ Խաչատուր Կեսարացու (XIV դ.), Հովհաննես Խիզանեցու (XIV դ.), Սարգիս Պիծակի (XIV դ.) եւ ուրիշ գրիչների ու ծաղկողների կատարմամբ:

Գրքի եզրափակող բաժինները նվիրված են միջնադարյան պատկերագրությունից, սրբանկարչությունից գեղարվեստական նոր մտածողության անցման շրջանում նույն թեմայով կերպարվեստային դրսեւորումներին, անդրադարձ է արված եվրոպական Վերածնդի իտալացի նշանավոր վարպետներ՝ Ջոտտոյի, Դուչչիոյի, Անդրեա դել Կաստանիոյի, Դոմենիկո Գիրլանդայոյի, Կոզիմո Ռոսսելի ստեղծագործություններին: Բնականաբար, գիրքը ավարտվում է Խորհրդավոր ընթրիքի թեմայի մարմնավորման գեղարվեստական բարձրագույն արտահայտություն հանձարեղ Լեոնարդո դա Վինչիի՝ Միլանի Սանտա Մարիա դե լա Գրացե միաբանական սեղանատան հայտնի ոճնանկարի ներկայացմամբ: Բավական հանգամանորեն շարադրվում է նկարի ստեղծման պատմությունը եւ հետագա ճակատագիրը, բնագրային տեղեկություններ հաղորդվում՝ նկատի առնելով բուն ոճնանկարից բացի էսքիզները, պատճենները, հեղինակային գրառումները, նաեւ սկզբնաղբյուրային արժեք համարվող տարբեր ուղեգրողների ու ճանապարհորդների կողմից նկարագրությունները, ինչպես Գյոթեի, Վազարիի, Ջիովանի Պաոլո Լոմացցոյի, Ստենդալի եւ այլոց: Լեոնարդոյի «Խորհրդավոր ընթրիքը» ներկայացվում է ծավալուն մեկնաբանությամբ, նկարի դրամատիկ շեշտվածությամբ կերպարային եւ գունային կոմպոզիցիոն լուծման տեսանկյունից՝ չորս խմբերով առանձին, ինքնուրույն բաժիններ՝ նվիրված

Թուրքիան ստիպված է վերանայել իր դիրքորոշումը

Օբամայի ընտրությունը Մ. Նահանգների նախագահի պաշտոնում ստիպում է Թուրքիային վերանայել Հայաստանի հանդեպ իր ունեցած պահանջները: Նման կարծիք է հայտնում «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը ստորեւ ներկայացվող հոդվածում:

Թուրքիան վերջին 15 տարիներին շրջափակման է ենթարկել Հայաստանին, այն անհեռանկարային հույսով, որ կստիպի հայկական կողմի առաջնորդներին գնալ զիջումների մի քանի ճակատներում. Լեռնային Ղարաբաղի ճանաչում, Թուրքիայի տարածքային ամբողջականություն եւ Ադրբեջանի իրավասություն Ղարաբաղի նկատմամբ: Այս երեք բնագավառներում զիջումների գնալու դեպքում Թուրքիան համաձայն է վերացնել շրջափակումը եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ:

Հայաստանն անշուշտ կտրականապես մերժել է այս անընդունելի պահանջները, հակառակ շրջափակման հետեւանքով առաջացած տնտեսական դժվարություններին:

Այնուհետեւ, տեսնելով, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչող երկրների թիվն աճում է, Թուրքիան այժմ էլ փորձում է սեպ խրել Հայաստանի եւ սփյուռքի միջեւ, այն հույսով, որ կթուլացնի ցեղասպանության ճանաչման ոտղությամբ տարած այդ երկուսի միասնական ջանքերը:

Վերջին ամիսներին որոշակի գործոնների առաջացման հետեւանքով (հետընտրական խառնաշփոթ Հայաստանում, արեւմտյան երկրների եւ Ռուսաստանի ճնշումներ՝ բարելավելու հարաբերությունները Թուրքիայի հետ) Հայաստանի նորընտիր նախագահը համաձայնեց ընդունել պատմաբանների համատեղ հանձնաժողով կազմելու Թուրքիայի առաջարկը պայմանով, որ Թուրքիան վերացնի շրջափակումը եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատի Երեւանի հետ:

Ռուս-վրացական պատերազմը կարճ ժամանակով խոչընդոտեց արդյունքների տեղափոխմանը Սեւ ծովի նավահանգիստներից դեպի Հայաստան: Դա ստիպեց հայկական կառավարությանն ավելի լրջորեն մտածել սահմանի բացման խնդիրների մասին: Ավելին, Հայաստանը հետաքրքրություն ցուցաբերեց միանալու Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի նախաձեռնած կովկասյան կայունության եւ համագործակցության պլատֆորմին, որն անտղակիորեն հակազդելու էր Հայաստանին մեկուսացնելու Ադրբեջանի ջանքերին:

Թուրքիան ոգեւորությամբ ընդունեց Հայաստանի համագործակցության ժեստը եւ նախագահ Գյուլը ժամանեց Երեւան՝ դիտելու երկու երկրների ազգային թիմերի ֆուտբոլային հանդիպումը: Այցելությունը բարձրացրեց Թուրքիայի վարկանիշը, եւ նպաստեց, որ նա տեղ գտնի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում:

Շուտով, սակայն տարաձայնությունները ծայր առան: Պարզվեց, որ երկու երկրները չեն կարողանում համաձայնության գալ պատմաբանների հանձնաժողով ստեղծելու հարցում (կազմի, թեմայի եւ ժամանակի առումներով): Թուրքիան շտապում էր, որովհետեւ ցանկանում էր հանձնաժողովը կազմված տեսնել նախքան Օբամայի ընտրությունը Մ. Նահանգներում, որպեսզի կարողանար նոր կառավարությանը հետ պահել Հայոց ցեղասպանության հարցի քննարկումներից:

Հայկական կողմը առավել հանգիստ էր եւ չէր շտապում: Թուրքիան թերագնահատել էր երկու նախապայմանները կատարելու հայկական կողմի վճռականությունը:

Խնդիրն առավել բարդացավ Թուրքիայի համար, երբ անցյալ շաբաթ գերմանական «Ֆրանկֆուրտեր Ալգեմայնե ցայթունգ» թերթին տված հարցազրույցում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, համաձայնելով սփյուռքահայ առաջնորդների հետ, հայտնեց, թե նման հանձնաժողով «բոլորովին էլ անհրաժեշտ է» ստեղծել: «Մենք ցանկանում ենք դիվանագիտական հարաբերություններ հաստատել երկու երկրների միջեւ եւ սահմանները բաց տեսնել առանց նախապայմանների: Հետո մենք կարող ենք քննարկել մյուս բոլոր հարցերը», ասաց նա:

Մյուս կողմից, ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանը հայտարարեց. «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ հայ բարձրաստիճան պաշտոնյաներին վերագրված թուրքական մամուլի մեկնաբանները ներկայացված են խեղաթյուրված ձեւով: Քանիցս հայտարարել եմ եւ այժմ էլ կրկնում եմ, որ հայ բարձրաստիճան պաշտոնյաները երբեք չեն արտահայտվել եւ չեն արտահայտվելու ի նպաստ ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դադարեցմանը: Ավելին, Հայաստանը չի կարող հանդուրժել Հայոց ցեղասպանության ժխտման որեւէ փորձ կամ արտահայտություն»:

Այս բոլորը կատարվում են այս օրերին, երբ Թուրքիայի ղեկավարները խիստ անհանգստացած են ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Օբամայի տված խոստումներից, որ կճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Ներկայումս Թուրքիայի վարչապետը Օբամայի նպատակները գնահատելու գործընթացում է: Նա շփումներ է ունենում նրա մոտիկ շրջանակների եւ խորհրդատուների հետ: Եթե հաստատ համոզվի, որ Օբաման լուրջ է իր մտադրություններում, Էրդողանը երեւի անմիջապես որոշի բացել սահմանը եւ հաստատել դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի հետ: Իսկ եթե հայտնաբերի, որ Օբաման տատանվում է, նա եւ իր թիմակիցները կշարունակեն պահանջներ ներկայացնել Հայաստանին:

Այս հանգամանքներում հայկական կողմի ղեկավարները շտապելու կարիք չունեն: Նրանք կարող են սպասել, թե ինչ դիրքորոշում է որդեգրելու ԱՄՆ-ի նախագահը:

Մենք ոչինչ չունենք կորցնելու սպասելուց:

Թարգմ. Հ. Ծ.

Էլիզաբեթ Բ թագուհին ասպետի կոչում շնորհեց Շիմոն Պերեսին

Մեծ Բրիտանիայի էլիզաբեթ Բ թագուհին ասպետական կոչում է շնորհել Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին: «Ջերուսալեմ փոստ» թերթը հաղորդում է, որ հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Բուքինգեմյան պալատում: Թագուհին Պերեսին հանձնել է Սուրբ Միխայելի եւ Սուրբ Գեորգի ուխտի Մեծ խաչ: Այդ ուխտը, ըստ ավագության, վեցերորդն է զբաղեցնում պարգեւների բրիտանական համակարգում: Որպես կանոն այն շնորհվում է Մեծ Բրիտանիայի եւ Ընկերակցության երկրների հետ բարեկամական միջազգային հարաբերությունների հաստատման մեջ նշանակալի ավանդ ներդրած անձանց:

Անցյալում այդ շքանշանի ասպետներ են դարձել ԱՄՆ նախկին նախագահներ Ռոնալդ Ռեյգանը եւ Ջորջ Բուշ ավագը, «Մայքրոսոֆթ» ընկերության հիմնադիր Բիլ Գեյթսը եւ Ս2 խմբի մենեջիր Բոնոն:

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԻ

Ինֆարկիզումից հետո Ֆրանսուին մահացել է

Վաթսունամյա Ֆրանսուի Ժոսիան Նարդին ինֆարկիզումի փորձ կատարելուց հետո՝ հոկտեմբերի 19-ին Տուր վարչական կենտրոնի հիվանդանոցում մահացել է 3-րդ կարգի մարմնական այրվածքներից, հաղորդում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 8-ի համարը, լուրը քաղելով Ֆրանսորես գործակալությունից:

Նարդին մարմնի վրա սպիրտ լցնելուց հետո կրակի է տվել իրեն հոկտեմբերի 18-ին Լը Ման քաղաքի (Ֆրանսիայի արեւմուտքում) կալանավայրի առաջ՝ ի նշան բողոքի այն որոշման դեմ, որի համաձայն պետք է հայազգի 31-ամյա Հենրիկ Օրուջյանը Հայաստան արտախսվի: Քաղաքապետ Ժան-Կլոդ Բուլարը հրամայել է անմիջապես հետաքննություն անցկացնել պարզելու համար, թե ինչ դրդապատճառներով Ֆրանսուին նման ծայրահեղ քայլի է դիմել անօրինական ճանապարհով Ֆրանսիա ներգաղթած եւ զանազան հանցագործությունների պատճառով 2 տարվա ազատազրկման ենթարկված հայ երիտասարդին փրկելու համար:

Նույն օրը երեկոյան Օրուջյանին ազատել են բանտից եւ տնային կալանք սահմանել նրա նկատմամբ, առողջական վիճակի վերաբերյալ մարդու իրավունքների կազմակերպության դիմում-պահանջագրի հիման վրա: Ըստ լրատվության, Նարդին նախօրոք պայմանավորվել է հանդիպել լրագրողների հետ կալանավայրի դիմաց, բայց չի բացահայտել իր մտադրությունը:

«Սա առանց համապատասխան փաստաթղթերի երկրում աշխատելու հետ կապ չունի: Այստեղ գործ ունենք 3 մեղադրական դատավճիռներով նրան արտախսելու դատական որոշման հետ», պարզաբանել է կառավարության ներկայացուցիչ Լուկ Շաթելը:

Ֆրանսիական կառավարության որոշման համաձայն, 2008-ի ընթացքում պետք է արտախսվեն 25 հազար անօրինական ներգաղթյալներ:

Հ. Ծ.

Մարսի վրա հայտնաբերվել են հաստ սառցադաշտեր



Ուղեծրային զոնդի վրա տեղակայված ռադարը Մարսի միջին լայնություններում հայտնաբերել է մի քանի հարյուր մետր հաստության սառցադաշտեր, որոնք ծածկված են այլ պարներով: Science հանդեսում այդ մասին հոդված են զետեղել հայտնագործությունը կատարած ամերիկացի եւ իտալացի գիտնականները:

Հոդվածագիրները նշում են, որ կլորավուն սառցադաշտերը հայտնաբերվել էին դեռ 1970-ական թվականներին, բայց դրանց բնույթը երկար ժամանակ մնացել էր անհայտ: Ի վերջո NASA-ի զոնդի վրա տեղակայված ռադարը հաստատել էր, որ դրանք իրոք հաստ սառցադաշտեր են:

Գիտնականների կարծիքով, դրանք գոյացել են Մարսի նախորդ սառցադաշտային ժամանակաշրջանում, երբ սառցակալումը տեղի է ունեցել մոլորակի միջին լայնություններում:

Գրեթե մեկ կիլոմետր հաստություն ունեցող սառցադաշտերը մեծությամբ համեմատել են խոշոր քաղաքների հետ եւ գտնվում են Մարսի հյուսիսային եւ հարավային կիսագնդերի միջին լայնություններում: Օսլոյի համալսարանի (Տեխասի նահանգ) պրոֆեսոր Ջոն Հոլտի կարծիքով, այդ սառցադաշտերը կարող են ջրի աղբյուր դառնալ Մարսի ապագա հետազոտողների համար:

Շվեդիան վավերացրեց Լիսաբոնի պայմանագիրը

Շվեդիայի խորհրդարանը վավերացրել է Լիսաբոնի պայմանագիրը, որը Եվրոսահմանադրության նոր՝ կարճ տարբերակն է: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ փաստաթղթի օգտին քվեարկել են 243, դեմ՝ 39 պատգամավորներ: 13 պատգամավոր ձեռնպահ է մնացել, իսկ 54-ը չի մասնակցել նիստին:

Այսպիսով, ԵՄ նոր սահմանադրության նախագիծը հաստատել են միության անդամ 27 երկրներից 24-ը: Պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է առանց բացառության ԵՄ բոլոր անդամների համաձայնությունը:

Այս տարվա հունիսին Իռլանդիան հրաժարվեց վավերացնել Լիսաբոնի պայմանագիրը: Պայմանագրին դեռ չեն միացել Չեխիան եւ Լեհաստանը: Ներկայումս Չեխիայում սահմանադրական դատարանը քննում է այն հարցը, թե տվյալ փաստաթուղթը չի՞ հակասում արդյոք երկրի սահմանադրությանը: Լեհաստանում խորհրդարանը վավերացրել է փաստաթուղթը, սակայն նախագահ Լեխ Կաչինսկին դեռ չի ստորագրել:

Լիսաբոնի պայմանագիրը պետք է փոխարինի Եվրոսահմանադրությանը, որն անցյալում մերժել էին Ֆրանսիայի եւ Հոլանդիայի քաղաքացիները: Լիսաբոնի պայմանագրով առաջարկվում է մտցնել Եվրոմիության նախագահի եւ ԵՄ արտաքին գործերի միասնական ներկայացուցչի պաշտոններ:

ԱՄՆ գլխավոր դատախազն ուշաթափվեց ելույթի պահին

ԱՄՆ գլխավոր դատախազ եւ միաժամանակ արդարադատության նախարար Մայքլ Մուկասեյը երեկ ուշաթափվել է Վաշինգտոնի «Մարիոթ Վարդման» հյուրանոցում ելույթի պահին: Ականատեսների խոսքերի համաձայն, 67-ամյա Մուկասեյը գիտակից վիճակում է եղել, երբ նրան հասցրել են Ջորջ Վաշինգտոն համալսարանի կլինիկա:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ հակաահաբեկչական պատերազմում Ջորջ Բուշի կառավարության հաջողություններին վերաբերող ելույթը սկսելուց 15-20 րոպե անց գլխավոր դատախազի լեզուն սկսել է փաթ ընկնել, նա ցնցվել է եւ կորցրել գիտակցությունը:

Վարչակազմի ներկայացուցիչները հայտնում են, որ գլխավոր դատախազը ներկայումս կայուն եւ գիտակից վիճակում է, սանում է անհրաժեշտ բուժօգնություն:

Մայքլ Մուկասեյն ունի բելառուսական արմատներ: Նա ծնվել է 1941-ին Նյու Յորքում, միջնակարգ կրթությունը ստացել է հրեական ուղղափառ դպրոցում: Կոլումբիա համալսարանը եւ Ելի համալսարանի իրավունքի դպրոցը ավարտելուց հետո 1967-ին սկսել է Նյու Յորքում զբաղվել փաստաբանական գործունեությամբ: Ավելի ուշ Նյու Յորքի այն ժամանակվա դատախազ Ռուդոլֆ Ջուլիանին նրան դարձրել է իր օգնականը:

Մուկասեյը դաշնային դատավոր է նշանակվել 1987-ին նախագահ Ռոնալդ Ռեյգանի օրոք եւ այդ պաշտոնում մնացել է 20 տարի: Ջորջ Բուշը Մուկասեյին արդարադատության նախարար դարձրեց 2007-ի սեպտեմբերին. այդ պաշտոնում նա փոխարինեց հրաժարական տված գլխավոր դատախազ Ալբերտո Գոնսալեսին՝ Բուշի մտերիմ ընկերոջը:

Հայաստանի լուսանկարչական դիմանկարը՝ գերմանացու ոսպնյակով

Գերմանական destinatio հրատարակչությունը լույս է ընծայել «Հայաստան-2009» լուսանկարչական օրացույցը:

2004-ին հիմնադրված destinatio հրատարակչությունն ու ակադեմիան, որի ուղղվածությունը ճամփորդական եւ մշակութային թեմաներով հրատարակություններն են, տպագիր արտադրանքի կողքին ունի նաեւ նույնանուն էլեկտրոնային ամսագիր, իսկ 2007-ից մշակութային եւ ուսումնական ճամփորդություններ, տուրիստական այլ գործառույթներ է առաջարկում գործարարներին:

Կովկասյան փորձիկ հանրապետություն Հայաստանը իբրեւ հանգստավայր առանձնահատուկ գրավչություն ունի՝ իր հնադարյան մշակութային ավանդույթներով ու լեռնային դիտարժան բնական միջավայրով: 12 եվրո արժողությամբ օրացույցի 12 գունավոր լուսանկարներում հեղինակ Նիլս Քրիստիան էնգելը համառոտ տեքստի ուղեկցությամբ առաջնորդում է իր բացահայտած գեղեցիկ անկյունները՝ Գեղարդի վանք, Գառնիի տաճար, Խոր Վիրաբ, Խոտորվի արգելոց, Կաֆավաբերդ, Էջմիածին, Նորավանք, Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճար, Կոմիտասի արձանը Երեւանի կոնսերվատորիայի առջեւ, Մատենադարանի առջեւ տեղադրված Մաշտոցի եւ Կորյունի արձանները:

Կարելի է ընդգծել, որ լուսանկարիչը մեզ ծանոթ հասցեների գոնե մի մասը ներկայացրել է ուրիշ անկյունից՝ հեղինակային նման մատուցումը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ DIN A4 չափսի լուսանկարները ծնվել են ոչ թե զբոսաշրջիկի արագ՝ դիմահայաց, հրանցիկ դուր գալու, այլ փնտրելու ու հայտնագործելու շնորհիվ:

Ի դեպ, որ վերջերս «Մայն Ռայներ ցայթունգն» անդրադարձել էր գերմանական ճամփորդական մի խմբի Հայաստան եւ Ղարաբաղ կատարած այցի տպավորություններին: Ուսումնական ճամփորդության ընթացքում խմբին հատկապես տպավորել էին աբխարհում պեսականորեն ընդունած քրիստոնեական ամենահին եկեղեցին, խաչքարերը, դուդուկը, եկեղեցական երգեցողությունն ու մանավանդ Ամենայն հայոց կաթողիկոսի մատուցած պատարագը: Շատ հուզիչ է եղել Ծիծեռնակաբերդ այցը: Հոդվածում պատմվում էր նաեւ հայկական չքնաղ բնաբխարհի ու մարդկանց մասին:

«Գերմանիայում քչերին է հայտնի Հայաստանը, գում է թերթը եւ հավելում, հուսանք դեռ շատերը կլինեն, որ կուզենան ծանոթանալ այս հետաքրքրական երկրին»:

«Հայաստան-2009» օրացույցը նպաստելու է այդ հետաքրքրության աճին:

ԼՈՒԻԶԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Մշակութային համագործակցության նոր փուլ ԱԺ-ում

Անկախության առաջին իսկ օրվանից Հայաստանում իրականացվում են բազմաթիվ համատեղ ծրագրեր տարբեր երկրների հետ թե՛ գիտական, թե՛ կրթական եւ թե՛ մշակութային փառատոներ, շաբաթներ, համաժողովներ եւ այլն: Սակայն մինչ այժմ դրանցում իր մասնակցությունն ու աջակցությունը գրեթե չուներ Ազգային ժողովը: Երեկ առաջին անգամ ԱԺ-ի ոսկեզօծ դահլիճում կայացավ ճանաչողական բնույթի հանդիպում, որը կազմակերպել էր ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը: Հանդիպմանը հրավիրվել էին ՀՀ-ում օտարերկրյա դեսպանությունների եւ ներկայացուցչությունների կրթական, գիտական եւ մշակութային հարցերով կցորդներն ու պատասխանատուները: ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը հանդիպումը կարեւորեց որպես համագործակցության առաջին համակարգային քայլ. «Այս հանդիպումը համարենք Ազգային ժողովի եւ ձեր միջեւ փոխշահավետ եւ արդյունաբեր համագործակցության մեկնարկ՝ հանուն մեր հասարակությունների միջեւ քաղաքակրթական երկխոսության, մշակութային եւ կրթական փոխգործակցության զարգացման»: Հանձնաժողովի նախագահ Արմեն Ատոյանը նշեց, որ խորհրդարանն այսօր իր առջեւ խնդիր է դրել աջակցել այն բազմաթիվ ծրագրերին, որոնք իրականացնում են Հայաստանում գործող դեսպանությունները: Նա վստահեցրեց, որ ծրագրերի իրականացման գործում խորհրդարանը կցուցաբերի անհրաժեշտ աջակցությունը, ընդհուպ ֆինանսական, ինչը հավաստեց նաեւ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը: Հանդիպման ընթացքում ՀՀ-ում Վրաստանի Հանրապետության դեսպանատան խորհրդական Նինո Ափցիաուրելին առաջարկեց նպաստել երկու երկրների մշակութային կապերի սերտացմանն ու խորացմանը:

Առաջարկ եղավ նաեւ 2009 թ. մարտին Հայաստանում անցկացնել վրացական մշակույթի օրեր, եւ հանձնաժողովի աջակցությունն են ակնկալում: Հանձնաժողովի նախագահը սիրով ընդունեց առաջարկը ու անդրադարձավ օրեր առաջ Թբիլիսիի Ս. Նորաշեն եկեղեցու վրացականացման հերթական միջադեպին. «Այս համագործակցությունը նույնպես կարող է լինել լավ հնարավորություն հարթելու այն խնդիրները, որոնք ծագել ու ծագում են մեր միջեւ: Հայաստանում սիրում են վրացական մշակույթը եւ մենք ակնկալում ենք, որ նմանատիպ վերաբերմունք կլինի նաեւ Հայաստանի ու հայ մշակույթի հանդեպ»: Հանդիպումը շարունակվեց ջերմ ու մտերիմ զրույցներով, շամպայնի լի բաժակներով շնորհավորանքներով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«Նրա հոգին զրուցում է պոեզիայի հետ»

Գոհար Գալստյան

Երեկ Գրողների միությունում տեղի ունեցավ Գոհար Գալստյանի «Տրտհնության կարգով» բանաստեղծությունների ժողովածուն: Գոհարի գրական գործունեությունը մեկնարկել է 2000-ին, երբ հրատարակվեց «Կյանք կոչվող փորձիկ այս ակնթարթը» բանաստեղծությունների եւ արձակ ստեղծագործությունների ժողովածուն: Այնուհետեւ ընթերցողների դատին հանձնեց «Խորաններ» եւ «Խորաններից անդին» ժողովածուները, որտեղ արտացոլված էին բանաստեղծուհու ցանկությունները ու խոռվքները:

«Տրտհնության կարգով» ժողովածուում ընթերցողը կգտնի հույզեր, ապրումներ, երազանքներ, որոնք ամփոփված են 4 շարքերում: «Անտունիներ օտարման» շարքում անդրադարձել եմ Երեւանին բնորոշ բազմաթիվ խնդիրների, արտավոր երեւույթների, որոնք կհետաքրքրեն լայն

հանրությանը: «Հեգնիր գուշակներին» շարքն ավելի խաղարկային է եւ արծարծում է տարաբնույթ թեմաներ», ասաց Գոհար Գալստյանը: Դերասանուհի Հասմիկ-Տեր Կարապետյանն էլ խոստովանում է, թե առանձնահատուկ հուզվում է, երբ ասմունքում է Գոհարի բանաստեղծությունները: Գոհարի տաղանդը բացահայտել է 2003-ին «Արմոնո» թատերական միջազգային փառատոնի ժամանակ, երբ բանաստեղծուհին գրեց «Վերջին արարը» պիեսը»: Ստեղծագործությունը նվիրված էր դերասանուհի Մարի Նվարդին եւ արժանացավ բարձր գնահատականի:

«Ռոմանտիկայի, մարդության, սլացքի, ազնվության մասին են նրա ստեղծագործությունները: Նրա հոգին զրուցում է պոեզիայի հետ, եւ այդ իմաստով շատ եմ կարեւորում նրա դերը հայ ժամանակակից գրականության ասպարեզում», եզրափակեց Հասմիկ Տեր-Կարապետյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նոր գիրք Մոնրեալի հայկական համայնքի մասին



Գերմանիայում հրատարակվել է «Հավաքական հիշողություն եւ տուն՝ սփյուռքում: Մոնրեալի հայկական համայնքը» (Collective Memory and Home in the Diaspora) խորագրով Լալե Մանճիկյանի գիրքը, որտեղ քննության է առնվում սփյուռքահայ խոշոր կենտրոններից մեկի՝ Մոնրեալի հայ համայնքի դերակատարությունը երկրի եւ այլ գաղութների գործունեություններում:

Հիմնվելով գլխավորապես երկու համայնքային կառույցներում (Սուրբ Հակոբի եւ ՀԲԸՄ) կատարված ուսումնասիրությունների վրա, գիրքը բացատրում է, թե ինչու եւ ինչպես են այդ կառույցները օտար ափերում մարմնավորում եւ պահպանում իրենց հեռավոր հայրենիքը հիշեցնող մասնիկներ, թե ինչպես իրենց բազմաբնույթ ինքնություններով եւ գործունեությամբ այդ կառույցների շուրջը համախմբված մարդիկ հավաքական հիշողություն են ներկայացնում եւ կարողանում են դիմագրավել օտար ափերի ներկայացրած մարտահրավերներն ու բարդությունները:

Այս մասին է տեղեկացնում «Արագած» ազգային մշակութային եւ հասարակական շաբաթաթերթը՝ նշելով, որ հատորը կարող է օգտակար լինել բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են հայ գաղթաբխարհի սոցիալ-հայկական կյանքի ուսումնասիրություններով:

Հ. Ծ.

«Խորհրդավոր ընթրիք. հայկական ավանդույթից մինչեւ Լեոնարդո»

Ընթերցողի դատին է հանձնված Վարդան Դեւրիկյանի «Խորհրդավոր ընթրիք. հայկական ավանդույթից մինչեւ Լեոնարդո» գիրքը, որը «Տերունական պատկերաշարի 12 պատկերներ» ժողովածուի երկրորդ մասն է՝ նվիրված Խորհրդավոր ընթրիքի թեմայով պատկերագրությանը: Գրքում հեղինակն անդրադառնում է վաղ շրջանի ընդհանուր քրիստոնեական եւ հայկական պատկերներից մինչեւ Վերածննդի դարաշրջանի վարպետների գործերին՝ ներկայացնելով թեմայի պատկերագրությունը, այլաբանական իմաստները, գրական սկզբնաղբյուրներն ու մեկնաբանությունները:

Շարքը ստեղծելու նպատակը համաբխարհային մշակույթը ընկալելի դարձնելն է ոչ միայն հայերին այլեւ ամբողջ աբխարհի ժողովուրդներին: Այդ պատճառով միեւնույն պատկերը ներկայացված է հայկական եւ արեւմտաեվրոպական արվեստի շրջանակներում:

Դեւրիկյանն ընտրել է 12 պատկեր՝ սկզբունքով, թե որքանով են մոտ հայ ժողովրդի կենսակերպին: Այդ պատկերները ներկայացնում են նաեւ մեր ժողովրդական ու եկեղեցական տոները: Օրինակ՝ Վարդավառը կամ Հոգեգալուստը, որ միաժամանակ եկեղեցական եւ ժողովրդական սիրված տոներ են, որոնք հեղինակը ներկայացրել է եկեղեցական ու ազգագրական տեսանկյունից:

Գրքում ներկայացված է նաեւ, թե միեւնույն ծիսակարգն ինչպես են տոնում մշակութային եւ կրոնական տարբեր ժառանգություն կրողները՝ մատնանշելով համաբխարհային ու հայկական մշակույթների միջեւ բազմաթիվ հակադրություններն ու ծայրահեղությունները:

Հեղինակը նշում է, որ խորհրդավոր ընթրիքն իր գեղարվեստական հանրագումարին, բարձրակետին հասավ Լեոնարդո դա Վինչիի հայտնի ստեղծագործությունում: Գրքում մանրամասն պատմում է որմնանկարի ստեղծման պատմությունը: Անդրադառնալով Հիսուսի երեք աշակերտների՝ Պետրոսի, Հովհաննեսի ու Հուդայի կերպարներին, հեղինակը մեջբերումներ է կատարում Գլածորի, Կ. Պոլսի, Սուրխաթի Ավետարաններից:

Դա Վինչիի փիլիսոփայությանն ու ծածկագրին Դեւրիկյանն անդրադարձել է անուղղակիորեն: Սուրբ Հովհաննեսի կին լինելու մասին գրքում որեւէ սուր արտահայտություն չկա, սակայն այլաբանական ավանդույթների ու առասպելների հիման վրա ներկայացրել է, թե ինչու է սուրբ Հովհաննեսն ավանդաբար պատկերվում կանացի տեսքով:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
«ԹԵՔԵՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ»-Ը

Նոյեմբերի 24, 29
Դեկտեմբերի 1

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է

Պերճ Զեյթունցյանի

«ՄԻ ՆԱՅԻՐ ՀԱՅԵԼՈՒՆ»

բեմադրությունը

Նվիրվում է 2000-2007 թթ.
ՀՀ վարչապետ
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
հիշատակին

Գլխավոր դերում՝ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դերերում՝
ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ, ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ, ՄԽԻԹԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՍՈՆԱ ՎԵՐԴՅԱՆ, ՍՄԲԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ԱՐՏՅՈՒՇԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ՍԱՄՎԵԼ ՕՀԱՆՅԱՆ, ԻՇԽԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ, ԷԴՎԱՐԴ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ, ՓԱՅԼԱԿ ՑՈԲԱՆՅԱՆ

Բեմադրությունը՝
Արվեստի վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր
ԱՐՏԱՇԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Ներկայացումները տեղի կունենան
Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնի շենքում
Սկիզբը՝ ժամը 19.00

Տոմսերի համար զանգահարել Թեքեյան մշակութային միություն՝
հեռ.՝ 57-02-83, 55-26-32

Հայ շախմատիստներն անպարտելի են

Կատերինա Ռոհոնյանն ամերիկացիներին փրկեց պարտությունից

Ռուսաստանի հավաքականի նկատմամբ տարած անչափ կարեւոր հաղթանակը Թուրինի օլիմպիադայի չեմպիոն հայ շախմատիստներին հնարավորություն ընձեռեց ռեալ կերպով պայքարելու ոսկե մեդալների համար: Մեր ընտրանին այդ հաղթանակի շնորհիվ 13 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: Հայ շախմատիստներին հետաքրքրող Գերմանիայի առաջին, Իսրայելի եւ Ֆրանսիայի հավաքականներն ունեն 12-ական միավոր: 8-րդ տուրում մեր ընտրանին կմրցի ֆրանսիացիների հետ, որոնք 1,5-1,5 հաշվով առավելության հասան Հնդկաստանի հավաքականի նկատմամբ: Ֆրանսիայի հավաքականն իր վարկանիշով 7-րդն է օլիմպիադայում: Հնդիկների նկատմամբ հաղթանակն աղահովեց Մախիմ Լագրավեն՝ պարտության մատնելով Պենտալա Հարիկրիշնային:

Տեղեկացնենք մյուս առավել կարեւոր մրցախաղերի արդյունքների. Գերմանիա-1-Ռումինիա՝ 2,5-1,5, Չինաստան-Ուկրաինա՝ 2-2, Իսրայել-Իսպանիա՝ 3-1, ԱՄՆ-Հունգարիա՝ 2,5-1,5, Անգլիա-Ադրբեջան՝ 2-2, Հունաստան-Բելառուս՝ 2-2, Վիետնամ-Հոլանդիա՝ 2,5-1,5, Բուլղարիա-Ավստրալիա՝ 4-0: 11-ական միավորով 5-9-րդ տեղերում են Ռուսաստանի, Ուկրաինայի, Չինաստանի, Վիետնամի եւ ԱՄՆ-ի հավաքականները:

Դրեզդենում հայ շախմատիստներն իրոք որ ուժեղագույնն են: Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ անցկացրած 28 պարտիաներում նրանք ոչ մի պարտություն չեն կրել՝ տոնելով 12 հաղթանակ, 16-ն ավարտելով ոչ-ոքի: Սա սենսացիոն երեւույթ է օլիմպիադաների պատմության մեջ: Սա նաեւ հավաստում է, որ մեր թիմի անդամները հավասարաչափ ուժեղ են բոլոր խաղատախտակների վրա: Ինչպես եւ նախորդ օլիմպիադայում, այս անգամ էլ պարզապես գերազանց է խաղում Գաբրիել Սարգսյանը, որը իսկական մարտիկ է եւ պայքարում է մինչեւ վերջ: Նա թիմում լավագույն արդյունքի է հասել՝ 7 հնարավորից վաստակելով 6 միավոր (5 հաղթանակ, 2 ոչ-ոքի): Վստահ են հանդես գալիս նաեւ Տիգրան Պետրոսյանն ու Վլադիմիր Հակոբյանը՝ 5-ական միավոր 7 հնարավորից: Լեւոն Արոնյանի խնդիրն իհարկե ավելի բարդ է, քանի որ առաջին խաղատախտակի վրա նրան հարկ է լինում մրցել հիմնականում էլիտար գրոսմայստերների հետ: Նա 6 հնարավորից ունի 3,5 միավոր: Լեւոնը տոնել է մեկ հաղթանակ, 5 պարտիա ավարտել ոչ-ոքի: Մեր պահեստային խաղացող Արտաշես Մինասյանն էլ, որ ցանկացած պահի պատրաստ է փոխարինել խաղընկերներից որեւէ մեկին, անցկացրած մեկ պարտիան հաղթանակով է ավարտել:

Օլիմպիադայի ավարտին մնացել է չորս տուր: Հուսով ենք, որ հայ շախմատիստները նույնպիսի վստահ ելույթներով կշարունակեն պայքարը եւ ձեռից բաց չեն թողնի 2-րդ անգամ անընդմեջ օլիմպիական չեմպիոն հռչակվելու գերազանց հնարավորությունը:

Առայժմ այնքան էլ վստահ հանդես չեն գալիս մեր աղջիկները, որոնք 7 մրցախաղերից 5-ում հաղթել են, 2-ում պարտվել ու ընթանում են 13-րդ տեղում: Մինչդեռ մեր թիմն իր վարկանիշով 6-րդն է: Որքան էլ որ անսպասելի է, իր հնարավորություններից ցածր է հանդես գալիս Էլինա Դանիելյանը՝ 6 հնարավորից վաստակելով ընդամենը 2,5 միավոր: Նա անցկացրած վերջին երեք պարտիաներում պարտվել էր, ուստի ավստրիացիների հետ խաղում մարզիչները նպատակահարմար գտան փոխարինել Էլինային: Առավել հաջող է խաղում Լիլիթ Մկրտչյանը, որը 7 հնարավորից 4,5 միավոր է վաստակել: 2-րդ ցուցանիշն ունի Լիլիթ Գալոյանը (6-ից 4 միավոր): Նելլի Աղինյանն ունի 3 միավոր (5-ից), իսկ Սիրանուշ Անդրեասյանը 4 պարտիաներում վաստակել է 2,5 միավոր: Նա մեր թիմում միակն է, որ դեռ չի պարտվել:

Կանանց մրցաշարի առաջատարը 13 միավորով Չինաստանի հավաքականն է: 7-րդ տուրում չին շախմատիստուհիներն անդրանիկ միավորը կորցրին՝ ոչ-ոքի խաղալով ԱՄՆ-ի ընտրանու հետ: Հետաքրքրական է, որ ամերիկուհիներին պարտությունից փրկեց թիմի կազմում հանդես եկող Կատերինա Ռոհոնյանը, որը հաղթեց Ժոնգի Թանին: Ի դեմ, դա միակ հաղթանակն էր ամերիկացիների կազմում: Ռոհոնյանը խաղում է չորրորդ խաղատախտակի վրա եւ բավական վստահ է հանդես գալիս՝ 6 հնարավորից վաստակելով 4 միավոր: Թիմի կազմում է նաեւ հայազգի մեկ այլ շախմատիստուհի՝ Տաթեւ Աբրահամյանը, որը մասնակցել է ընդամենը 3 մրցախաղի ու իր հաշվին գրանցել 1 միավոր: ԱՄՆ-ի տղամարդկանց հավաքականում էլ հանդես է գալիս գրոսմայստեր Վարուժան Հակոբյանը: Նա 4 հնարավորից իր թիմին 3 միավոր է պարգեւել: Վարուժանը խաղում է 4-րդ խաղատախտակի վրա, իսկ թիմի առաջատարը Գատա Կամսկին է: Իսկ ահա Սերգեյ Մովսիսյանը գլխավորում է Սլովակիայի հավաքականը: Նա թիմի առաջատարին վայել խաղ է ցուցադրում՝ 5 հնարավորից վաստակելով 4 միավոր:

ՖԻՖԱ-ի մրցանակի 23 հավակնորդները

ՖԻՖԱ-ն հրապարակել է 2008-ի աշխարհի լավագույն ֆուտբոլիստի տիտղոսի 23 հավակնորդների ցանկը: Լավագույն ֆուտբոլիստը կորոշվի ազգային հավաքականների գլխավոր մարզիչների ու ավագների հարցման արդյունքում: Երեք լավագույնները հայտնի կդառնան դեկտեմբերին, իսկ աշխարհի լավագույն ֆուտբոլիստի պարգեւատրման արարողությունը տեղի կունենա հունվարի 12-ին Ցյուրիխի օպերային թատրոնում:

Մասնագետների կարծիքով, աշխարհի լավագույն ֆուտբոլիստի կոչման գլխավոր հավակնորդներն են Պորտուգալիայի հավաքականի եւ «Մանչեսթր Յունայթեդի» կիսապաշտպան Քրիստիանու Ռոնալդոն եւ Արգենտինայի հավաքականի ու «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին: Ռոնալդոն դարձել է Եվրոպայի լավագույն ռմբարկու, Անգլիայի չեմպիոն ու չեմպիոնների գավաթակիր: Մեսին Արգենտինայի օլիմպիական հավաքականի կազմում Պեկինում օլիմպիադայի չեմպիոն է դարձել: Հիշեցնենք, որ անցած տարի Ռոնալդոն հարցման արդյունքներով ճանաչվել էր 3-րդը, իսկ Մեսին զբաղեցրել էր 2-րդ հորիզոնականը: Իսկ մրցանակին արժանացել էր Բրազիլիայի հավաքականի եւ իտալական «Միլանի» հարձակվող Կական:

23 հավակնորդների թվում են Իսպանիայի հավաքականի 6 ֆուտբոլիստներ՝ Իկեր Կասիլյասը, Սեսկ Ֆաբրեգասը, Անդրես Ինյեստան, Ֆեռնանդո Տորեսը, Դավիթ Վիլյան եւ Խավի Էռնանդեսը: Ռուսաստանը ներկայացնում է միայն Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» հարձակվող Անդրեյ Արշավինը: Իտալիայից հավակնորդների ցանկում ընդգրկված է միայն Թուրինի «Յուվենտուսի» դարպասապահ Ջանլուիջի Բուֆոնը: Արգենտինացի ֆուտբոլիստներից մրցանակին հավակնում են Սերխիո Ագուերոն եւ Լիոնել Մեսին: Գերմանիան ներկայացնում է Միխայիլ Բալակը: Անգլիացիներից ցուցակում տեղ են գրաղեցրել Սթիվեն Ջերարդը, Ֆրենկ Լեմփարդը եւ Ջոն Թերին: Ռոնալդոից բացի Պորտուգալիայի հավաքականը ներկայացված է Դեկոտով, իսկ բրազիլացիներից միայն Կական է հավակնում մրցանակին:

«Սեւ մայրցամաքից» հավակնորդների ցանկում են էմանուել Ադեբայորը (Տոգո), Դիդյե Դրոգբան (Կոտ դ'Իվուար) եւ Սամուել Էտո'Օ-ն (Կամերուն): Նրանց ընկերակցում են նաեւ Էվեդ Զլատան Իբրահիմովիչը, ֆրանսիացի Ֆրանկ Ռիբերին եւ հոլանդացի Ռուդ վան Նիստելռոյը:

Աշխարհի լավագույն ֆուտբոլիստուհու տիտղոսի հավակնորդների ցանկն այսպիսին է. Նադին Անգերեր, Բիրգիտ Պրինց (երկուսն էլ՝ Գերմանիա), Շենոն Բոֆս, Խոուդ Սոլո (երկուսն էլ՝ ԱՄՆ), Քրիստիան, Դանիելա, Մարթա (բոլորն էլ՝ Բրազիլիա), Քրիստինա Սինկլեր (Կանադա), Կելի Սմիթ (Անգլիա), Ինգվիլդ Ստենսլանդ (Նորվեգիա):

Շտուրմին 2,5 մլն եվրո է առաջարկվել

Գերմանացի պրոֆեսիոնալ բոնցֆամարտիկ Ֆելիքս Շտուրմը, որ կրում է միջին քաշում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը, 3 մլն եվրո էր պահանջել Արթուր Աբրահամի հետ մենամարտելու համար: Եվ ահա Արթուրի շահերը պաշտպանող Sauerland Event պրոմոութերական ընկերությունը պաշտոնական նամակով դիմել է Շտուրմի ներկայացուցիչներին՝ առաջարկելով մենամարտի համար 2,5 մլն եվրո պարգեւավճար: Այդ առնչությամբ Արթուր Աբրահամը հետեւյալն է նշել. «Մենք պաշտոնապես դիմել ենք Շտուրմի ներկայացուցիչներին՝ ամենայն լրջությամբ առաջարկելով նրան մենամարտել: Առայժմ հանգստանում եմ, իսկ դեկտեմբերից կվերսկսեմ մարզումներս եւ կնախապատրաստվեմ հաջորդ մենամարտին: Հուսով եմ, որ Շտուրմը համարձակություն կունենա եւ ռինգ դուրս կգա»:

Հայ ծանրորդը ՌԴ չեմպիոն

Նովոսիբիրսկում բնակվող Արսեն Թամրազյանը հաջող ելույթ ունեցավ Պենզայում անցկացված ծանրամարտի առանձին վարժությունների Ռուսաստանի առաջնության եւ գավաթի մրցաշարում: Մինչեւ 56 կգ քաշային կարգում Թամրազյանը հրում վարժության 139 կգ արդյունքով հռչակվեց ՌԴ չեմպիոն: Երկամարտում նա ցույց տվեց 247 կգ արդյունք, որը եւ լավագույն ցուցանիշն էր եւ հնարավորություն տվեց հայ ծանրորդին դառնալու նաեւ ՌԴ գավաթակիր: Իսկ պոկում վարժությունում Թամրազյանի արդյունքը (108 կգ) երկրորդն էր ու 2 կգ-ով զիջում էր չեմպիոն հռչակված Միխայիլ Շեւչենկոյի ցուցանիշին:

Զագրեբը հյուրընկալել է ձյուդոյիստներին

Երեկ ձյուդոյի Հայաստանի երիտասարդական հավաքականը մեկնեց Զագրեբ, որտեղ կմասնակցի Եվրոպայի երիտասարդական առաջնությանը: Մեր թիմի կազմում տասամի կմտնեն 5 ձյուդոյիստներ: Կանանց մրցավեճին կմասնակցի Անուշ Հակոբյանը, որն այս անգամ հանդես կգա ավելի ծանր քաշային կարգում (57 կգ):

Տղամարդկանց մրցաշարում Հայաստանը կներկայացնեն Արթուր Սրապյանը (60 կգ), Համբարձում Տոնոյանը (66 կգ), Ռոբերտ Վարդանյանը (73 կգ) եւ Հակոբ Առաքելյանը (90 կգ): Հավաքականի մարզիչն է Կարեն Սիմոնյանը: Մրցումների է մեկնել նաեւ ձյուդոյի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Ալեքսան Ավետիսյանը, որը կսպասարկի գոտեմարտերը:

Մրցաշարն անցկացվելու է նոր կանոններով, որը կիրառվել է Բանգկոկում տեղի ունեցած աշխարհի երիտասարդական առաջնությունում: Ըստ այդ կարգի, բրոնզե մեդալների համար կարող են պայքարել միայն այն ձյուդոյիստները, որոնք նվազագույնը հասել են մինչեւ քառորդ եզրափակիչ:

Հայաստանից երեք ծանրորդ

Նոյեմբերի 24-28-ը Հունաստանի Կոմոտինի քաղաքում կանցկացվեն համաշխարհային ուսանողական խաղեր, որի ծանրամարտի մրցումներին Հայաստանը ներկայացված կլինի 3 մարզիկով: Տղամարդկանց մրցաշարում հանդես կգա մինչեւ 69 կգ քաշային Առաքել Միրզոյանը: Կանանց մրցավեճին կմասնակցեն Եվրոպայի չեմպիոնուհիներ Նազիկ Ավդալյանը (69 կգ) եւ Հռիփսիմե Խուրշուդյանը (75 կգ):

Մարգարիտոն հրաժարվեց Մոզլիի հետ մենամարտից

Կիսամիջին քաշում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Անտոնիո Մարգարիտոն հրաժարվել է հունվարի 24-ին մենամարտել քաշային երեք կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Շեյն Մոզլիի հետ: Մարգարիտոյի մենեջերներն այլ մրցակիցներ են փնտրում:

Երկու բոնցֆամարտիկների պրոմոութերները ժամանակին պայմանավորվել էին հավասարապես բաժանել մենամարտի մրցանակային ընդհանուր հիմնադրամը: Շեյն Մոզլին էլ համաձայնվել էր այդ պայմաններին, HBO հեռուստաալիքն էլ համաձայն էր վճարել նշված գումարը մենամարտի հեռարձակման համար: Սակայն վերջին պահին Մարգարիտոն չհամաձայնեց իրեն հասանելիք 2 մլն դոլարին եւ հրաժարվեց մենամարտից:

Այս տարվա ամռանը Մարգարիտոն հաղթել էր Միգել Կոտոյին: Նախատեսվում է հաջորդ տարի այս բոնցֆամարտիկների միջեւ ռեւանշ-մենամարտ անցկացնել: Ըստ Մարգարիտոյի պրոմոութեր Թոդ Դյուբեֆի, այս հանգամանքը վճռորոշ դեր է խաղացել Մոզլիի հետ մենամարտից հրաժարվելու համար: Դյուբեֆը գտնում է, որ Մոզլին մի քանի տարի առաջ էր անվանի բոնցֆամարտիկ համարվում, իսկ ներկայումս այնքան էլ հեղինակավոր չէ, որպեսզի պարգեւավճարը նրա հետ հավասարաչափ բաշխվի:

Մոզլիի ներկայացուցիչները դժգոհ են Մարգարիտոյի որոշումից. «Մարգարիտոն շատ էր խոսում Մոզլիի հետ մենամարտելու իր ցանկության մասին: Բայց երբ վերջինս համաձայնվեց, նա հանկարծ հրաժարվեց մենամարտից»: Այժմ Մոզլիի ներկայացուցիչները փորձում են մենամարտ կազմակերպել կիսամիջին քաշում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Անդրե Բերտոյի հետ:

«ՖԼՈՐԵՍ» աճուրդի տուն ՍՊԸ-ն «Ադամանդ» ԵԱՀ բորսայի հարթակում իրականացնում է «Հայէկոնոմբանկի» ներկայացրած գույքի աճուրդային վաճառք՝

1. Տարածք, ընդհ. մակերեսը՝ 124,5 քմ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Կոմիտասի պող. 44 շենք, թիվ 39/1:

Մեկնարկային գինը՝ 70.000.000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական եւ հոլանդական եղանակներով 22.12.2008 թ.-ից մինչեւ 30.03.2008 թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 13.00, ք. Երեւան, Ազատանգեղոսի 6/1 հասցեում: Տեղեկությունների համար դիմել՝ հեռ. 56-52-28:

Հայտարարություն

Նոյեմբերի 27-ին, ժամը 11:00-ին ՀՀ քննչական կոմիտեի նախաքննության նախարարությունը, «Միկեին» ՍՊԸ, Արաբկիրի քաղաքապետարանը կազմակերպում են հասարակական լսումներ՝ ք. Երեւան Ազատության 27 հասցեում նախատեսվող էներգակենտրոնի եւ բազմաբնակարան շենքի շինարարության եւ շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք. Երեւան, Կոմիտաս 29 հասցեում:

Հայտարարություն

Դեկտեմբերի 3-ին, ժամը 11:00-ին ՀՀ քննչական կոմիտեի նախաքննության նախարարությունը, «Թարգուշ Ազաս» ՍՊԸ, Գեղարքունիքի մարզպետարանը կազմակերպում են հասարակական լսումներ Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքին հարող «Սեւան» ԱՊ տարածքում նախատեսվող «Թարգուշ Ազաս» ՍՊԸ-ի հանգստի գոտու շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք. Երեւան, Կոմիտաս 29 հասցեում:

Օրյա հետքերով

Բյուջեն եւ մարզերը

Մարզերի խնդիրներն ինչպե՞ս են արտահայտվում պետական բյուջեում

1-ին էջից

«ՀՀ կառավարության գործող ծրագրում սահմանված գերակայությունները բխում են երկրի նախագահի նախընտրական ծրագրային հիմնադրույթներից, քաղաքացիների ընթացքում տրված խոստումներից եւ նրա գործունեության համաձայն են:

Այդ գերակա ուղղություններից մեկը՝ տարածքային հավասարակշիռ զարգացումը, չափազանց կարեւոր է ՀՀ տարածքային կառավարման նախարարության համար եւ նախարարության հիմնական կանոնադրական գործառույթներից ու խնդիրներից է:

Տարածքների հավասարակշիռ զարգացվածությունը մեր երկրի համար առավել էական է այն առումով, որ մենք արդեն իսկ բնակչության տեղաբաշխվածության անհամաչափություն ունենք: Երկրի ազգաբնակչության շուրջ երրորդ մասը կենտրոնացած է մայրաքաղաքում:

Վերցնենք ցանկացած ցուցանիշ՝ մշակույթի, մասնավոր ունակությունների, արդյունաբերության, շինարարության, ներդրումային ռեսուրսների կամ այլ ոլորտի ուղղությամբ, եւ դրանք միաժամանակ կվկայեն, որ եթե չունենք քաղաք որպես, ապա մոտ ենք վտանգավոր այդ սահմանին: Այսինքն՝ Երեւանը բեռնաթափելու խնդիրն ակնհայտ է:

Մենք պետք է կարողանանք առանց այն էլ սահմանափակ տարածքներով մեր հանրապետության բոլոր հատվածներում մարդկանց համար բարենպաստ միջավայր, նորմալ կենսագործունեությամբ ապրելու պայմաններ ստեղծել: Ավելի պարզ խոսքով՝ մենք պետք է ունենանք բարեկեցիկ միջավայրով շեն գյուղեր, շեն համայնքներ, որտեղ հնարավոր է բավարար եկամտային աղբյուր ստեղծել:

Համաչափ զարգացմանն ուղղված բազմաթիվ քայլեր են արվում: Կառավարության ծրագրային դրույթներից մեկը Երեւանի բեռնաթափումն է: Սա ենթադրում է մայրաքաղաքից որոշակի ինստիտուցիոնալ ռեսուրսներ՝ ֆինանսական, արդյունաբերական, ինտելեկտուալ, տեղափոխել այլ քաղաքներ: Այսինքն՝ վարչական, ադմինիստրատիվ մի շարք հիմնարկների, գիտական, ուսումնական կենտրոնների տեղափոխում դեպի դուրս, ինչը հնարավորություն կտա նաեւ այդ քաղաքներում որոշակի ակտիվություն ապահովել:

Մյուս կողմից կառավարությունը հայտարարել է նաեւ թիրախային, նպատակային ծրագրերի իրականացման քաղաքականություն: Օրինակ՝ ՀՀ կառավարության առանձին որոշմամբ Ջեռուկը, Վանաձորը, Գյումրին, Դիլիջանը, Գորիսը, Տաթեւը ճանաչվել են որպես քաղաքաշինության հատուկ զարգացման տարածքներ, որ նախատեսված է զարգացման խոշոր ծրագրեր իրականացնել:

Ինչո՞ւ է կարեւորվում այդ քաղաքների կամ ընդհանրապես առանձին համայնքների նպատակային զարգացման գաղափարը: Որովհետեւ, բացի այն, որ դրանց զարգացումն ինքնին կապահովի մեր երկրի առաջընթացը, նաեւ առաջանցիկ տեմպերով զարգացող յուրաքանչյուր քաղաք՝ սանձնելով լոկոմոտիվի դեր, փնջային զարգացում կապահովի՝ իր հետեւից տանելով մերձակա բնակավայրերը», ասում է Վաչե Տերտերյանը:

Տարածքային համաչափ զարգացման նախանշվող նպատակին հասնելու ճանապարհներից մեկն էլ ՀՀ կառավարության արտագնա նիստերի կազմակերպումն է:

Արդեն արտագնա նիստեր են տեղի ունեցել Շիրակի եւ Վայոց ձորի մարզերում: Դեկտեմբերին երրորդը կանցկացվի Արագածոտնի մարզում:

Արտագնա նիստերի ընթացքում կենսական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարական ծրագիր եւ հայեցակարգեր են ընդունվում: 2008 թ. սեպտեմբերի 18 ին Վայոց ձորում կայացած արտագնա նիստում, օրինակ, ՀՀ կառավարության հավանությանն արժանացան ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակված եւ ներկայացված «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում տեղական հարկերի հայեցակարգերը:

Այս երեք նախագծերն էլ ուղղակիորեն միտված են տարածքների համաչափ զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն:

ՀՀ կառավարության արտագնա նիստերի օրակարգը կազմելիս հաշվի են առնվում նաեւ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների առջեւ դրված կանխատեսելի եւ հրատապ լուծում պահանջող խնդիրները: Մինչ արտագնա նիստերի կազմակերպումը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարը, տարբեր գերատեսչությունների ղեկավարների ուղեկցությամբ, մի քանի անգամ այցելում է տվյալ մարզը: Նախապատրաստական այդ այցերի ընթացքում հնարավորություն է ստեղծվում տեղում ծանոթանալու մարզի հիմնախնդիրներին, նախանշելու դրանց լուծման ճանապարհները:

Մարզերում ՀՀ կառավարության արտագնա նիստեր կանցկացվեն պարբերաբար՝ յուրաքանչյուր եռամսյակ:

▼▼▼

Տարածքների համաչափ զարգացման աղբիւրները ուղղված այս քայլերից զատ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը որպես հիմնական գործիք է նշում պետական բյուջեի ծախսային քաղաքականությունը:

«Ֆինանսական մեր ռեսուրսները պիտի այնպես ծախսենք, որ անհամաչափության մեղմում արձանագրենք: Այն մարզերին, որտեղ ունենք ավելի քիչ ցուցանիշներ՝ կուղղվեն ավելի շատ ճիգեր, ռեսուրսներ, ներդրումներ, որպեսզի նրանք հասնեն ավելի բարենպաստ վիճակում գտնվող մարզերին:

Պետք է արձանագրենք, որ նախորդ տարիներին մենք հիմնական շեշտը դրել ենք ոլորտային մակրոցուցանիշների ապահովմանը՝ մեկ շնչին ընկնող ծախսեր առողջապահության ոլորտում, մեկ շնչին ընկնող շինարարություն, ՀՆԱ եւ այլն: Մենք արդեն բավականին լավ մակրոտնտեսական ցուցանիշներ ունենք, բայց ըստ մարզերի եւ կոնկրետ համայնքների տարբերությունները մեծ են: Հենց այստեղ է, որ խնդիրը սովում է: Այսինքն՝ միջինացված թիվը հնարավորություն չի տալիս ճիշտ գնահատել, թե ինչ իրավիճակ ունենք այս կամ այն մարզում կամ համայնքում:

Այս տարի բյուջետավորման քաղաքականությունը ենթադրում է մի կողմից մարզերից եկող բյուջետային հայտեր, որոնք ներկայացնում են տարածքային կառավարման մարմինները՝ այսինքն՝ մարզպետները: Նրանք, որպես հայտ, ներկայացնում են մարզում առկա իրենց տեսանկյունից կարեւոր խնդիրները եւ ակնկալում, որ բյուջեն դա կներառի: Իսկ մյուս կողմից գործադիր իշխանության մարմինները՝ նախարարությունները, քաղաքականություն են իրականացնում առողջապահության, կրթության, քաղաքաշինության, տրանսպորտի, ջրամատակարարման եւ այլ ոլորտներում որոշակի ցուցանիշներ ապահովելու նպատակով:

Այս տարի, ելնելով նշված գերակայություններից, մասնավորապես տարածքային համաչափ զարգացման կարեւորությունից, կառավարությունը բյուջետավորման մեջ փորձեց արդեն իսկ առաջնահերթ բյուջեի դիտարկումը մարզային կտրվածքով:

Դա նշանակում է, որ պիտի հսկայապես աշխատենք, թե ըստ կարեւոր ցուցանիշների այսօր ինչ դիրք ունենք մարզերում եւ ո՞ր ենք ուզում հասնել: Այսինքն, որպեսզի կարողանանք բյուջեի ոլորտային ծախսերն ըստ մարզերի ճիշտ տարաբաշխել, նախ եւ առաջ պետք է կարողանանք գնահատել, թե մեկնարկային ինչ վիճակ է այս կամ այն մարզում:

Սա էր առիթը, որ վարչապետի եւ փոխվարչապետի մոտ մի ամբողջ շարք քննարկումներ եւ խորհրդակցություններ եղան, եւ նախարարություններին հանձնարարվեց ներկայացնել թե՛ ոլորտային ցուցանիշների առկա մակարդակը մարզերում, թե՛ իրենց ոլորտը բնութագրող թիրախային ցուցանիշներ՝ ինչին պիտի ձգտենք հասնել:

Վարչապետի հանձնարարությամբ անձնագրավորվեց երկրի բոլոր հանրակրթական դպրոցների վիճակը, որի արդյունքում հայտնաբերված վթարային դպրոցներից յոթի ամրացումն ու վերանորոգումն ընդգրկվեց 2009-ի պետական բյուջեի նախագծում:

ՀՀ փոխվարչապետի մոտ գերատեսչությունների ղեկավարների եւ մարզպետների մասնակցությամբ նախ քննարկվեցին 2009-ի բյուջեի կազմման սկզբունքները: Օրինակ, որոշեցվեց մոտեցում, որ այսուհետեւ դպրոցը վերանորոգվի մեկ, կառուցվի երկու տարում: Այդ իսկ պատճառով 2009-ի համար կրթական նոր օբյեկտների վերականգնման համար միջոցներ չեն նախատեսվել: Միջոցների առյուծի բաժինն ուղղվեց տարիներ շարունակ կառուցվող կամ նորոգվող դպրոցներն ավարտին հասցնելու համար:

2009 թ. բյուջեն կազմելուց առաջ տարածքային կառավարման նախարարությունում կենտրոնացվեցին ըստ մարզերի եւ ըստ համայնքների բոլոր նախարարությունների ներկայացրած նախատեսվելիք ծախսերը:

Մեզ մոտ քննարկվեց ֆինանսական միջոցների հատկացումների տրամաբանությունը՝ ըստ մարզային համամասնությունների:

Նախարարությունների առաջարկած ծրագրերի առթիվ լսվեցին նաեւ մարզպետների առաջարկները, դիտողությունները, առարկությունները: Այնուհետեւ համատեղ քննարկման արդյունքում բոլոր ոլորտների գծով ընդունելի տարբերակ է ընտրվել:

Այս պարագայում, ինչ խոսք, ավելի տեսանելի կլինի, թե ռեսուրսներն ինչպե՞ս եւ ո՞ր ուղղություններով պետք է ծախսվեն: Եվ որ շատ կարեւոր է՝ ինչ արդյունք կարձանագրվի համամասնությունների պահպանման առումով:

Խնդիրն, այսպիսով, փոքր ինչ փոխակերպում ենք: Եթե նախկինում ըստ ոլորտների մակրոցուցանիշային թիրախներ էին որոշվում, հիմա պիտի կարողանանք հասկանալ, թե այդ ցուցանիշներն ինչ բաղադրիչներից են ձեւավորվում եւ դրանք ինչ արժեքներ ունեն մարզերում:

Հիմա հսկայական հանձնարարությունը կա, աշխատանքները տարվում են: 2009 թվականին, երբ ձեռնամուխ կլինենք 2010 թ. բյուջեի նախագծմանը, առաջնորդվելով այդ ցուցանիշներով, նախարարությունները բյուջեները կներկայացնեն արդեն համաձայն իրենց ոլորտների թիրախային նպատակների՝ հաշվի առնելով մարզերում առկա մեկնարկային անհամամասնությունները:

Պետք է շեշտեմ, որ տարածքային կառավարման նախարարությունը մարզերում իրավիճակը գնահատելու ուղղությամբ մի շարք աշխատանքներ է կատարել:

Դեռ 2003-ին Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարության դրամական օժանդակությամբ սկսված Տավուշի եւ Գեղարքունիքի մարզերի զարգացման ծրագրերը հենց այդ տրամաբանության մեջ են տեղավորվում: Այդ ծրագրերի պարտադիր պայմաններից մեկը մարզերում տիրող իրավիճակի բազմակողմանի վերլուծությունն է: Միաժամանակ այս ծրագրերը ներդաշնակեցվել են մեր երկրում գործող ՀՀ կառավարության «Կայուն զարգացման ծրագրի», ինչպես նաեւ պետական կրթական, առողջապահական, բնապահպանական եւ այլ ծրագրերի հետ:

Այս երկու մարզերում իրականացվող այս կամ այն ուղղություններով զարգացում ապահովող ծրագրերի հիման վրա ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը մշակեց «Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգ», որն արժանացավ կառավարության հավանությանը:

Ես համոզված եմ, որ սա նույնպես մարզային կտրվածքով բյուջեների կազմման, անհամաչափությունների մեղմման մի շատ արդյունավետ գործիք է հանդիսանալու:

Ի դեպ, այդ հայեցակարգը մեր նախարարության եւ մեզ օգնող կազմակերպությունների թիմն արդեն ներկայացրել է բոլոր մարզերում», ասում է ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալը:

Մարզերի զարգացման մակարդակը բնութագրող չափազանց կարեւոր մի քանի այլ վերլուծություններ են կատարվել: Առաջին անգամ մանրակրկիտ ուսումնասիրվել է եւ հանրությանը ներկայացվել մարզերի դպրոցների եւ առողջապահական հիմնարկների շենքային, նյութատեխնիկական ապահովվածության ու պահպանության վիճակը: Ստացված պատկերը մտորումների տեղիք է տալիս:

«Պարզվեց, օրինակ, որ Վայոց ձորում դպրոցների վրա մի քանի անգամ ավելի ներդրումներ են կատարվել, քան այլ մարզերում: Ինչո՞ւ, ինչ տրամաբանությամբ: Խոսքն այն մասին չէ, թե վատ է, որ այդ մարզում շատ ներդրումներ են արվել կամ այնտեղ դրա կարիքը չի եղել: Արդյունքում Վայոց ձորում այս ոլորտում դեռ ներդրման կարիք կա: Բայց պետք է հասկանանք, պետք է տրամաբանությունը գտնենք՝ ինչո՞ւ Վայոց ձորում այդքան շատ, իսկ, ասենք, Արմավիրում՝ այդքան քիչ:

Խնդիրը հիմա այն է, թե այսուհետեւ ինչ մոտեցում ենք որդեգրում: Շարունակո՞ւմ ենք նույն մարզում ինտենսիվ ներդրումներ կատարել այնքան ժամանակ, մինչեւ հասցնենք բավարար վիճակի, հետո նոր անցնենք մյուս մարզերին: Թե՞ նպատակահարմար է ընտրել այլ սցենար:

Բոլոր դեպքերում, մինչեւ քայլեր կատարելը, մինչեւ ռեսուրսները բաշխելը մենք պետք է այդ վերլուծություններն ունենանք՝ մոտեցումները ճշտելու, գնահատելու եւ որպես գործիք օգտագործելու համար: Այսինքն՝ նախ պիտի լիովին հասկանանք, թե ինչ է այդ անհամաչափություն ասածը: Թվային ցուցանիշները վկայակոչելով ասում ենք՝ ըստ այսինչ ցուցանիշի Շիրակի մարզը Սյունիքի մարզից աղքատ է: Բնակիչը, հասարակությունը, սակայն, չի ընկալում, թե այդ ինչով է հարուստ կամ աղքատ:

Խնդիրը ճիշտ, օբյեկտիվ գնահատականներ ձեւավորելն է ընդ որում՝ առաջին հերթին մեզ համար՝ որպես կառավարիչների, որպեսզի կարողանանք ճիշտ կառավարել», ասում է ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

ՀՀ կառավարության որդեգրած տարածքային համաչափ զարգացման քաղաքականության իրագործման համատեքստում ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախաձեռնությամբ ուշագրավ մեկ այլ վերլուծություն է իրականացվել:

Վերլուծության են ենթարկվել է 2009 թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցառումները (կապիտալ ներդրումները) ըստ ոլորտների եւ համայնքների: Այս ցուցանիշները համադրվել են աղքատության եւ սոցիալ տնտեսական իրավիճակի գնահատման վերաբերյալ ուսումնասիրություններում ընդունված ցուցանիշների հետ եւ քննարկվել փորձագետների հետ:

Միաժամանակ, վերլուծվել են այն համայնքների սեփական եկամուտների (մասնավորապես՝ հողի հարկի եւ գույքահարկի) հավաքագրման 2008 թ. ինն ամիսների մակարդակները, որոնցում 2009 թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է կապիտալ ներդրումներ իրականացնել:

Փաստորեն, ստացվել է այնպես, որ 2009 թ. ՀՀ պետական բյուջեով ներդրումներ նախատեսված 228 համայնքներից 32-ում, որ 2,7 մլրդ դրամի ներդրումներ են ծրագրվում, 2008 թ. ինն ամիսների ընթացքում սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը կազմել է 30%, 52 համայնքներում (4 մլրդ դրամի կապիտալ ներդրումներ)՝ այն տատանվում է 30-50%-ի սահմաններում, 74-ում՝ (12 մլրդ դրամի կապիտալ ներդրումներ)՝ 50-75%-ի սահմաններում եւ 70-ում (12 մլրդ դրամի կապիտալ ներդրումներ)՝ ապահովվել է հավաքագրման 75%-ից բարձր մակարդակ:

Այս ցուցանիշներն, ինչ խոսք, հարցերի, մտորումների եւ անհանգստությունների տեղիք են տալիս:

Որո՞նք են որոշ համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման տեւական ցածր մակարդակի իրական պատճառները: Մի՞թե պետությունը պետք է շարունակի միայնակ իր ուսերին կրել նման համայնքների զարգացման ապահովման պատասխանատվությունը՝ առանց հաշվի առնելու տեղական իշխանության, ինչու ոչ, նաեւ համայնքի բնակիչների ջանքերն ու ներդրումները:

Համենայն դեպս ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում այն համոզմունքին են, որ նման դեպքերում տարբերակված մոտեցում ցուցաբերելու ժամանակն է եւ կոնկրետ մեխանիզմներ են մշակվում:

Մարզերի զարգացմանը եւ անհամաչափությունները մեղմելուն են ուղղվում նաեւ ոչ կառավարական մի շարք ծրագրեր: 2009 թվականին 146 համայնքներում նախատեսվում է ներդրումներ իրականացնել նաեւ արտաբյուջետային միջոցների հաշվին (Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան, «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿԳ» ՊՀ, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամ):

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում մարզերի եւ համայնքների հզորացմանը միտված նոր ծրագրեր ու գործիքներ են նախանշվում ու մշակվում: Այժմ հանրության քննարկմանն է ներկայացվում «Միջհամայնքային միավորումների ձեւավորման եւ համայնքների խոշորացման հայեցակարգային մոտեցումներ» փաստաթուղթը:

ԱՆԱՀՏ ՀԱՅԹԱՅԱՆ
Տնտեսական բարեփոխումների
վերլուծական- տեղեկատվական կենտրոն

ՕՐՎԱԾԳԻՐ ՀԱՄԱՐ ՀԱՅԵՑԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝21.11.2008, գինը՝ 100 դրամ, տպագրտա է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: